

ԲԱԳԻՆ *Pakine*

ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011, ԽԹ. ՏԱՐԻ, ԹԻԻ 4



◆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ◆ ԱՐՈՒԵՍ ◆ ԻՄԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

**ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ
ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ**

**ՓՈԽ ԽՄԲԱԳԻՐ
ՄԵՊԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ**

ՈՒՐԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԱՌԻՏ ԹՐՈՒՆԱՅ (ԼԻՐԱՆԱՆ)
 ՄԱՐԳԻՍ ԿՐԵՎՈՍՏԵԱՆ (ԼԻՐԱՆԱՆ)
 ՄՈՎՍԵՆ ՀԵՐԿԵԼԵԱՆ (ԼԻՐԱՆԱՆ)
 ՇՈՒՐԿ ՏԵԱՆՊԵՏԵԱՆ (ԼԻՐԱՆԱՆ)
 ՀՐԱՆԴ ՄԱՐԱՐԵԱՆ
 (ՄԻՋԵՏԵԼ ՆԱՀԱՆԱԳԵՐ)
 ԱԷՏԻՍ ՀՆՃԵԱՆ (ՆՐԻ ԵՈՐԺ)
 ԱՐՔԱՆԻԿ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ
 (ՀԱՅԱՍՏԱՆ)
 ՅԵՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ (ԳԱՆԱՏԱ)
 ՅԵՎՈՐ ՏԵՐ ՂՈԿԱՏԵԱՆ (ԼԻՐԱՆԱՆ)
 ԶԱՐԱՐ ԲԵՇԵՐԵԱՆ (ԼԻՐԱՆԱՆ)

ԷԶԱԴՐՈՒՄ՝ ԱՆԻ ՓԷԼՐԻՎԱՆԵԱՆ-ՍԱՐԳԻՍԵԱՆ

**ՀԱՅԷՒ
ՊՈՒՐԳ ՀԱՅՈՒՏ
ՇԱԽՉՈՅԵԱՆ ԿԵԴՐՈՒՆ
Բ. յԱՐԿ
E-mail:
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961-1-241072**

**ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ՝
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
«ՎԱՀԷ ՄԷԹԵԱՆ»
ՏՄԱՐԱՆԻ**

**ՅՐՈՒՈՒՄԻ ԿԵԴՐՈՒՄ՝
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱՏԱՐԱՐԾ,
ՇԱՂՉՈՅԵԱՆ ԿԵԴՐՈՒՄ,
ՊՈՒՐԳ ՀԱՅՈՒՏ
ՀԵՌ. (01) 241263/4
ՖԱԶՍ՝
(01)260329
ՓՈՍՏԱՐԱԿ՝
80-1096 Պ. ՀԱՅՈՒՏ
E-mail:
lmphamaz@lncn.com**



Հրատարակություն՝
Համազգայինի
Կեդրոնական Վարչություն



ԲԱԳԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ,
ՆՈՅԵՄԲԵՐ,
ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011
ԽԹ. ՏԱՐԻ, ԹԻԻ 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԻՄԵԱՄԵԱԿԻ ՄԸ ՍԵՄԻՆ՝ ՄՏԱԾԵԼ
ԲԱԶՄԱԲԵՆՈՅԹ ՀԱՐՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԵՒ ԿՈՂՄԵՈՐՈՇՈՒԼ 3. Դ. -1

♦ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԿԱՐՕ ԱՐՄԷՆԵԱՆ - 3 ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ - 9 ԱԶՆԻԻ ԳԱՐԱԼԷՔԵԱՆ -
ՄԻՔԱՅԼԼԵԱՆ -13 ՎԱՀԷ ԱՐՄԷՆ - 15 ԽԱԶԻԿ ՏԷՏԷԵԱՆ - 21

◆ UP2U4

ՄԷՐ, ԱՐՈՒԵՍ, ՍՊԻՐԻՏԻԹԵՒՆ - ԳՈՒՐԳԷՆ ԽԱՅՁԵԱՆ - 24
 ՊՈՒՐԶ ՀԱՄՈՒՏԸ ԿԱՅ, ԱՍՏՈՒՄՈ ՎԿԱՅ - ԾԱՀԱՆԻՆԻՍ - 30
 ՏԱՐԵՎՄԻՋ, ԹԷ՝ ԿԵԱՆՔԻ ՀԱՇՈՒՆՅԱՐԿԱՐ - ԶՕՀՐԱՊ ԳԻՐԷՁԵԱՆ - 36
 ԵՐԿՐԱՇԱՐԺ - ԼԱՒԱ ՍԻՆԱՍԵԱՆ-ՄԻՍԿԱՐԵԱՆ - 46

◆ԻՄԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԵՂԻԱԶԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ, ՄՏԱՌՈՐԱԿԱՆ ԿԱՌԵՏԻ
ԲՈՎՏ ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ - 51

◆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱԿԱՐ ԲԱՐԵՆՈՒԴԱՐԵԱՆԸ ԵՒ ԱՊՐԷՍ ԲԷԿԵԱԶԱՐԵԱՆԻ
«ԳԱՂՏԵՐ ԴԱՐԱՔԱՂԻ»-Ի ՃԱԿԱՏԱԳԻՐԸ - ԶԵՆԱԴԱՎ ՎԱՆԵԱՅԻ ԱՌԱՔԵԼԵԱՆ-ԲԱՆԱՅԵԱՆ - 57

◆ ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ՀԱՅՈՒՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ»
(ՀԵՂԻՆԱԿ՝ ՀՐԱՅՐ ԶԷՊԷՃԵԱՆ) - Ս.Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ - 62
ՎՐԷԺ ԳԼՆՃԵԱՆ-ԹՈՒՐԵԱՆ. ՀԱՅՐԵՆԻ ԳԻՏԻՒՆ ԿԱՌԱՋԱԾ
ՀԱՅ ԳԻՐԻՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ՄԸ - ՆՇԱՆ ՊԱՍՄԱՃԵԱՆ - 68

◆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ԹՈՒՄԱՍ ԴՐԱՆՍԻՐՈՍԷՐ՝ 2011Ի ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՂԷԼԵԱՆ ԴԱՓՆԵԿԻՐ - 3. Պ. - 72
ԹՈՒՄԱՍ ԴՐԱՆՍԻՐՈՍԷՐ - ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ - 74

◆ ԱՐԽԻԻԱՅԻՆ

ՀԱՄԱՍՏԵՂԻ ՏԷՐ-ԶՕՐ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ - ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ - 78

♦ ՄԵՐ ԱՌՕՐԵԱՅԷՆ

ԲԱԳԻՆԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ... ՅԻՇԵՑՄԱՆ ԿԱՐԳՈՎ - Յ. Պ. - 82


◆ ԱՐՈՒԵՍ

... ጥይቶች ለሰዓብያዊነት ለጥቅም ሲውሉ ለሰዓብያዊነት ለጥቅም ሲውሉ - 84
 ለሰዓብያዊነት ለጥቅም ሲውሉ ለሰዓብያዊነት ለጥቅም ሲውሉ - 86

♦ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 2011 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ 1, 2, 3, 4 ԹԻՒՆԵՐՈՒ - 92

♦ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ - 80

Կողքի նկար՝ «Բանաստեղծին երգը»
Գործ՝ ՀՐԱՅՐԻ



ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՊԵՏՐՈՍ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԱՃԵԱՆԻ
Խմբագիր՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆԵՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՐԽԵՒՆԵՐ, ԹԻՒ 4
Հրատարակք՝ Հայկական Մատենաշար Գալուստ Կիլայենկեան Հիմնարկութեան
Կիպրոս- 2010

ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻ ՀՈՎՈՒՄԿԱՆ
ԿԱՐԳԸ ԵՒ ԹԵՄԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿՈՐՈՒՄԸ
Խմբագիր՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ ԿԻՊՐՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ
Կիպրոս - 2011


ՍՐԲԱԳՐՈՒԵԼՈՒ ԱՐՈՒԵՍԸ
Հեղինակ՝
ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԳ. ԶԻՖԹՃԵԱՆ
ԿԷԼԻԿԵՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱ
Անթիլիաս - 2011

ՆՇՈՅԼ ՀՐՃՈՒԱՆՔԻ
Հեղինակ՝ ԱՐԱՄ ԲԼԹԼՆՃԵԱՆ
(Քերթուածներ)
Հալէպ - 2011

ՀԱՅՈՒՀԻԻ ՄԸ ՕՐԱԳՐԷՆ
(Պատմության, Հրապարակագրական էջեր)
Հեղինակ՝ ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ
Խմբագիր՝ ՊԱՐՈՅՐ ԱՂԱՇԵԱՆ
«ՌԻՉԸՐՏ ԵՒ ԹԻՆԱ ԳԱՐՈՒԼԱՆ» ՀԻՄՆԱԿՐԱՄ - ԹԻԻ 9
Անթիլիաս - 2011

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԸ ԳՏՆԵԼՈՎ

Փաստագրական ֆիլմ
Բեմադրիչներ՝ ԹԱԼԻՆ ՍՈՒՃԵԱՆ, ԼԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ
Նախաձեռնություն՝ Հայկազեան համալսարանի, Երևան - 2008



3. Պ.

ԱՐԵՒՄՏԱՇԱՅՆՐԷՆԸ՝ ԸՎՅՐԵՆԱՇԱՆՈՒԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԿԱՆ ԶԷՆՔ

Համագումար մը:

Մշակութային եւ ազնիւ քաղաքական նկարագրով: 18, 19 եւ 20 Օգոստոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Կիւլպենկեան Հիմնարկութեան գործակցութեամբ, նախագահութեամբ ՆՍՕՏՏ Արամ Ա կաթողիկոսի, Լիբանանի մէջ տեղի ունեցաւ Համասիիոքեան Կրթական Գ Համագումարը:

Օրակարգ. ԱՐԵՒՄՏԱՇԱՅՆՐԷՆԻ ԿԱՅՈՒԹՒՒՆԸ ԱՅՍՕՐ՝ ՄԱՐՏԱՀՐԱԽԷՐՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ:

Երբեք բաւարար չափով չենք ըսեր, որ ազգի մեծամասնութեան համար ընդհանրապէս հայերէնի հարցը, այս պարագային մասնաւորաբար Արեւմտահայերէնը, մտահոգութիւն չէ:

Հայերէնախօսութիւնը տեղի կու տայ, կը նուազի, հայագրութիւնը՝ շեշտուած կերպով աւելի կը նահանջէ: Հետեւանքը պարզ է, եթէ չվարագորենք մեր աչքերը, հայրենասիրական եւ զգացական իմաստ չունեցող փաստարկներով:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեան ընդառաջած էին կրթական մշակներ, գրողներ, մտաւորականներ: Զիրար լսելու: Կացութիւնը քննելու: Եւ, ինչ որ կարեւորագոյնն էր, գտնելու այն միջոցները, որոնք թումբ պիտի կանգնէին, որպէսզի Արեւմտահայերէնը չդառնայ մեռեալ լեզու: Նախատեսութիւն մը, որ մեր յոռետեսութենէն չի թխիր: Այս մասին գրած են ԻԻՆԵՍՔՕ-ն, Եւրոմիութեան կողմէ կատարուած ուսումնասիրութիւնները:

Լիբանանէն, Սուրիայէն, Եւրոմիութենէն, Ծոցի երկիրներէն, Հիւսիսային Ամերիկայի հայկական գաղութներէն եւ Պոլիսէն եկած էին ուսուցիչներ, մտաւորականներ, գրողներ, մամուլի աշխատատեղեր, հրատարակիչներ, համակարգչային մասնագէտներ, շուրջ վաթսուն անձեր: Ներկայ էր Հայաստանի Հանրապետութեան Գրողներու Միութեան նախագահը: Լսուեցան զեկուցումներ, եղան տեսակէտներու փոխանակումներ՝ ուսուցման, մանկավարժութեան, դասագիրքերու, լեզուի զտման, գրականութեան, հանրային կրթութեան, մամուլի դերի եւ այլ հարցերու մասին:

Հիմնական առաջադրանքը հայերէնի պաշտպանութիւնն էր, որպէսզի ազգային հաւաքականութիւնները տեսնեն հարազատ ինքնութեամբ, մշակոյթ եւ գրականութիւն ժառանգուին:

Զեկուցումները եւ որոշումները պիտի հրատարակուին:

Այս ընդհանուր հաստատումներէն անդին, Համագումարի մասնակիցները, կը գիտակցէին, որ կացութիւնը հարկ էր դիմագրաւել իրապաշտութեամբ, ժամանակի արդիականութեամբ, մեր կացութեան մէջ գտնուող ուրիշ ժողովուրդներու դրական քայլերուն օրինակով: Օրինակելի էր Հայոց Հայրապետին գործօն մասնակցութիւնը, որպէս Առաջնորդողի:

ԲԱԳԻՆ

Համագումարին մասնակիցները հաստատական էին կացութիւնը դիմագրաւելու իրաւաշտութեամբ եւ ժամանակի ընծայած արդիական միջոցներով: Հայոց Հայրապետին գործօն մասնակցութիւնը քննարկումներուն, ազգի ապագան տեսնելու եւ իրապէս ղեկավարելու դրսեւորուող տազնապով, լաւատեսութիւն կը ներշնչէր: Եթէ որոշում կայացնելու եւ գործադրելու ուժ եւ միջոցներ ունեցող ղեկավարութիւնները եւս ներկայ ըլլային, առանց դասական տարբերութիւններու եւ մրցակցութիւններու, կարելի կ'ըլլար հայեցի դաստիարակութեան որակի զարգացման թափ եւ որակ տալու յոյսերը բազմապատկել, հայերէնի եւ Սփիւռքի ազգային դիմագիծի ու խորքի պաշտպանութիւնը կ'ունենային ընդհանրական եւ ուժեղ նկարագիր, չէին սահմանափակուեր ընտրանիի մը կամ փոքրամասնութեան մը նեղցած շրջանակին մէջ:

Երբ հրատարակուին զեկուցումները, ամփոփուին արտայայտութիւնները, անոնք պէտք է որ հասնին իւրաքանչիւր հայու, զանգուածային լրատուամիջոցներով: Անտեղեակ անձն է որ չի տազնապիր:

Դրական է այն, որ կեանքի պիտի կոչուի Համադրող Մարմին մը, եւ կը սիրենք հաւատալ, որ ազգը անոր պիտի տայ միջոցները կատարելու ուսումնասիրութիւններ, նախաձեռնելու, որպէսզի իւրաքանչիւր հայածնունդ հայ մանուկ սորվի հայերէնը, լաւագոյն պայմաններու մէջ: Դասագիրքեր, մանկավարժութիւն, դպրոցներ:

Համագումարի երեք օրերէն ետք պէտք է որ սկսի իրաւ աշխատանքը, բոլորի մասնակցութեամբ, զօրակոչի պատասխանելու հաստատականութեամբ: Այդ ընելու համար հաւատքի քարոզիչի պէս պէտք է երթալ դէպի ժողովուրդը, բազմապատկելով ուղղակի հանդիպումները:

Պիտի ընե՞նք այնպէս, որ այս Համագումարը չըլլայ ի միջի այլոց ձեռնարկ մը, որ կը մոռցուի լրատուութեամբ մը: Ներկայացող խնդիրը սահմաններու պաշտպանութեան եւ բարեսիրութեան ընթացիկ մակարդակէն վեր է: Այսօրուան եւ վաղուան գոյապայքարին առանցքն է:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի նախաձեռնութիւնը օրինակելի է, հեռանկարային եւ ազգաշէն: Այս բառերը չեն միտիր հաճոյակատարութեան:

Արեւմտահայերէնի պաշտպանութիւնը, զարգացումը, ընդհանրացումը եւ վերադարձը հայ մանուկներու եւ չափահասներու շրթներուն, էական օղակն է մեր գոյատեւման պայքարին եւ իրաւունքի վերականգնումին:

Յաճախ պէտք է յիշել ՇԻՆ ՖԷՅՆԻ իրլանտացի ազատամարտիկները:

Անոնք կ'ըսէին թէ անգլիական բանակը դուրս պիտի դնէին իրենց հայրենիքէն՝ ԿԱԷԼԻՔՈՎ, իրենց լեզուով: Այսինքն՝ լեզուն զէնք է: Արեւմտահայերէնը պահած ժողովուրդն է, որ տէր պիտի կանգնի բռնագրաւուած երկրին եւ պահէ վերադարձի փիլիսոփայութիւնը:

Նոյնը պիտի լանդգնի՞նք ըսել ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ համար, որպէսզի վերջ գտնէ մեր ազգի հայրենահանումը:

Զըսել որ ուշացած ենք: Վաղը աւելի ուշ կ'ըլլայ:

Պիքֆայա
20 Օգոստոս, 2011

ԲԱՆԱՍՏԵՂՏՈՒԹԻՒՆ

Pakine

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ

Հատուած Խոսրով Ասոյեանի «Կանչը» բանաստեղծական հատորէն, որ մամուլի տակ է:

Ռաֆօ՜
Մերուժն եմ
արթնցի՛ր,

կը ծախեն
Տունը,
կը լռեցնեն
երգերը,

«Սասուն գաւառ,
Սիմու լանջին»ը
կը վերածեն
հառաչանքի,
սգամատեան
յուշերու հին,

կը ձմռթկեն
էջերը՝

դժուարութեան
արժանի
թշուառական,

կը տանջեն
տողերը
դժոխալուր
անհնազանդ,

«Թիփի բորան
մութ գիշերին»
պտըտող ֆետային,

կ'անարգեն
իր իսկ տան մէջ՝
հողին վրայ,

«Լուսին չկար
մութ գիշեր...»ի
մոսիները
լքուած՝
անտէր,

սուլթանական
հրովարտակով,
մահիկով եղծ
զարդարելով.

Սերոբները կ'ապրին
անարգանքը
մոսիներուն,

կը կլլեն թոյնը
նոյն,

քրքիջով նոր
համեմուած,

Անակներու
ձեռքով հիստուած
դաշոյն մը
կոյր,

«Դաւօ»ներու
ապ ու պապերն
ան
առարկելի...

Անդրանիկին
կարիք չկայ,

արձանը լոկ
քարէ
անխօս
ուրիշ ոչի՛նչ,

«Մօտ է գարունը
շուտով կը բացուի...»

վաղը՝
ընկերները կրնան
ամոքելով ցաւերը հին
վերադարձը



ԲԱԳԻՆ

փառատօնել...

Սօսէ Մայրիկին ածիւնները
անշուշտ կրնանք բերել,

բայց
ոչ ոգին,

հազարամեայ
ան

ժամանակ
երազ է հին
ծերացած,

Անահիտներու
ժառանգաւոր
անառարկելի,

հարիւրամեայ
յուշերով
ցաւերով
սխալուած,

«Վերքերով լի...»
թափառական...

Ռութէնները
ցաւամատեան
հայրենատենչ
հայատենչ
հողատենչ
տարաբախտ,

կամայ
ակամայ մոռցուած,

թափառական
յոզնած,
տան երազով
կարօտով օձախի
կը բեկանուին
կը մնան
յուշամատեան
անօթեան...

Արամներու

օրերը
դարակերտ,

կը խաթարուին
կը ծալուին
կը յանձնուին
լռութեան
սպառին,

կը մերժուի գաղափարը
երազն անոնց
հայրենակէզ
հողակէզ
կը պղծուի,

շիրիմները կը մնան
թաւուտներու մէջ
լքուած.

լերան լանջին
դարակուտակ
քարակուտակ
աղաղակ
լռեցուած...

Արեգը կը բարձրանայ
երազը հին կը վերածնի,
«Հայ գիւղացին դարուց ի վեր...»ը
կը բազմապատկէ
սրտերուն զարկերը,

Հայ տիկինը կը խանգարէ
մաֆիոզներուն հաշիւները,

Հայ ծերուկը
կը մտահոգէ ղեկերը,

պէտք է լռեցնել Զայնը
խափանել Կանչը...

Լոս Անձելըս,
ԱՄՆ



ԱՐՁԱԿ

Pakine

Ս. Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԱՆԷԾՔԸ

Բռնաբարձման չիրագործումը Համոյին բարկութիւնը հասցուց գազանային չափերու: «Մայրդ ... պաճընը ... շարմու ...» եռալեզու յիշոցներու անվերջանալի շարան մը անասելի ոռնոցներով դուրս թռաւ բերնէն: Պէտք էր բզկտէր էզը, այդ քաժը, որ յանդգներ էր պոռալ երեսին՝ «Չեմ սիրեր քեզ, չեմ, չեմ սիրեր, հասկցի՞ր», ու նոյն վայրկեանին իսկ յաջողած էր փախչիլ իր հուժկու բազուկներէն...

Կայծակի արագութեամբ նետուեցաւ առջեւ եւ տեղաւորուեցաւ ընկերոջմէ մը փոխ առած սպիտակ Վէնին վարորդական նստարանին եւ ջղային շարժումով մը աշխատցուց մեքենան, ապա արագ-արագ անոր վիզը դարձուց դէպի Մարոյի փախուստի ուղիութեամբ: Նաւթահոտ սպիտակ գոլորշի մը բարձրացաւ աղբակոյտի վերածուած ամայի վայրին մէջ: Խաւարապատ գիշերին մէջ խելագար մեքենայ մը դուրս կու գար լայնատարած աղբանոցէն, որ Լիբանանի պատերազմի օրերուն էր ստեղծուեր: Հեռու-հեռաւոր շրջաններէ բերուած աղբերն ալ հոն կը հաւաքուէին, ապա, լաւագոյն պարագային, կ'այրուէին, լքուած ու անտէր Պուրճ Համուտի երկնակամարին անփութօրէն աւելցնելով ծովսի ու մուրի նոր թաղանթ մը եւս: Բազմահազար աղբի տոպրակներ մանր ռումբերու պէս կը պայթէին սուրալու փորձ կատարող մեքենայի անիւներուն տակ, որոնք աջ ու ահեակ թեքումներով հազիւ կրնային պահել իրենց հաւասարակշռութիւնը, մինչ իրարու ետեւէ աղմուկով կը ճգնուէին մնացուկներու դէզեր՝ սարսափելի գարշահոտութիւն մը տարածելով մթնոլորտին մէջ...

*
* *

Ամառնային խոնավ Կիրակին կ'իրիկնանար, անցնող բոլոր Կիրակիներու անհամութեամբ: Ռումբերու զոռոցը թէւ շատ հեռուներէն կու գար, գրեթէ անզգալի ու անվրտանգ, բայց երկրին անդամալոյժ վիճակն ու համատարած անգործութիւնը ձանձրոյթի յօրանջներով կը լեցնէին յատկապէս համեստ շրջանները, որոնց շարքին՝ հայահոծ Պուրճ Համուտը, ուր դաստիարակչական ժամանցի, անմեղ հաճոյքներու ոչ մէկ վայր կար յատկապէս երիտասարդ խաւին համար...

Շրջանի երիտասարդները, րնդհանուր առմամբ, երկու տեսակ էին. անոնցմէ հաւատաւորները խճողած էին ակումբները, պահակութեան ու զինուորական տիսիփիինի ենթակայ, գաղափարապաշտ ու անձնուրաց, տուն-տեղ մոռցած, սէր ու րնտանիք իրենց ետին թողած, պատերազմական թոհուրոհի առաջին զիծին վրայ իրենց անձը զոհելու պատրաստ, յանուն շրջանի բնակչութեան ապահովութեան:

Երկրորդ խումբը ակումբ կը յաճախէր հրամայական պահերու եւ ստիպողութեան տակ միայն: Ան իր ձանձրոյթը առաւելաբար կը փարատէր անհրապոյր օրերու վերջալոյսն ու Շաբաթ եւ Կիրակի օրերը անցրնելով շրջանի համեմատաբար ապահով փողոցներու անկիւնները, երկարածգուող պատերազմին հետ ժամանակ առ ժամանակ փոխելով տարիք, խումբ ու իրավիճակ, միշտ նորեր ներգրաւելու պատրաստ, որոնք կու գային նորաբոյս պեխերով, սկսնակ ծխողներու վայել գերիւրապաշտ յագեցուածութեամբ, երբ կարմիր «Մարշալոր»-ի գլանիկներուն ծուխը աննկարագրելի կորովով մը անոնք կ'իջեցնէին մինչեւ իրենց թոքերը, ապա քուլայ-քուլայ կը հանէին դուրս, երջանկութեան այնպիսի զգացողութեամբ մը, որ յատուկ է փողոցային լակոտներու, որոնք ծուխերու մէջ թաղուած, Կիրակի առ Կիրակի նաեւ իրենց րմպած պիրայի շիշերու թիւր կ'աւելցնէին՝ իբրեւ գերագոյն նշան իրենց տղամարդկային յատկանիշներուն, իրենց աչքերը յառած տուներու բակերուն եւ շէնքերու պատշգամբներուն...

Անկիւններու թեմա՞ն: Նախ եւ առաջ արդարացի, երկնառաք դժգոհութիւն պատերազմի դէմ, իրենց ծաղիկ կեանքերը մահացու առօրեայի մը մէջ բանտող ոճրագործ մեծ պետութիւններու դէմ, ապա նոր ինքնաշարժ մը գնելու երագներ, յետոյ յանկարծ խումբէն մէկն ու մէկը քաշքշուքի զոհ դարձնելու փորձեր, անսանձ խնդուքներ, քանի մը վայրկեան ետք լուրջ նախաձեռնութեանց մասին մտածումներ՝ Ամերիկա-Աստրալիա անվերադարձ մեկնելու, հոն նոր կեանք հաստատելու գունաւոր գաղափարներ, ապա բռունցք՝ պարապին դէմ, կեանքի անհեթեթութեան դէմ, սակայն սիրելու եւ սիրուելու անասելի փափաք, երիտասարդական հրայրք ու անսանձ կիրք, զորս այդ տղաքը կը ծամէին իրենց բերնին մէջ տարօրինակ արտայայտութիւններով՝ կոշտ ու կոպիտ, փողոցային լակոտներու թրքերէն-արաբերէն բառերու ճնշումին տակ ինքնասպանութեան դիմելու պատրաստ խեղճ ու թշուառ հայերէնով մը, որ կու գար կը զարնուէր հայկա-

ԱՐԶԱԿ

Pakine

կան թաղերու ցածրիկ պատշգամներու մէջ քով-քովի շարուած, թէ, քիչ ետք, կիրակնօրեայ հագուստներով ճեմելու ելլող դեռատի աղջիկներու շիկնող հայեացքներուն ու անոնց հրաւերի հանգոյն շրթխած ժպիտներուն...

- Ակամ կեցիր եղբայրիս օթոն թոցնեմ-բերեմ, ճունի երթանք, եալլա՛...
- Եարիկներուն ըսէ, այսօր պուզան վրաս է... պէլէ՛շ է, պէլէ՛շ...
- Ամմա դապատայի ես, հա՛...

Յետոյ՝ ճեմողներուն բերանաբաց գրոյցները.

- Հիհիհիհիհիհի՛...

- Խենթի մէկն է...

- Նայէ՛ աղջիկ, ինչ անուշիկ է, տեսա՞ր պէխերը, կուրծքին մազերը...

- Ես հոս մնացողը չեմ ... Ամերիկա հարս պիտի երթամ...

- Էհ, գնա՛... դուն ալ գնա՛, Սոմային պէս խաբուիր, յետոյ յետոյքիդ նայելով ետ պապայիդ տունը դարձիր...

- Հիհիհիհիհիհի՛...

Կամ՝ պատշգամները լեցուածներուն ախն ու վախը.

- Այլեւս չեմ դիմանար կոր ... պիտի մեռնիմ եթէ չամուսնանամ հետը...

- Աղջիկ ասիկա «Սեւտա է, սեւտա՛... քարա՛ սեւտա», կ'ըսէր նենէս ... այլեւս թող գայ ձեռքդ ուզէ ... ի՞նչ կեցեր է...

- Կեցէ՛ք, կեցէ՛ք, կու գան կոր...

- Հայտէ՛, գնա՛ դուն ալ, եալլա՛... նայէ՛, շատ ձիւլէ մի՛ ըներ տղուն, կը բաւէ հալեցնես, հա՛...

- Հիհիհիհիհիհի՛...

Մէկը սիրատոյժոր, միւսը բարկացած, մէկ ուրիշը սրտին մէջ բացուած ծաղիկներուն բոյրով տարուած, երրորդը արդէն սահմանը անցած, բայց անմեղութեան քողին տակ ինքզինք յաջող կերպով թաքցուցած, չորրորդ մը՝ դաւաճանուած ըլլալուն համար ատելութեամբ ու վիշտով լեցուած, բայց բոլորն ալ դեռատի, տակաւին երեխայական ջերմութեամբ վարարուն այս աղջիկները խնդալով ու ծեքծեքուն քայլերով կ'անցնին թաղերէն, կիրքերու նոր ալիք մը բարձրացնելով տղոց ամենադիրազգաց վայրերուն մէջ...

- Հիհիհիհիհիհի՛...

Քիչ ետք անոնցմէ մէկ-երկուքը արագ-արագ եւ առանձին-առանձին կամացուկ մը դուրս պիտի գան հայկական թաղերէն եւ իրենց անձանօթ, բայց արդէն սիրելի փողոցի մը շէնքի մուտքին սրտատրոփ պիտի միանան իրենց ասպետին, որպէսզի յետոյ միասին հասնին իրենց գաղտնի անկիւնը, հծծեն սիրոյ կարմիր խօսքեր, ապա շիշ ու կափարիչի պէս փակին իրարու եւ փրփրին գարեջուրի պէս...

- Հիհիհիհիհիհի՛...

ԲԱԳԻՆ

ԱՐԶԱԿ

*
* *

Թաղի աղջիկներեն միայն Մարոն էր, որ շուկայ չէր ուզած մտնել: Շրջապատի իր քնկերուհիները, դրացիներուն աղջիկները բոլորն ալ թերաւարտներ էին եւ մեծ մասը անոնցմէ Պուրճ Համուտի շուկային մէջ մէկ-երկու տարիէ ի վեր արդէն իբրեւ վաճառող կ'աշխատէր: Մնացեալները տուններու թէ աշխատանոցներու մէջ կարի, հուլունի գործ կ'ընէին, մեքենայ կամ քերկեախ կը դարձնէին: Մեծցած էին միասին: Գրեթէ նոյն թաղերը, նոյն ապաստանարանները, նոյն պատշգամներն ու փողոցները: Այս խումբէն միայն Մարոն էր, որ տակաւին դպրոց կ'երթար: Ուսումնատենչ աղջիկ էր: Արդէն աւարտական դասարան: Ուսումը շարունակելու ծրագիրներ ալ ունէր, բայց դրամ չունէր, որովհետեւ հայր չունէր: Պարոն Նշան մահացած էր, երբ աղջիկը ութ տարեկան էր: Կրտսեր զակին՝ Գեուղիկի երկրորդ տարեդարձին յաջորդ օրն իսկ, երկաթագործի իր խանութին մէջ, արկածի հետեւանքով: Այնուհետեւ տիկին Անժել լերան մը պէս թիկունք կանգնած էր իր անչափահաս զաւակներուն: Մական օրերը պատերազմական էին: Գեուղիկը անպայման դպրոց պիտի երթար: Իսկ Մարոն... Մայրը խոստացած էր ամէն զնով համալսարան հասցնել աղջիկը: Տիկին Անժել տունը կար կ'ընէր, Մարոն ալ պարապոյ ժամերուն մօրը կ'օգնէր: Դրացիներով համատեղ կ'ապրէին բակով տուններու մէջ՝ վեր-վար: Մէկուն ունեցածը բոլորինն էր: Հաց կը կիսուէին, դգալ-դգալ լոլիկի ջուր, ափ-ափ ոսպ ու բրինձ, հատ-հատ հաւկիթ ու աման-աման մածուն:

*
* *

Աղջիկներուն խումբը տակաւին խնդալով կը յառաջանար, երբ անկիւնէ մը երեւցաւ Համոն ու իրեն յատուկ՝ Մարոյին բիբերը ծակելու պատրաստ նոյն սուր նայուածքով երգել սկսաւ արաբերէն ժողովրդային երգի մը ծանօթ յանկերգը. «Մաալէշ, Ալլահ եիսամհիք, միշ հէք պիքուն ըլ ուաֆա...» (Վնաս չունի, թող ներէ քեզ Աստուած, հաւատարմութիւնը այսպէս չ'ըլլար)...

Չանագան վայրերու մէջ Մարոն լսած էր այս յանկերգը Համոյին բերնէն ու անգիր ըրած զայն: Տղան միշտ իրեն նայելով այս բառերը կը հնչեցնէր՝ դրացիներուն տունը, բակը, թէ ապաստանարանն ու փողոցներու անկիւնները: Եթէ մարդոցմով շրջապատուած ըլլային, Համոն քիթին տակէն կը մրմնջէր երգը, ճիգ ընելով կորզել իրմէ քանի մը տարի փոքր Մարոյին ուշադրութիւնը, միաժամանակ խորհրդաւոր ժպիտ մը լայնցնելով դէմքին, ապա աղջիկը գրաւելու միտումով քիչ ետք անոր կու տար միեւնոյն հարցումը. «Կր սիրե՞ս այս երգը, Մարօ»: Աղջիկը թեւ գլխով նշան կ'ընէր, հիմնականին մէջ քաղա-

ԱՐԶԱԿ

Pakine

քավարութեան դռներն, բայց կը զգար որ տղան այսպէս կը դարպասէր, յատուկ ուշադրութեան կ'արժանացներ զինք, սակայն ինք իր հոգիին խորը ոչինչ կը զգար Համոյին հանդէպ: Իր ասպետը չէր ան: Նոյնիսկ անհանգստութիւն մը կ'ապրէր ներքուստ, կը նեղանար այդ արաբներէն երգէն, Համոյին ուղղակի եւ կտրուկ արարքներէն, երբ, օրինակ, տղան երբեմն ամբողջ հասակով կը ցցուէր իր առջեւ՝ պատասպարանը, ճամբան, թէ տան մուտքի բակերէն մէկուն մէջ ու հաճոյախօսութիւն կը փորձէր ընել, ապա խիստ թոնով մը աղջկան բիքերը ծակելով՝ ակռաներուն մէջէն կը շնչաւ համոզումով. «Դուն իմս, իմս պիտի ըլլաս, Մա՛րօ»: Հուսկ՝ աղջկան շփոթանքէն, անմիջապէս փախուստի դիմող անոր քայլերէն երջանիկ, ինքնագոհ կը սկսէր սուլել արաբներէն երգին ծանօթ յանկերզը...

*
* *

Համօ վերի թաղերէն մէկուն բնակիչներէն էր, արդէն կազմաւորուած երիտասարդ, բարձր հասակով, սեւ ու թաւ պէխերով եւ քիչ թէ շատ համակրելի դիմագծերով. ան վերջին շաբաթներուն իրենց գետնայարկ տան պատերը փլցուց եւ գայն վերածեց հագուստի վաճառատան: Դրամ շահիլ սկսաւ: Ընկերներ ունէր, մեծ տղաք էին, որոնք կա մ արհեստանոցներու տէրեր էին եւ կամ վաճառականութեամբ կը զբաղէին. անոնց համար «աղջիկ խաղցնելը» սովորական հաճոյք էր, ունէին անձնական ինքնաշարժներ, Պուրճ Համուտի մէջ կը վայելէին ամէն տեսակի ազատութիւն, շրջանի գեղեցիկ կիները, ամուսնացած հարսերն ու դեռատի աղջիկները իրենց համար քաղցր որսեր էին:

Պատասպարաններէն դուրս ելած-չելած՝

- Կարո՞ն փախցուցեր է Յասմիկը ... **խաթիֆ** տարեր է ... մաման-պապան խենթացեր են ... ակունքէն դուրս չեն գար կոր ... աղջիկնին ետ կ'ուզեն կոր...

- Մանոն Սիլվային մեղքին մտեր է ... աղջիկը յղի է անկէ ... գալ ամիս պիտի ամուսնանան եղեր ... Տէրտէրը անանկ հրամայեր է...

- Մանուշակը եւ Ալիսը Պետրոսին սիրահարուեր են ... կռիւ կ'ընեն կոր մարդուն համար ... կնիկը չլսէ՛ ... վաղն իսկ օդանաւ կը նստի եւ վազելով ետ կու գայ Ամերիկայէն...

- Կիրակոսը ակումբ տարին ... բանտարկեցին ... Աղանիին պզտիկ տղուն հետ ամօթ բաներ կ'ընէ կոր եղեր **ապրիլ**ն մէջ...

Օրական դրութեամբ այսպէս թարմ ու անվերջանալի, շարունակական դրուագներով հարուստ պատմութիւններ, որոնք շրջանը տեսակ-տեսակ իրարանցումով կը լեցնէին: Պոռչըտութ, կռիւ, իրարու վրայ յարձակումներ, բայց նաեւ՝ կարճ ու կտրուկ, մեղքեր պարտկելու նպատակով հարսանիքներ, ապա՝ հարսանիքէն եօթ-ութ ամիս ետք ողջ-առողջ ծնունդներ ու նոր ընտանիքներու կազմութիւն, թէկուզ չքատր ու անբաւարար, բայց ի՛նչ փոյթ. «Պատերազմը վերջանալիք չունի՛»...

ԲԱԳԻՆ

ԱՐԶԱԿ

*
* *

Չվերջացող պատերազմի ամբողջ երկարության գայթակղությունները կը յաջորդեին իրարու՝ ռուսներու արհաւիրքի, երկրին մէջ տիրող անգործութեան, բնակիչներու մօտ-մօտ ապրելու պարտադրութեան թէ աներազ կեանքի ու անասնական կիրքերու յորձանուտի մը մէջ թաւալող Լիբանանի ամենէն աւելի խճողուած շրջաններուն մէջ, մարդասպանութեան ու կանխամտածուած ոճիրներու եւ մարդոց գլուխն ի վար անձրեւի պէս տեղացող ռուսներու անաւարտ սուլոցներուն տակ...

«Մաալէշ, Ալլահ եփսամհիք, միշ հէք պիքուն ըլ ուաֆա...»

Ու Մարոն չէր կրնար բմբռնել Համոյի մտադրութիւնը: Ինք որոշած էր ուսանիլ եւ տակաւին շաբաթ մը առաջ, ճիշդ նախորդ Կիրակի օր իր վերջնական որոշումը փոխանցած էր անոր՝ ճամբան, տունդարձի պահու մը, երբ Համօ անակնկալօրէն ելած էր դիմացը եւ «Մաալէշ»ը փսփսացած աղջկան ականջին՝ անոր թելէն ամուր-ամուր բռնելով եւ զայն աւելի մութ անկիւն մը տանիլ փորձելով...

- Համօ ... հաճիս ... մի՛ բներ ... կեցի՛ր-կեցի՛ր ... հասկցի՛ր ... ես չեմ ուզեր ամուսնանալ, դպրոց պիտի երթամ ... ես ... ես չեմ սիրեր քեզ ... ես ... ես ուրիշ մէկն ալ չեմ սիրեր ... ես ... ես միայն կ'ուզեմ ուսումս շարունակել...

Բառերը թելէ կմկմալով, բայց եւ քաջաբար Մարոն իր որոշումը նետած էր տղուն երեսն ի վեր, ապա իրենց մօտեցող ինքնաշարժի մը աղմուկէն օգտուելով՝ ճկուն շարժումով մը ինքզինք ազատած էր Համոյէն ու շնչասպառ հասած էր տուն...

Տունը՝ կարի մեքենային ձայնն էր եւ Գետլիկին «սուր-սուր» խաղին ճշոցները: Ականջներուն մէջ՝ «Մաալէշ»ի հծծիւնները...

*
* *

Մարսափահար Մարոն կը վազէր առանց ետին նայելու, քրտինքներու մէջ թաղուած, կը վազէ՛ր ու կը վազէ՛ր: Յիշեց, որ դպրոցը գրեթէ ամէն տարի կարճ վազքի մրցումի առաջնութիւնը ինք կը շահէր: Դառն ժպիտ մը գծուեցաւ դողացող շուրթերուն վրայ, կարծես յուսահատութենէն զայն դուրս քաշող ժպիտ մը, որ միեւնոյն ատեն զօրութիւն տուաւ ոտքերուն: Ա. Պաքալորէայի արդիւնքները սպասող Մարոն հիմա ինկած էր անվերջանալի աղբակոյտի մը մէջ, միս-միճակ, խաւարին ու զարշահոտութեան իբրեւ վերջին գոհ... Սիրտը ափերուն մէջ սեղմած՝ փորձեց յիշել թէ ի՞նչ էր պատահածը... Պատկերները խառնուեցան իրարու, յուզումը բարձրացաւ կոկորդը եւ զգաց Համոյին պիթկ ու ամուր ձեռքերը մարմնին վրայ, ուսերն ի վար, հագուստին արանքներուն, իր դիմադրութիւնը՝

ԱՐԶԱԿ

Pakine

ձեռքերով, ոտքերով, քիչ ետք նոյնիսկ բռնակցներով, երբ տղան ուժ գործադրեց զինք Վեցին վերջնամասը քշել-տանելու, ուր ատելի լայն էր միջոցը, բռնաբարման համար խտալ վայր մը...

Մարոյին արցունքները դարձան հեղեղ, սիրտը ճնշուեցաւ ատելի ու ատելի, բայց եւ՝ մանկութենէն ստացած կրօնական դաստիարակութիւնը հասաւ օգնութեան: Յիշեց, որ երբ Համոն, այլեւս կատղած ու գազանաբարոյ, ոչ մէկ բացատրութիւն ու խօսք կ'ուզէր լսել իրմէ, այլ միայն կը փորձէր ժամ առաջ իր՝ «Ի՛նչ պիտի րլլաս»ի մեքենական խօսքին գործնականութեան անցնիլ, ճիշդ այդ պահուն, հոգիին մէջ լոյս մը բացուած էր, ի պատասխան՝ «Աստուա՛ծ, Աստուա՛ծ» իր սրտակեղեք, լո՛ւռ աղաչանքներուն: Լոյսը պայծառացուցած էր միտքը, ու մինչ Համո վայրկեան մը բաց ձգած էր աղջկան ուտերը, որպէսզի երկու ձեռքով կարենար ատելի արագ կեղուել մարմնէն հագուստները, Մարօ խոյացած էր առջեւի նստարանը, անմիջապէս բացած էր մեքենային դուռը եւ, առանց ետին նայելու, վազել սկսած...

Դարձեալ հառաչակոծ «Աստուա՛ծ» մըն էր, որ կը թռչէր մութ ու խաւար սա աղբակոյտին մէջ, մինչ աղջիկը, ոտքերուն զօրութիւնը կրկնապատկած, հասակէն ատելի բարձր ցատքերով կը վազէր անորոշ ուղղութեամբ՝ լոյսի մը, ինքնաշարժի մը յայտնուելու յոյսին ապաւինած:

*
* *

Կանխամտածուած բռնաբարման փորձ էր եղածը: Իրիկնամուտին, երբ աղջիկներէն բաժնուելէ ետք Մարօ վերադարձած էր տուն՝ Գեւորիկ ուրախ-ուրախ հաղորդած էր քրոջը.

- Մարօ, Մարօ, մի՛ հաներ սանտալներդ, Համոն ճունի պիտի տանի մեզ, **պուզա** ուտելու...

Ու աղջկան հարցական նայումքին տակ՝ մայրը շարունակած էր խօսքը.

- Քիչ առաջ հոս եկաւ, աղջիկս, Գեւորիկին հետ խաղցաւ, ըսաւ որ ճամբան աղջիկներով տեսեր է քեզ. «Թանթիկ, Մարոն երբ գայ թող սպասէ, ձեզի տանին **պուզա** մը կերցնեմ, այսօր ընկերոջս **օթոն** քովս է», ըսաւ ու գնաց որ **օթոն** բերէ:

- Դուն ալ պիտի գաս, չէ՞ մամ,- խորունկ շունչ մը քաշեց Մարոն:

- Չէ, աղջիկս, ես վաղուան հասցնելիք գործ ունիմ, յետոյ՝ դուք ճահել էք, ես ի՞նչ գործ ունիմ հետերնիդ, Գեւորիկն ալ հետդ է, կ'երթաք շունչ մը կ'առնէք, քիչ մը կը փոխուիք, քանի շաբաթ է թաղէն դուրս ելած չունիք ... ռումբերն ալ լռել են այսօր, օգտուեցէք առիթէն, ժամն ալ ուշ չէ ... գացէք, Կիրակի օրով պաղպաղակ մը կերէք-եկէք ... Համոն ալ օտար չէ, մեր թաղին տղան է, վախճալու բան չկայ, աղջիկս...

Մարոն չկրցաւ բանալ բերանը. եղած-չեղածը ճունի երթալ մըն էր, պաղպաղակ ուտել

ԲԱԳԻՆ

ԱՐԶԱԿ

մը: Եղբայրն ալ հետն էր. ի՞նչ ունէր վախճալիք որ: Արդէն խիղճն ալ հանգիստ էր. առանց ըսի-ըսաւի, առանց երրորդի մը միջամտութեան հասկցուցեր էր Համոյին պէտք եղածը եւ հարցը նկատած՝ փակուած: Վերջապէս, Համոն միշտ իրենց բակերն էր, դրացիներուն տան բարեկամն էր, իրեն ի՞նչ վնաս կրնար հասցնել...

Բայց Համոն ուզած էր վնաս հասցնել: Հազիւ թաղը դարձած, մայր պողոտայի մուտքին ան հարիւր ոսկի մը երկարած էր Գետլիկին ու հրահանգած.

- Գետլիկ, ա՛ռ աս դրամը, գնա՝ Սագոյին խանութը **Ֆիֆիլը** խաղցիր ... ես Մարոյին հետ խօսելիք ունիմ...

Աղջիկը անակնկալի եկած, թէւ փորձած էր հակաճառել, Վէնին մէջ պահել եղբայրը, բայց Համոյի զօրաւոր բազուկները գրեթէ վար նետած էին տղեկը ինքնաշարժէն եւ սուրացած՝ անորոշ ուղղութեամբ...

*

* *

Աղբերու հսկայ դէգեր յայտնուեցան յանկարծ: Մարոն քիթը բռնած՝ տերեւի մը պէս դողալով ինկաւ դէզի մը վրայ: «Հոս առնէտները կը խածնեն գիւ ... հիմա կը մեռնիմ», անցաւ միտքէն, բայց իրեն մօտեցող դժոխային սպիտակ Վէնին զօրաւոր լոյսերէն կարենալ պահուրտելու գաղափարը ուժ տուաւ սրտին: Շունչը բռնած սպասեց, որ գազազած Վէնը անցնի-երթայ իր թաքստոցին քովէն: Մութը օգնեց, որ կատաղած Համոն չնկատէր զինք: Ինքնաշարժը ծանր հռնդիւններով կոխկոտեց գարշահոտ դէգերը, ապա քիչ մըն ալ յառաջանալով մտաւ մայրուղի...

Մարոն մօտաւորապէս հասկցաւ թէ ո՛ր կը գտնուէր, երբ ինքնաշարժին մեծ լոյսերը ինկան ճամբուն երկու կողմերը: Խորունկ տխրութեան մը անձնատուր, աղջիկը կլլեց արցունքները, մէկ ձեռքով բարձրացուց վիզին ինկած գանգուրները, միւս ձեռքի ափով սրբեց երեսին ու ծոծրակին քրտինքը, ապա կարգի բերաւ հագուստը, փորձեց շտկել անոր պատռտած փէշը եւ լլկիչ ողիսականէ մը ազատելու յոյսին կառչած՝ ամբողջ ուժովը վազեց դէպի մայրուղի, մերթ փողոցներու երկու կողմերուն կանգնած ինքնաշարժներու ետին պահուրտելով, մերթ ալ անոնց պատուհաններէն ճամբան դիտելով: Մտածեց, որ պէտք էր անցնէր ճամբան, պէտք էր Վէնին հակառակ ուղղութեամբ վազէր, որպէսզի եթէ Համոն պատահի որ նշմարէր զինք, բաւարար ժամանակ չունենար հասնելու իրեն...

Թշնամի բերդին վրայ նոր գրոհի մը պատրաստուող մարզիկի մը պէս աղջիկը անշարժացաւ քանի մը վայրկեան, խոր շունչ մը քաշեց, փորձեց գիտնալ ժամը, հասկնալ, թէ քանի՞ ժամ անցած էր տունէն հեռանալէն, որքա՞ն եղած էր այս տառապանքին տեւողութիւնը, բայց չկրցաւ յստակ ու մեկին պատասխան մը գտնել իր հարցումին:

Ինքնաշարժներուն հակառակ ուղղութեամբ, ճամբուն մայթէն ընթանալու միտքը թէ-
 եւ ահագին առիթ տուաւ Մարոյին յառաջանալու, բայց աղջկան չա՛ր բախտէն, ճար-
 տարապետական ոչ մէկ տրամաբանութեան հետեւող մայր պողոտան այնքան նեղ-
 ցաւ յանկարծ, որ Մարօ ինքզինք յանկարծօրէն դէմ յանդիման գտաւ չարաշուք Վէնին,
 որ բաց երկնքի տակ կարծես իր վրայ կը սուրար: Աղջիկը պաշտպանական իր բնագ-
 դին ապաւինած անմիջապէս դարձաւ աջ եւ ինքզինք նետեց Տորայի շրջանի թաղերէն
 մէկուն մէջ, որ փակ էր ինքնաշարժներու դիմաց: Խորունկ շունչ մը եւս առաւ ու անար-
 գել շարունակեց վազել հանդիպակաց փողոցն ի վեր, ամբողջ զօրութեամբը մուտք-ելք
 ընելով քովընտի բացուած մանրիկ-մանրիկ թաղերու մէջ, ապա ինքզինք նետեց շէնքի
 մը պլպլացող մուտքէն ներս եւ մէկ ոստումով անոր երեք-չորս աստիճաններէն սլացաւ
 վեր...

Անձանօթ շէնքին ծանր հոտը անշարժացուց զինք մութին մէջ. աղջիկը կծկուեցաւ
 ինքն իր վրայ եւ ականջ տուաւ ճամբուն: Ոչ մէկ ինքնաշարժ, ոչ մէկ ոտնաձայն, ոչ մէկ
 իրարանցում: Հասկցաւ, որ Համոն չէր կրնար հասնիլ իրեն այլեւս, վստահ էր, որ ան
 կորսնցուցած էր իր հետքը: Այս միտքը ապահովութեան զգացումով մը շոյեց հոգին,
 ապա ան քանի մը վայրկեան եւս ականջ տալով խաւարին ու լռութեան, շունչը բռնած
 սկսաւ ոտքի մատներուն վրայ հատիկ-հատիկ կոխելով իջնել ցած...

- Ծու ֆի ... շու ֆի ... լա շու քնթի ասմթրքտի ... մին ինթի ... ուէյն պէյթիք ... մին քէն ուա-
 րաքի ... շու ասմէլ ֆիքի... (Ի՞նչ կայ ... ի՞նչ կայ ... ինչո՞ւ կը վազէիր ... ո՞վ ես դուն ... ո՞ր
 է տունդ ... ո՞վ կար ետեւդ ... ի՞նչ ըրեր է քեզի)...

Նոյն պահուն, շէնք վազած էր տեղացի զինեալ երիտասարդ մը եւ Մարոն պատին
 փակցուցած՝ խստօրէն կը հարցաքններ...

*
 * *

Լկուած հոգեվիճակն ու ֆիզիքական գեր-յոզմութիւնը Մարոյին լո՛ւտ արտասուե-
 լուն պատճառ դարձան: Յորդառատ արցունքներ զլորիր սկսան խեղճացած, արդէն
 մեռնիլ ուզող Մարոյի տխուր աչքերէն: Յոյս չունէր, որ այլեւս կ'ազատէր: Անձրեւէն
 փախած՝ կարկուտի բռնուած էր: Ի՞նչ ըսէր: Հսկայ գնդացիք մը օդին մէջ ճօճող եւ ան-
 դադար հարցումներ տեղացնող սա արաբ մարդուն ո՞ր մէկը պատմէր: Ամբողջ իրակա-
 նութիւնը ըսէր: Ինչպէ՞ս ըսէր: Արդեօք պէ՞տք է ըսէր...

«Կեանքի մէջ, աղջիկս, աւելի կը յաջողի այն մարդը, որ իր մեղմ բնատրութեամբ գի-
 տէ մարել կրակ եւ ոչ թէ այն, որ աննշան կրակ մը իր բարկութեամբ կը վերածէ խան-
 ձող խարոյկի», վրայ հասաւ միայն տարի մը առաջ մահացած մեծ մօր սա խրատա-
 կանը եւ նոյն վայրկեանին իսկ անդիմադրելի կարօտ մը եկաւ խեղդեց կոկորդը: Կա-
 րօտցաւ մայրը, Գեւորիկը, դպրոցը, ընկերուհիները, դրացիները... Կարօտցաւ մա՛նա-
 ւանդ իր սենեակն ու գիրքերը...

«Ամեն գնով պետք է ազատիմ ասկէ եւ հասնիմ տուն», վճռեց Մարօ մտքին մէջ, մաւաւանդ երբ զգաց տղուն ձեռքը դէմքին վրայ: Զինեալին ազատ ափը սկսաւ սրբել աղջկան արցունքները, յետոյ անոր մատները շոյեցին աղջկան անարիւն դէմքը, ապա կրքոտ շնչառութեամբ մը ճմլեցին ահէն խամրած աղջկան լեցուն շուրթերը, մինչ անոր մարմինը աւելի ու աւելի կը մօտենար Մարոյի հագուստին, որուն տակ մահանալու չափ կը դողար աղջիկը ու միաժամանակ կը զգար, որ կարծրութիւն մը աւելի եւ աւելի կը սկսէր հպիլ իր կոյս վայրին...

Մտովին թէւ «Աստուած» սկսած էր կանչել, բայց նաեւ պետք էր տղուն ուշադրութիւնը այլ կողմ շեղէր: Ինքզինք հաւաքելու շարժում մը րրաւ, ապա մեղմօրէն բացատրեց, որ ինք հայ էր, նշանուած էր, նշանածին հետ ըսի-ըսաւ ունեցած էր ինքնաշարժին մէջ եւ մերժած էր, որ տղան իրեն տուն հասցնէ: Անհամ քաշքշուք մը անցած էր իրենց միջեւ ... ինք կը սիրէր նշանածը եւ պետք էր տուն հասնէր, քանի որ, վստահ էր, որ իր նշանածը հիմա իրենց տունն էր եւ ...

Մարօ տակաւին չէր ամբողջացուցած իր խօսքը, երբ ոտնաձայններ լսուեցան դուրսէն: Աղջիկն ու զինեալը գլուխները դարձուցին դէպի մուտքը: Շէնք մտան մարդ մը եւ կին մը: Զինեալը զգաստացաւ, եկուորներուն հետ գրկուեցաւ եւ **հալ-քէֆի** խօսքի բռնուեցաւ: Շէնքի բնակիչ արաբուհին զարմացական հայեացքով մը նայեցաւ Մարոյին ու մինչ կը պատրաստուէր զինեալ իր բարեկամին հարցնել անձանօթ աղջկան մասին, Մարօ քաղաքավարօրէն «շնորհակալութիւն» շնջաց, ապա բարի գիշեր մաղթեց բոլորին ու դուրս թռաւ վիրաւոր երէի մը հանգոյն...

Դուրսը թէւ կը շարունակէր տիրապետել խաւարը, բայց ծանր բեռէ մը ազատած ըլլալու գոհունակութիւնն ու գիշերային զով գեփիւոր զգաստացուցին աղջիկը, որ այլեւս առանց յապաղելու վազեց, վազեց անդադար, մինչեւ հասաւ իրենց տունը եւ ըստ իր սովորութեան, թեթեւ հարուածներով թակեց դուռը: Միակ պահը, որ Մարօ ուրախացաւ ելեկտրականութեան բացակայութենէն, այս էր: Քանզի, դառնօրէն ժպտաց ան, մոմի լոյսի տակ մայրը պիտի չկարենար նշմարել իր աղջկան գլխուն եկած փորձանքները...

Անուսարսափի մատնուած տիկին Անժել անմիջապէս բացաւ դուռը ու սկսաւ քակել հարցումներուն կծիկը, մինչ աղջիկը մեծ-մեծ քայլերով յառաջացաւ դէպի տան խոհանոցը, բացաւ՝ շաբաթներէ ի վեր պահարանի դեր կատարող սառնարանը, վերցուց ջուրի տաք շիշը, բայց չկրցաւ լսել մօր վերջին բառերը, թէ՛ «Գետիկը ըսաւ, որ Համոն»... Անոր՝ այլեւս ուժասպառ, անզօր մարմինը հալած մոմի պէս ինկաւ գետին եւ տարածուեցաւ խոհանոցի գետնամածին...

*

* *

Անկողնին մէջ էր, դէմքն ու մազերը խխում կտրած, գիշերանոցը ծուռիկ-մուռիկ վրան փակած, մարմինը անտանելի ցաւերով պատուած, երբ Մարօ բացաւ աչքերը ու

ԱՐԶԱԿ

Pakine

մօր լացակումած դեմքը գտաւ դիմացը, ձեռքին՝ նոյն Կիրակի օրուան համար մօրը կարած

իր պատառոտած հագուստը: Աղիողորմ կու լար մայրը, ինքնախարագանման շեշտով մը: Մարոյին խիստ ծանօթ՝ անճարի ու անգօրի մայրական նոյն լացը...

Պէտք եղաւ հանգստացնել ծնողը: Բացատրեց, որ մտահոգութիւնք բան չկայ: Պարզապէս Համոն ուզած էր, որ միասին ճունի, սինեմա երթան: Ինքն ալ ընդունած էր հրաւերը, ապա տղան բացայայտած էր իր զգացումները, սակայն աղջիկը ըսած էր, որ ինք կը փափաքի ուսումը շարունակել, ամուսնանալու միտք չունէր հիմա: Ապա, վերադարձի ճամբուն վրայ, ինքնաշարժին անհիւր պայթած էր, ստիպուած եղած էր օգնել Համոյին, երկաթեայ ձող մը պատռած էր հագուստին փէշը, այո՛, տղան շատ լուրջ մնացած էր հետը, ո՛չ, բան մը չէր ըրած իրեն, պարզապէս շատ տաք էր օդը, ինքն ալ անօթի էր, այո՛, այո՛, շտապէր էին տուն հասնիլ, բայց անհիւր չէին կրցած շինել, ստիպուած՝ տատի-տատի քալած էին պայթած անհիւր վրայ, որովհետեւ օրը Կիրակի էր, բաց խանութ մ'իսկ չկար, ճամբաները մարդ չկար, խեղճ Համոն հոս-հոն վազեր էր, սակայն ապարդիւն, իսկ երբ Տորա հասեր էին, ճամբան Համոյին մէկ ընկերը տեսեր էին, ընկերը խոստացեր էր կէս ժամէն ինքնաշարժով վերադառնալ իրենց մօտ եւ փոխել Վէնին անհիւր, բայց ինք չէր ուզած աւելի սպասել, մօրը յաւելեալ մտահոգութիւն չպատճառելու համար եւ ուրեմն Համոյէն խնդրեր էր հասցնել զինք մինչեւ վերի թաղը, յետոյ մինակը վազելով հասեր էր տուն...

- Ուրիշ բան չեղաւ, մա՛մա...

*

* *

Համոյի բռնաբարման փորձն ու անոր հետեւող դէպքերը մինչեւ առտու սարսռացուցին աղջիկը իր անկողնին մէջ: Ոչ պահեստաւորուած ջուրով լոզանքը, ոչ ալ մօր դեղահատերու տուփէն գաղտնօրէն վերցուցած վարդագոյն թմրեցուցիչը քուն բերին անոր աչքերուն: Չարմանալիօրէն, ո՛չ լալու փափաք ունէր, ոչ ալ բարկութիւն կար մէջը, այլ՝ հոգիին մէջ կը թեւածէր անզգայութիւն մը, կարծես լլկուածներու յատուկ ինքնալքումի տարօրինակ զգացում մը, որ մերթ ընդ մերթ կը վերածուէր հոգիին խորունկ ծալքերէն բարձրացող այրող անէծքի.

- Աստուած հոգիդ առնէ, Հա՛մօ...

Յաջորդող օրերուն Համոն չերեւաց բակերը: Վերսկսաւ քանի մը օր դադար առած ոմբակոծումը: Մարօ խնդրեց մօրմէն հանգիստ ձգել զինք տունը, չքաշքշել՝ ապաստանարանները: Մայրը որքան ալ փորձեց հասկնալ իրողութիւնը, չկրցաւ ուրիշ տեսակ

ԲԱԳԻՆ

ԱՐԶԱԿ

պատասխան մը փրցնել Մարոյին բերնէն: Միշտ լսեց միեւնոյն նախադասութիւնը.

- Ուրիշ բան չեղաւ, մա՛մա...

Մայրը պատրաստ էր պատժելու մեղաւորը, եթէ Համոն էր իր աղջկան՝ անդարմանելի նկատուող մելամաղձոտութեան պատճառը, սակայն աղջիկը միշտ մնաց նոյնը: Անդրդուելի՝ իր պատասխանին մէջ: Ուրիշ բացատրութիւն չտուաւ մօրը, բայց իր հոգիէն բարձրացող անէծքը ան ամէն օր քիչ մը աւելի վճռականութեամբ կը կնէց, միաժամանակ աներկբայ հաւատքով մը փարելով Աստուծոյ անյեղի արդարութեան.

- Աստուած հոգիդ առնէ, Հա՛մօ...

*

* *

Երկրին մէջ ծայր առած քաղաքացիական կռիւներու նոր ալիք մը բնակիչներուն մոռցնել տուած էր իրենց անձնական ցաւերը, երբ լափիզող հրթիռներ Լիբանանի բոլոր կողմերէն անմեղ կեանքեր կը հնձէին օրօսն ուրեւ ժամուն, առանց քիւ ու համբանքի, առանց կրօնի, առանց սեռի ու տարիքի խտրութեան: Պուրճ Համուտը եւս զերծ չէր կացուցուներ հետզհետէ ընդարձակուող ռումբերու նոր ալիքէն: Չարիքը չունէր չափ, վայրագութիւնը՝ սահման:

Այդ օրերէն մէկն էր. անկանխատեսելի վտանգներով լեցուն յետմիջօրէ մը, երբ անակնկալօրէն հրացանաձգութեան ձայներ լսուեցան շրջանի մօտիկ մէկ վայրէն: Մարոյին սիրտը թունդ ելաւ: Դրացիները վազեցին դուրս, տղամարդիկ նետուեցան փողոց, դուռ-պատուհան ցուցափեղկերու վերածուեցան...

- Ի՞նչ եղաւ, ի՞նչ կրակոց է աս, որո՞ւ զարկին, ո՞վ մեռաւ...

Ժամ մը չանցած լուրը տարածուեցաւ ու հասաւ Մարոյի ականջին: Համոն սպաննուած էր: Աղտոտ գործերու մէջ մտած էր: Վերջերս կեղծ տղարի եւ ոսկիի մաքսանենգութեամբ կը զբաղէր: Տունը խանութի վերածելը մեծ պլըՖ մըն էր: «Մաքրած» էին զինք՝ դրամ լուալու գործով զբաղող մարդիկ...

- Մի՞թո՞ւյ մը մաքրուեցաւ մէջտեղէն,- ըսին ոմանք ու քանի մը վայրկեան ետք մոռցան եւ դէպքը, եւ Համոն:

...Այդ պահուն պատսպարան հասնիլը միակ իրական հրամայա-

ԱՐՁԱԿ

Pakine

3. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Մ Ո Ւ Փ Ր

Պարսկաստանէն նուէր ստացուած փայտեայ փոքր տուփ մը կար տան մէկ անկիւնը նետուած: Բերողը եղած էր Թեհրան ապրած, իմ չտեսած միակ մօրեղբօրս կինը, քեռկինս, որ գոնէ տարին անգամ մը Հալէպ կու գար իր ազգականները տեսնելու եւ բոլորին նման, մեզի ալ բաժին կը հանէր իր նուէրներէն, որոնք անպայման պարսկական ձեռային գործերու նմոյշներ կ'ըլլային: Օմար Խայեամին եւ իր նշանաւոր քառեակներուն ծանօթացած եմ անոնց շնորհիւ, որոնց մէջ պատուոյ տեղ ունէր պարսիկ մեծ բանաստեղծը, կնոջ ու զինքի սիրահար երգիչը:

Տուփը խճանկարազարդ էր, մանրիկ գունաւոր փայտի կոտորտանքներով գեղանկարուած, որուն դրուագները սկսած էին փրփրփրիլ ու թափթփիլ. կարգ մը տեղեր, անոնց տակէն սօսինձի հետքերու տակ, մերկացած փայտը կ'երեւէր:

Ամէն անգամ, որ պատճառով մը այդ տուփին մօտերը բան մը փնտռէի ու աչքս անոր վրայ կ'իյնար, կ'ափսոսայի որ զայն այդպէս փոշոտ, թողլքուած անտեսեր եմ, երբ վթարը դեռ նոր սկսած, թերեւս կարելի կ'ըլլար վերանորոգելով պահպանել անոր իսկական գեղեցկութիւնը:

Բայց, այսպէս չէ՞ միշտ. սկիզբը ականջ չենք կախեր, ապա բանը բանէն անցնելէ ետք, կ'անդրադառնանք մեր սխալին, կ'ափսոսանք, սակայն կը շարունակենք նոյն ձեւ վարուիլ: Ու միտքս կու գայ նախակրթարանի առաջին դասարանին մէջ մեր ուսուցչուհիին ըսածը՝ «գուլպային ծակը, երբ դեռ պզտիկ է, պէտք է կարկտնել, թէ չէ ծակը կը մեծնայ ու յետոյ կարելի չ'ըլլար զայն գոցել ...»

Հիմա, այս տուփին ալ «ծակը մեծցեր է» ու կարկտնելը՝ անհնար:

Գիտէի որ մէջը մասնաւոր բան մը չկար. մէկ երկու անգամ բացած էի ու նոյնիսկ չէի մաքրած, կամ պարունակութիւնը՝ թափած. ինչ որ տօնածառի մանր-մունր կոտրած-մոտրած զարդարանքի մնացորդներ էին, հին օրերէն «վերապրած»: Հի՛ն, գուցէ 50-60 տարուան պատմութիւն...

Յիսուն-վաթսուն տարի՞ ... արդէ՞ն ...

Ես այս անպէտք տուփին մէջ մանկութենէս յիշատակներ պահած եմ ու չէ՞մ անդրադարձած...

Կը զգամ, որ ահաւոր անարդարութիւն մը կը գործեն՝ «ան-

պետք» կոչելով տուփը, որուն մէջ մանկութիւնս, մանկութենէս պատառիկներ «զմոռուած» պահուած են... Այսինքն, մարդու ամենաթանկագին բանը ծրարուած է անարժէք պարունակի մը մէջ:

Սակայն, չէ՞ որ այս տուփն ալ ժամանակին գեղեցիկ եղած է, հրապուրիչ, նորահարսի մը պէս. իսկ եթէ տարիները իրենց անբարեբար, անողորմ հետքը ձգեր են անոր վրայ, եթէ գեղուհի հարսը դարձեր է մամիկ, խորշոմած դէմքով, իրաւունք ունի՞նք «անպէտք», կամ «անարժէք» որակելու ...

Հապա մէջիննե՞րը...

Ու կը բանամ վիրաւոր ու փոշոտ տուփը:

Մարդ երբ մեծնայ «սնանկացած վաճառական»ի նման, հին տետրակները կը բանայ ... բառը թող չվախցնէ, այո՛ «սնանկացած», հապա ի՞նչ. երբ անհետ, անվերադառնալիօրէն կորսնցուցած ես մանկութիւնդ, պատանեկութիւնդ ու երիտասարդութիւնդ, սնանկացած չե՞ս ըլլար:

Այո, կը բանաս «հին տետրակները», ծրարուած, սրտիդ կամ մտքիդ մէկ անկիւնը մթերուած յիշատակներուդ «Ալատտինի Լամբը», ու առաջին իսկ շփումէն ծուխ ու մշուշի մէջ մարմին կ'առնէ կախարդ հսկան, գրկած մոռորւած յիշատակներդ ու մոգական սուփրայի պէս, նախշուն գորգի մը վրայ կը փռէ զանոնք, քու անտեսած հարստութիւններդ, ա՛ռ, վայելէ՛, յուզուի՛ր, ուրախացի՛ր ու ... «Աւա՛ղ փառացս անցաւորի ...»:

Կը բանամ տուփին կափարիչը, անոր երկու փոքրիկ ծխնիներէն մէկուն գամերը տեղահան եղած ըլլալով, մէկ կողմի վրայ կը թեքի ու կը կախուի: Չեն ձգեր այդպէս, անմիջապէս տակը յենակ մը կը յարմարցնեն, որ միւս ծխնին ալ չքանդուի, լեզու ունենար ու խօսէր՝ «Հիմա՞, հիմա՞ միտքդ ինկաւ խնամքով վարուիլ հետս...»:

Ձգուշութեամբ դուրս կը բերեն մէկ կողմը կոտրած, կարմիր, փայլուն զարդագնդակ մը, կամացուկ մը կը դնեն մէկ կողմ, ապա ուրիշ մը՝ ոսկեգոյն. յետոյ կտոր մը արծաթագոյն երիզ, երկու ոտքերը կոտրած կաղանդ պապուկի մը գաճէ արձանիկը, հազիւ ափիս մէջ տեղաւորուող, ապա, ծունկի եկած հրեշտակ մը ու մոգ մը: Երեւի Յիսուսի ծննդեան մսուրի կազմածներ են եղած, ու արձանիկները ասիւրոս մէջ, կը թռիմ ետ-ետ ու կը ճախրեն մանկութեանս երկնակամարին վրայ:

Կը յիշեմ իսկական եղեւնին, եղեւնիի մը մէկ ճիւղը, որ որպէս տօնածառ կը բերէինք կամ շուկայէն, կամ ալ յարակից պուրակներէն ու քարերով լեցուն թիթեղի մը մէջ կը կանգնեցնէինք ես ու քոյրերս: Ու կը սկսէր Ամանորի շրջանի ամենահաճելի մեր տօնածառի զարդարումը, որուն ստորոտը անպայման մսուր մը կը սարքէինք: Քարայրին համար յաճախ սովորական, շուկայի թուղթ դեղնաւուն տոպրակները կ'օգտագործէինք, բանալով, ճմռթելով ու վրան ալ ճերմակ ու սրճագոյն կօշիկի ներկի լուծոյթ կաթեցնելով: Սպիտակը սրճագոյնին միանալով, թուղթին,- իբր թէ,- ժայռի տպաւորութիւն կու

տային, որուն խոռոչին մէջ ու շեմէն կը դասաւորէինք արձանիկները՝ նորա-
ծին Յիսուս մանուկը, Մարիամ Աստուածածինը, Յովսէփը՝ Յիսուսի հա՞յ-
րը, թե՞ Մարիամի ամուսինը, կամ նշանածը,- բան մը, որ չեմ հասկցած մին-
չեւ այսօր,- երեք մոզերը, իշուկ մը, հորթուկ մը, ոչխար մը, երբեմն ալ հրեշ-
տակ մը՝ կամ քարայրին տանիքը, կամ ալ մտորին քով ծունկի եկած:

Աժանոց բաներ էին, ամենասովորական ու ամենանախնական ձեւով
պատրաստուած, սակայն, չունեցողին համար, այս ալ անմատչելի էր: Ան-
շուշտ աւելի գեղեցիկները, Երոպայէն ներածուած, կը վաճառուէին քաղա-
քի խանութներուն մէջ, սակայն Նոր Գիղի (Հալէպի հայկական թաղամասը)
մէջ վաճառուածները այս մակարդակէն աւելի չէին: Խանութպանները զի-
տէին շրջանի բնակիչներուն գնողական կարողութիւնը ու անոնց յարմար
ապրանք կը բերէին:

Բարեբախտաբար բամպակը առատ էր: Ծառը ձիւնածածկ դարձնելու
հարցը դիւրութեամբ կը լուծուէր: Նոր Գիղի մեր տունները բամպակի մշակ-
ման գործարաններու եւ քաղաքի ճամբուն անկիւնին վրայ կը գտնուէին, ու
բամպակի հսկայ պարկերով բեռնաւորուած ձիաքարշ սայլերը երբ իրարու
ետեւէ կ'անցնէին, մայթերի ծառերու ճիւղերուն վրայ ու գետինը անպայ-
ման բամպակի խորձեր կը ձգէին, որոնք կը հաւաքուէին մեր կողմէ ու պահ կը
դրուէին կաղանդին տօնածառը զարդարելու համար: Աթոռակ մը ոտքիս
տակ, ի՜նչ հաճոյքով եղեւնիին գազաթէն սկսելով կը «ձիւնապատէի» ճիւղե-
րը:

Այդ թափթփած բամպակներէն երբեմն այնքան մը հաւաքած կ'ըլլային
մեր տղաքը, որ ծառերը զարդարելու կողքին, անոնց մայրերը մէկ երկու
բարձ ալ կը լեցնէին:

Մեր աղքատիկ, բայց այնքան սիրելի տօնածառերը երկու-երեք շաբաթ
տուններէ ներս իրենց պատուոյ տեղն ունենալէ եւ ուշադրութեան կեդրոն ըլ-
լալէ ետք, կը մերկանային ու կը նետուէին տանիք, որպէսզի ձմեռն եղանա-
կի ցուրտն ու անձրեւը, հովն ու արեւը ճաշակելէ ետք, Փետրուարին, Տեառ-
նընդառաջի երեկոյի խարոյկի վառելանիւթ դառնային ու աղեկտուր ճար-
ճատիւնով մոխրանային ... պատուաւոր մահ, առանց փողոցները նետուելու
ու աղբերուն հետ քշուելու:

Կը նային ոտքերը կոտրած կաղանդ պապուկին. այնքան խեղճուկ տեսք
ունի: Չայն կաղապարողը,- հիմա հազիւ նկատելի,- կարմիր ներկ մը քսած է
գլխարկին ու կոնակի պարկին, մնացեալը ամբողջ սպիտակ է. դէմքին զի-
ծերն ալ յստակ չեն, ցցուն մասերը մաշած ու հարթուած են, սակայն այդ ան-
դիմագիծ գաճի կտորն իսկ վեհութիւն մը ունի. մեր սիրելի կաղանդ պապան
բարութիւն կը բուրէր ու Հայաստանը հետը կը բերէր.

«Կաղանդ պապա, կաղանդ պապա,

ԲԱԳԻՆ

ԱՐԶԱԿ

Մարերու վրայէն կու գաս»...

Վարդգէս Պետրոսեանը Հալէպ այցելութեան, երբ մանկապարտէզի մը երեխաներուն հարց տուած է թէ «կաղանդ պապան ուրկէ՞ կու գայ», բոլոր երեխաները միաբերան՝ «Հայաստանէն» պոռագած են, ու «Հայկական Էսքիզներ»ու հեղինակը զարմացած է, չեմ գիտեր ինչո՞ւ, հապա ուրկէ՞ պիտի գար մեր փափաքներն ու երագները իրականացնելու կոչուած սա առասպելական ծերուկը:

Է՛հ, հիմա սա արձանիկին պէս մեր ազգի կաղանդ պապան ալ ոտքերը կորսնցուցած է երեւի, որ այլեւս չի գար, մեր դռները չի թակեր, որ սա անկատար դատին հարիւրամեակը չեղած, շալկէր բերէր մեր վաղուց երագածը՝ արդարութիւնը: Բայց, չէ՞ որ նուէրներով լեցուն պարկը դեռ ունի է: Չի կրնար գալ՝ մենք կը բերենք զինք, անթացուպէր կը դնենք անութներուն տակ, արհեստական ոտքեր կու տանք անոր. կը շալկենք, ուսամբարձ կը բերենք զինք, ու կը բանանք տոպրակը...

Գաճէ արձանիկը ափիս մէջ, կռնակս պատին յենած, ինչե՛ր կը մտածեմ... Կը զգամ որ լրիւ անջատուեր եմ ու յանկարծ դրան զանգին հետ, ընդոստ կ'ելլեմ ու կը բանամ դուռը: Աղջիկս է, գիրկը՝ իմ առաջին թռնիկս՝ Նոյը:

Ամէն ինչ ետ կը տեղադրեմ տուփին մէջ ու կը գոցեմ կափարիչը:

Այս տուփը՝ թռնիկիս եւ թռնիկներուս, եթէ յաջորդներն ալ լոյս աշխարհ գան:

Այս հնամաշ, անհրապոյր տուփի՞կը, մէջը՝ կոտորտած խաղալիքնե՞րը...

Ո՛չ, մէջը պահ դրուած իմ մանկութիւնս...

Յունիս, 2011
Հալէպ



ԱՐԶԱԿ

Pakine

ՅԱԿՈԲ ԱՐԲ. ԳԼՆՃԵԱՆ

ՄՈՒԹ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Բեռլին քաղաքի արեւմտեան մասում, «Շպանդաու» կոչուած բանտում, քառասուն տարուց ի վեր ապրում էր առեղծուածային մի մարդ, որ նախապէս էլ գրեթէ հինգ տարի արգելափակուել էր Լոնդոնի աշտարակում: Բանտի հսկիչներն ու ծառայողները իրաւունք չունէին խօսքի բռնուելու նրա հետ կամ տալու նրա իսկական անունը: Նրան պարզապէս կոչում էին «համար 7ը կալանաւորը»: Երկրորդ աշխարհամարտից յաղթական դուրս եկած չորս պետութիւններ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները, Ֆրանսիան, Անգլիան եւ Սովետական Միութիւնը, հերթական կարգով ստանձնել էին նրա հսկողութիւնը:

«Հմր. 7ը կալանաւորը» իր բանտարկութեան վերջին քսան տարիներին միակ բանտարկեալն էր այդ հսկայ բանտում, ուր կարելի էր տեղաւորել աւելի քան հինգ հարիւր հոգու: Ամիսը մի անգամ, համապատասխանաբար, դաշնակից պետութիւններից մէկը, իր նշանակած նոր պահակախմբով, գալիս էր փոխարինելու միւսին: Այդ պահակախումբը բաղկացած էր լինում մի աւագ սպայից եւ 37 զինուորներից: Դրա համար էլ շատ իրաւամբ էր ասում, որ «հմր. 7ը կալանաւորը», աշխարհի ոչ միայն ամենից մեծակ, այլեւ ամենից թանկ արժող բանտարկեալն է:

Ըստ երեւոյթին կալանաւորն իր կեանքում խոր հիասթափութիւններ ապրելով՝ դառնացել էր աշխարհից: Չէր ուզում նոյնիսկ ընդունել իր տիկնոջ եւ միակ զաւակի այցելութիւնը, որպէսզի խնայէր նրանց տեսնելու իր դժբախտ վիճակն ու իր համար սահմանաւած չափազանց նուաստացուցիչ պայմանները: Նոր միայն՝ 1969 թուականին, 28 տարիներ յետոյ իր երկակի բանտարկութիւնից, երբ ծանրօրէն հիւանդացել էր եւ կարծելով թէ շուտով պիտի մեռնի, ցանկութիւն էր յայտնել տեսնուելու իր հարազատների հետ: Այս պարագայում էլ դաշնակից պետութիւնները դրել էին խիստ պայմաններ. հարազատներն իրաւունք չունէին իրար հետ ողջագորութելու, ֆիզիկական որեւէ շփում ունենալու կամ նոյնիսկ ձեռքով բարեւելու, տեսակցութիւնը պէտք է տւէր միայ 15 րոպէ եւ ի ներկայութեան չորս յաղթական պետութիւնների ներկայացուցիչների:



ԲԱԳԻՆ

ԱՐԶԱԿ

1952 թ. երբ Մովսեսական Միության հերթն էր վարելու Շպանդաու բանտի հսկողությունը, Դեմոկրատական Գերմանիայի սոցիալիստական մորակազմ կառավարության մի քանի ներկայացուցիչներ մի գաղտնի տեսակցություն են ունենում «հմր. 7 կալանավորի» հետ եւ առաջարկում նրան բանտից դուրս բերել՝ պայմանով, որ նա համաձայնի ընդգրկուել իրենց պետական ապարատի կազմում, որպեսզի իր ունեցած տաղանդով ու փորձառությամբ օգտակար դառնայ իրենց ամրապնդելու սոցիալիզմը ամբողջ երկրում՝ հրաժարուելով միայն սոցիալիզմի այն տեսակից, որը «ցեղապաշտ» վարդապետությամբ էր կերպարանափոխում: Այս տարօրինակ եւ անակնկալ առաջարկին կալանավորը տալիս է նույնպես մի անակնկալ պատասխան. «Դուք երեւի մոռանում էք, որ ես Ֆիւրերի (Ադոլֆ Հիտլերի) տեղակալն եմ, պայքարել եմ բոլշեւիզմի դէմ, եւ այսօր, նույնիսկ նրա մահից յետոյ, ես չեմ կարող նման դաւաճանություն գործել»:

Այստեղ ընթերցողն երեւի հասկացաւ, որ «հմր. 7ր կալանավոր» նույնիմքն Հիտլերի պողպատեայ կամքով եւ նացիստական անասան հաւատքով տոգորուած փոխանորդն էր, գաղափարակիցն ու վստահելին՝ Ռուդոլֆ Ուալթեր Հէսը:

Զարմանալին այն էր սակայն, որ նացիստական Գերմանիայի ղեկավարներից շատերը, Նիւռնբերգեան դատավարության ընթացքում, մահուան դատապարտուեցին կամ քսան տարուայ ազատազրկման, մինչդեռ այս մէկը՝ Ռուդոլֆ Հէսը, որ 1941 թ. Մայիսին յատուկ առաքելությամբ, մենակ եւ յանդուգն թռիչք կատարելով, գնացել էր Անգլիա, բայց անմիջապէս ձերբակալուել ու բանտարկուել, որով գործուն մասնակցություն չէր ունեցել Հիտլերի ծաւալած պատերազմական հետագայ գործողություններին, այդուհանդերձ Նիւռնբերգում դատապարտում է ցկեանս բանտարկության:

Դէպի Անգլիա կատարած իր խիզախ թռիչքի առթիւ, որի նպատակն էր հաշտութիւն գոյացնել գերմանացիների եւ անգլիացիների միջեւ, սակայն ոչ այնքան խաղաղասիրական մի ողջամիտ սկզբունքից դրդուած, այլ որպէսզի Գերմանիան հնարաւորութիւն ունենայ իր ռազմական ողջ ուժը կենտրոնացնել մէկ ուղղութեամբ, մէկ ճակատի վրայ՝ անկաշկանդ կերպով յարձակուելու համար Մովսեսական Միության վրայ եւ փայլուն յաղթանակ ապահովելու, Հէսը գրում է Հիտլերին. «Եթէ ձախողուեն իմ առաքելութեան մէջ՝ խնդրում եմ, որ ինձ իբրեւ խենթ, անհաւասարակշիռ մարդ յայտարարէք, եւ նախաձեռնութեան ողջ պատասխանատւութիւնը իմ անձի վրայ դրէք»: Դրա համար էլ նա նախ Հիտլերի եւ ապա անգլիացիների կողմից խենթ համարուեց: Նույնիսկ Նիւռնբերգում Հէսն ինք իրեն դրսեւորեց որպէս այդպիսին, բայց քիչ ժամանակ անց նա զարմացրեց դատարանը իր յանդուգն եւ զգայնացունց ելոյթով, եզրակացնելով այսպէս.

«Որպէսզի դատարանն ինձ մտային անկարող չյայտարարի՝ տալիս եմ հետեւեալ բացատրութիւնը.- սոսկ տակտիկական նկատառումներով ձեւացնում էի, թէ տառապում եմ յիշողութեան կորստով, ինչ խօսք, որ պիտի ընդունեմ, թէ որոշ չափով նուազել է կենտրոնանալու մտային կարողութիւնս: Այսուհանդերձ հաստատում եմ, որ ես ինքս ստանձնում եմ լրիւ պատասխանատւութիւնը այն ամէնի, որ կատարել եմ կամ ստո-



ԱՐԶԱԿ

Pakine

րագրել ու վաւերացրել անձամբ կամ ուրիշների հետ միասին:

«Իմ տուած այս բացատրութիւնը ոչնչով չի փոխում իմ սկզբունքային դիրքորոշումը՝ դատարանի իրաւասութիւնից զուրկ լինելու մասին. ես ինձ չեմ ուզում պաշտպանել ինձ ամբաստանողների դէմ, որոնց երբեք իրաւունք չեմ տալիս մեղադրանքներ յարուցելու իմ կամ իմ ազգակիցների նկատմամբ: Նրանց հետ երբեք պիտի չքննարկեմ այնպիսի հարցեր, որոնք գերմանացիների ներքին հարցերն են եւ դրանով իսկ օտարներին չեմ վերաբերում:

«Երկար տարիներ իմ կեանքում աշխատել եմ ձեռքի տակ այն մեծագոյն մարդու, որի նմանը իմ ազգը երբեւիցէ չէր ծնել իր հազարամեայ պատմութեան ընթացքում: Եթէ կարողանամ իսկ, երբեք պիտի չուզենամ ջնջել այդ ժամանակահատուածն իմ գոյութիւնից: Երջանիկ եմ հաստատելու, որ ես իմ պարտականութիւնը կատարել եմ իմ ազգի հանդէպ թէ՛ որպէս գերմանացի, թէ՛ որպէս նացիոնալ-սոցիալիստ եւ թէ՛ որպէս հաւատարիմ հետեւորդ իմ Ֆիւրերի: Եթէ ինձ առիթ տրուի ծայրից սկսելու ամէն ինչ, նորից պիտի գործեմ այնպէս, ինչպէս որ գործել եմ, նոյնիսկ եթէ իմանամ, որ վերջում ինձ խարոյկի վրայ պիտի բարձրացնեն: Կը գայ այն օրը, երբ կը կանգնեմ Յաիտենականի ատեանի առաջ, Նրան է, որ ես պատասխան պիտի տամ եւ գիտեմ, որ Նա էլ ինձ անպարտ պիտի հռչակի» (այս խօսքերը քաղուած են Նիւէնբէրգեան դատավարութեան վաւերագրական տեսանկիւից):

Դատավարութեան դահլիճում զսպուած գայրոյթի ալիք է բարձրանում, ռուսները պահանջում են, որ այդ անգիղջ նացիստը մահուան դատապարտուի, սակայն միւս դաշնակիցները բաւարարում են ցմահ բանտարկութեան վճռով:

Շատերի կարծիքով՝ տրուած վճիռը Հէսի յանցագործութեան համեմատութեամբ շատ ծանր էր: Այս մասին հետագայում նոյնիսկ Անգլիայի վարչապետ W. Churchillը իր «Երկրորդ համաշխարհային պատերազմը» գրքի երրորդ մասում գրում է. «Ուրախ եմ, որ պատասխանատւութիւն չեմ ունեցել Հէսի նկատմամբ գործադրուած եւ այժմ էլ գործադրուող վերաբերմունքի առընչութեամբ: Ինչ էլ որ լինի Հիտլերի կողքին կանգնած որեւէ մի գերմանացու բարոյական մեղքը, Հէսն իմ կարծիքով արդէն քաւել է այն»: Նոյն առթիւ անգլիացի նշանաւոր պատմաբան եւ գրող A. J. P. Taylorը հաստատում է. «Հէսի նկատմամբ ունեցած մեր վերաբերմունքը՝ մի սեւ արատ է թողնում մեր պատուի վրայ» (Sunday Express, London, April 27, 1969):

Քառասուն երկար տարիներից ի վեր արգելափակուած Ռուդոլֆ Հէսը, արդէն 90ամեայ, համարեա կուրացած եւ խուլ, գտնուում էր մահուան շեմին: Նրա որդին եւ խղճի տէր բազմաթիւ անձնատրութիւններ դիմում են յաղթական պետութիւններին՝ գէթ մարդասիրական զգացումներից ելնելով՝ բանտից ազատ արձակելու նրան, բայց Սովետական իշխանութիւնը միշտ ընդդիմանում է ընթացք տալու այդ բարեգութ խնդրանքին: Արեւմտեան Գերմանիայի նախագահ Կարլ Ֆոն Վայցսէկերը, 1985 թ. Դեկտեմբերի 25ին, հեռուստացոյցով ունեցած իր ելոյթում ասում էր.

«Հէսն այսօր 90ամեայ մի ծերունի է, նա այլեւս աշխարհից ոչ մի ակնկալիք չունի:



ԲԱԳԻՆ

ԱՐԶԱԿ

Մարդկային ո՞ր զգացմունքին կամ արժանիքին կարող է գոհացում պարգևել նման մի պատժամիջոց: Հիտլերի ժամանակ գերության ասուածը գոյութիւն չունէր, իսկ այսօր...»:

Պարզում էր, որ Հիտլերի տեղակալի համար ներում գոյութիւն չունէր: Սակայն պատահեց անսպասելին. 1987 թ. Սովետական Միութեան ղեկավար Մի Գորբաչովը իր համաձայնութիւնն է յայտնում ազատութիւն շնորհելու 93ամեայ մարմնապէս քայքայուած Հէսին. օրերի հարց էր բանտից նրա դուրս գալը, բայց ճակատագրի ի՞նչ հեզմանք՝ այդ բանը նրան չի վիճակուում: Անակնկալ կերպով վրայ է հասնում նրա մահը: Բանտի հսկիչները յայտարարում են, թէ նա ինքնասպանութիւն է գործել, սակայն զարմանալի֊օրէն շտապ կերպով մէջտեղից վերացնում են դրա հետ կապուած իրեղէն բոլոր ապացոյցները՝ հրդեհելով նոյնիսկ բանտի այն բաժինը, ուր տեղի էր ունեցել դէպքը: Այնուհետեւ, մի շաբաթ յետոյ, անգլիացիների հրահանգով հիմնադրական քանդում է Շպանդաուի բանտը, որպէսզի նրանից ոչ մի հետք չմնայ եւ նեօնացիստների համար ուխտավայրի չվերածուի:

Հէսի ընտանիքը, ինչպէս նաեւ երկրորդ անգամ նրա դիակերծումը կատարած բժիշկը եւ բանտի պաշտօնեաներից ոմանք մինչեւ այսօր էլ բացարձակապէս չեն ընդունում ինքնասպանութեան տարբերակը: Նրանց համաձայն՝ Հէսին խեղդամահ են արել, վախենում էին, որ նա բանտից դուրս գալուց յետոյ, մնալով առանց հսկողութեան, կարող էր շատ գաղտնիքներ բացայայտել: Նա շատ բան գիտէր դաշնակիցներից ոմանց՝ նացիստների հետ ունեցած գաղտնի յարաբերութիւնների մասին: Ըստ Հէսի որդու՝ մինչ սովետները արգելք էին հանդիսանում իր հօր ազատ արձակուելուն, անգլիացիները պահանջում էին նրա ազատութիւնը, սակայն հենց որ Գորբաչովի կողմից վերացուեց այդ արգելքը, այս անգամ էլ ոմանք հարկ զգացին անմիջապէս այլ ձեւով վերջնականօրէն լռեցնելու նրան...: Եւ տարօրինակ է նաեւ այն հանգամանքը, որ անգլիացիների հետ Հէսի ունեցած յարաբերութիւնների արխիւը փականքի տակ է մինչեւ 2017 թ.:

Այն, ինչ որ մինչեւ հիմա գրուեց, պարզապէս նացիստական Գերմանիայի ղեկավարներից մէկի կեանքի մի հատուածի նկարագրութիւնն է, որը կարող է ընթերցողի համար հետաքրքրական լինել կամ ոչ: Անշուշտ դեռ շատ բան չի բացայայտուել այն մութ հանգամանքների եւ ուժերի մասին, որոնք իշխանութեան գլուխը բերեցին եւ ազգայնամոլութեամբ հարբեցրին գերմանացի նացիստներին: Նրանք էլ իրենց հերթին նոյնիսկ գաղտնի համաձայնագիր կնքեցին Սովետական Միութեան համայնավար պետերի հետ, լռելեայն մեղսակցութեամբ այլ պետութիւնների, իրենց մէջ բաժանելու համար արեւելեան Եւրոպան (նկատի ունենք յատկապէս արտգործնախարարներ Վիաչեսլաւ Մոլոտովի եւ Եռախիմ ֆոն Ռիբբենտրոպի միջեւ գոյացած իր յարակից գաղտնի արձանագրութիւնը, 1939 թ. Օգոստոսի 23ին Մոսկուայում, որի գոյութիւնը միայն վերջերս պաշտօնապէս ընդունեց ռուսական կառավարութիւնը): Նրանք պատճառ դարձան Երկրորդ համաշխարհային պատերազմի, որն հնձեց կեանքը համարեա 60 միլիոն մարդու, քարուքանդ արեց բազմաթիւ շէներ ու քաղաքներ, ոչնչացրեց մշակութային անփոխարինելի արժէքներ, իր ետին թողեց սուգ, տառապանք, սով եւ ատե-



ԱՐԶԱԿ

Pakine

լութին:

Այդ մութ ուժերն էին, որ 1908 թուականին Օսմանեան Կայսրութիւնում երիտթուրքերի միջոցով իշխանափոխութիւն կատարեցին, այնուհետեւ ծրագրեցին եւ իրագործեցին 20րդ դարի առաջին ցեղասպանութիւնը հայերի դէմ: Այդ միեւնոյններն էին, որ Գերմանիայում կազմակերպեցին ու քաջալերեցին նացիստներին: Օրինակի համար այնտեղ 1918 թ. ոմն կոմս Ռուդոլֆ ֆոն Մեքքոտենդորֆ (բուն անունով՝ Ռուդոլֆ Լաուեր) հիմը դրեց մի ընկերակցութեան, որ կոչուեց Thule եւ որի զինանշանն էր կեռախաչը (սվաստիկան, առնուած հինդուական եւ բուդդայական հազարամեայ աւանդոյթներից): Այդ ընկերակցութեան գործուն անդամներից էին Դիտրիխ Էկարտը, Եզիպտոսում ծնուած Ռուդոլֆ Հէսը, նրա ուսուցիչը՝ նախկին զինուորական պրոֆ. Կարլ Հաուսհոֆերը, որոնք շուտով իրենց մէջ առին նաեւ Ադոլֆ Հիտլերին: Thule ընկերակցութիւնն էր, որ 1919 թ. Յունուարին Միւնխէնում հիմնեց նացիստ գերմանացիների բանուորական կուսակցութիւնը, իսկ երբ Հիտլերը դարձաւ դրա գերագոյն ղեկավարը, Thuleի զինանշանը՝ կեռախաչը, որդեգրեց որպէս իր կուսակցութեան խորհրդանիշ, միաժամանակ Էկարտից եւ պրոֆ. Հաուսհոֆերից էլ ներշնչուեց փանգերմանական գաղափարներով, որոնցից հիմնականն էր այն, որ Գերմանիան պէտք է տարածուի դեպի արեւելք ու գրաւի իր գոյութեան համար կենսական նկատուող հողատարածքներ: Ռուդոլֆ Հէսի օգնութեամբ եւ քարտուղարութեամբ Հիտլերն իր աշխարհաքաղաքական հայացքները շարադրեց իր «Իմ պայքարը» (Mein Kampf) անունով յայտնի գրքում՝ ձօնելով այն Դիտրիխ Էկարտին:

Հետաքրքրական է իմանալ նաեւ այն, որ Thule ընկերակցութեան երկու յայտնի ղեմերը՝ Մեքքոտենդորֆը եւ Հաուսհոֆերը մի որոշ ժամանակ եղել են Թուրքիայում: Մեքքոտենդորֆն իր կրթութիւնը ստացել է այնտեղ կաբբալիստ մի հրեայ խախամի մօտ, այնուհետեւ նա 1910 թ. Կ. Պոլսում մի գաղտնի խմբակցութիւն է հիմնել՝ նպատակ ունենալով Սուֆի միստիկներին միատրել Ազատ որմնադիրների հետ: Կայ նաեւ աւելին՝ թէ՛ Մեքքոտենդորֆը եւ թէ՛ Հաուսհոֆերը պատկանել են թուրք կրօնափոխներ Սաբբաթեան կոչուած սատանայապաշտների աղանդին, որի հիմնադիրն է եղել Չմիւռնիայում ծնուած Սաբբաթայ Յվին (1626 - 1676): Մեքքոտենդորֆը նաեւ նախաձեռնողն էր երիտթուրքերի համախմբումին ու փանթուրանական շարժմանը, դրա համար էլ Գերմանիայում նրա հիմնած սատանայապաշտների Thule ընկերակցութեան մարդիկն էին, որ Բեռլինում ապաստան տուեցին հայ ժողովրդի մեծ դահիճ Թալէաթ փաշային, իսկ Էնվերին էլ նիւթապէս օգնեցին յատուկ յանձնարարութեամբ անցնելու Խորհրդային Ռուսաստան եւ Միջին Ասիա:

Ինչպէս ազգայնամոլ երիտթուրքերը, որոնք օգտագործեցին իրենց ժողովրդի մէջ դարերի ընթացքում կուտակուած հակահայ եւ ընդհանրապէս հակաքրիստոնեայ զգացումները, կատարելու համար իրենց անմարդկային ոճիրները, այնպէս էլ գերմանացի նացիստները իրենց երկրում պարարտ հող գտան մոլորեցնելու եւ կոյր ցեղապաշտութեամբ թունաւորելու զանգուածներին, որոնք դժգոհ էին յատկապէս Վերսալ-



ԲԱԳԻՆ

ԱՐԶԱԿ

եան դաշնագրով իրենց պարտադրուած քաղաքական ու տարածքային նուաստացուցիչ պայմաններից:

Այստեղ պարզ է դառնում, որ հայոց դէմ ցեղասպանութիւն կատարած երիտթուրքերն ու գերմանացի մացիստ ղեկավարներից շատերը միեւնոյն աղբիւրից են ջուր խմել: Այս իմաստով էլ կ'ուզենայի նորից անդրադառնալ արեւմտեան Բեռլինի Շպանդաու բանտի «հմր. 7ր կալանաւոր»՝ Ռուդոլֆ Հէսի հետ կապուած հետեւեալ դրուագին.

Ամերիկայի Միացեալ Նահանգների բանակի հոգեվերլուծաբաններից՝ փոխ-գնդապետ Ջոն Անդրյու Պրեստոնը (John Andrew Preston) 1952 թ. Փետրուարին յատուկ առաքելութեամբ ժամանում է Գերմանիա: Նրան թոյլատրել էին այցելել Ռուդոլֆ Հէսին, որպէսզի հոգեվերլուծաբանական մօտեցումով ուսումնասիրի մացիոնալ սոցիալիստական գաղափարախօսութեան թողած ազդեցութիւնը մարդկանց հոգեվիճակի վրայ: Գրեթէ երկու ամիս շարունակ Պրեստոնը յաճախակի հանդիպումներ է ունենում Հէսի հետ եւ ձայնագրում նրան: Հոգեվերլուծաբանի քաղաքական պատուիրատուների համար կարեւոր էր իմանալ նաեւ, թէ ովքեր են եղել Հէսի գործակիցները Անգլիայում եւ Գերմանիայից դուրս այլ երկրներում:

Իր ձեռք բերած որոշ արդիւնքների վրայ հիմնուելով՝ Պրեստոնը պատրաստում է մի գիրք, որը արգելում է հրատարակութեան յանձնել մինչեւ 1988 թ., երբ արդէն հեղինակն ու իր գրուցակիցը մահացել էին: Այդ գրքում, որ կոչւում է «Օձի շապիկները» (The Serpent's Skins, N. Y. 1988), ի շարս այլոց կայ մեզ համար մի շատ ուշագրաւ նկարագրութիւն. Պրեստոնը առնում է Հէսի համաձայնութիւնը նրան հիպնոսի ենթարկելով՝ հարցաքննելու: Այդ հիպնոսացած վիճակում նրա առաջին արտայայտութիւնը լինում է այսպէս.

«Հոգեվարքի մէջ եմ: Լրիւ խաւար է: Նուազագոյն ծպտունն անգամ չպէտք է հանեն, ոչ մի շարժում չպէտք է անեն, որպէսզի տեղս չիմանան: Գիտեմ, որ այնտեղ են եւ հաւանաբար շատ ատելի մօտ, քան կարծում եմ: Պէտք է համբերատար լինեմ եւ թողնեմ, որ նրանք գործեն առաջին սխալը...: Վախենում եմ ատելի քան երբեք, բայց հարկ է, որ ես ինքս ինձ չկորցնեմ եւ դրութեան տէր կանգնեմ, ի վերջոյ զինուած եմ, եւ խաւարն էլ, չնայած որ սարսափելի է, այդուհանդերձ իմ միակ դաշնակիցն է նրանց դէմ»:

Ըստ Պրեստոնի վկայութեան այս խօսքերն արտասանելիս՝ Հէսը շրջապատի իրականութիւնից բոլորովին անջատուած էր եւ ձայնն էլ միապաղաղ, դա մի վիճակ էր, որ լրիւ համապատասխանում էր հիպնոսացուած մարդու դրութեանը:

Հէսը լսում է իր խօսքերի ձայնագրութիւնը, որից յետոյ Պրեստոնը հարցնում է նրան.

- Պրն. Հէս, ճանաչում էք ձեր ձայնը:

- Այո, լինում է պատասխանը,- բայց մնացածը՝ ո՛չ:

- Այսինքն՝ ուզում էք ասել, թէ չէ՞ք յիշում, որ ասել էք այդ խօսքերը:

- Ո՛չ, ո՛չ, ուզում եմ ասել, թէ չգիտեմ ինչի մասին եմ խօսել, թէ ինչ է դրա նշանակութիւնը:

Յաջորդ օրը դոկտ. Պրեստոնը նորից հիպնոսացնում է Հէսին, որն այդ առթիւ



ԱՐԶԱԿ

Pakine

ասում է.

- Երբեք չէի խորհել, որ մի օր ինձ կը կարողանան առեւանգել: Թիկնապահներս ոչինչ չկարողացան անել, նրանց բոլորին էլ սպանեցին: Միշտ պատրաստ էի սրի կամ դաշոյնի թիրախ դառնալու, բայց այս մէկը աւելի վատ է, քան մահափորձը: Համարեա ամբողջութեամբ խաւար է, անդոհանքի մէջ եմ: Միակ լոյսը, որ ներս է թափանցում, գետնախորշի ծածկի ճեղքերից է գալիս, որն օրական մի անգամ են բացում, որպէսզի պարանով ուտելիք իջեցնեն ինձ համար: Գետնախորշը խոր եւ շատ նեղ մի փոս է, ներսը հազիւ կարող եմ երեք քայլ տալ ու բազուկներս տարածել:

- Նախորդ անգամ ասացիք, որ զինուած էք եւ թշնամիներ կան, իսկ հիմա մենա՞կ էք:

- Մենակ եմ եւ երանի թէ մօտս լինէր ատրճանակս:

- Ճիշդ ո՞ր էք գտնուում հիմա:

- Վստահ չգիտեմ, ինձ այստեղ բերեցին աչքերս կապուած: Նկատի ունենալով ճամբորդութեան տեսողութիւնը, պէտք է որ լինեմ քաղաքից ոչ շատ հեռու:

- Ո՞ր քաղաքի:

- Անշուշտ Էրզրումի: Քաղաքը լցուած է այդ խուժանով:

- Ո՞ւմ նկատի ունէք, հրեաների՞ն...

- Հայերին... այդ անիծեալ հայերին,- ասում է Հէսը ատամները կրճտացնելով:

- Խնդրեմ, որքան որ հնարաւոր է, ճշգրիտ կերպով ասացէք ինձ, ո՞ր տարեթիւն ենք հիմա:

- Փետրուար ամսում ենք, կարծում եմ, թէ 1894 թուականի Փետրուարի 17ն է:

- Ուրեմն գտնուում ենք Էրզրումում, 1894 թուականն է, եւ հայերն էլ ձեզ գերի են բռնել, ի՞նչ պատճառով, ո՞վ էք դուք:

- Չեմ հասկանում քո խօսքերի իմաստը: Եթէ իսկապէս ուզում ես իմանալ, թէ ո՞վ եմ ես, ասեմ՝ մէկն եմ, որ դատապարտուել է մահուան...: Հայերի ղեկավարը երկրորդ անգամ է, որ նայում է ներքեւ առաստաղի ճեղքից: Նախորդ անգամ նա իր դէմքը ծածկել էր գլխաշորով եւ յայտնել, թէ ինձ պիտի փոխանակեն իր ձերբակալուած մարդկանցից տաս հոգու հետ, իսկ այս անգամ նրա դէմքը բաց է եւ ժպտում է: Դրա նշանակութիւնը ինձ համար շատ պարզ է. նա եկել է ինձ սպաննելու:

- Հիմա, ուրեմն, գտնուում ենք Թուրքիայում: 1894 թուականն է: Ձեզ առեւանգեցին Փետրուարի 17ին, որքա՞ն ժամանակ է անցել այդ օրուանից:

- Չգիտեմ, կորցրել եմ ժամանակի ըմբռնումը: Յամենայն դէպս շատ օրեր են անցել:

- Այստեղ Հէսն սկսում է քրտնել եւ ցոյց է տալիս մի յարաճուն սարսափ:

- Ո՞վ էք դուք ի վերջոյ, մի թուրք քաղաքական գործի՞չ, մի զինուորական...:

- Ես գնդապետ Մուսալ Կումայէքն եմ, Էրզրում քաղաքի ոստիկանապետը...: Յոյս ունէի, որ իմ վերադասները պիտի վճարէին իմ փրկագինը, որը չնչին մի բան էր՝ պարզապէս ազատ արձակումը ընդամենը մի քանի քրջոտ հայերի, որից յետոյ ես դրանց դասը կը տայի...: Հիմա միայն սպասում եմ, որ վերետու գտնուող այդ անիծեալ հայը



ԲԱԳԻՆ

ԱՐԶԱԿ

վերջ տայ իր քննիծադին եւ մի գնդակով աւարտի ամէն ինչ, բայց ահաւասիկ նա հեռանում է: Աղմուկ եմ լսում ... մի ծանր բան քարշ են տալիս եւ բերում ու դնում իմ գետնախուցի ծածկի վրայ: Այլեւս այնտեղից լոյս չի մտնում, մթութիւնը համատարած է, ինձ լքում են մեռնելու այստեղ սոված ու ծարաւ...:

Մտուզելու համար, թէ իսկապէս գոյութիւն ունեցե՞լ է գնդապետ Մուսալ Կումայէքը, Պրեստոնը դիմում է Թուրքիայի ներքին գործերի նախարարութեանը: Այնտեղից գրաւոր հաստատում են, թէ Օսմանեան կայսրութիւնում ապրել է այդ անունով մի զինուորական: Ըստ տեղեկութեան՝ նա ծնունդ է Ձմիւռնիայում 1843 թ., յայտնի է եղել Էրզրումի մէջ 1894 թ. հայ ազգաբնակչութեան դէմ իր կատարած դաժանութիւններով: Ի վերջոյ, այդ միեւնոյն տարւոյ Փետրուարի 17ն, հայ վրիժառուներին յաջողուել է առեւանգել նրան: Ապրիլի 19ին, թուրքական իշխանութիւնները կտրականապէս մերժել են վճարել նրա համար պահանջուած փրկագինը, որն էր՝ մի խումբ բանտարկուած հայերի ազատ արձակումը: Դրանից յետոյ նրա մասին ոչինչ չի իմացուել, ոչ իսկ գտնուել է նրա դիակը:

Պրեստոնը եզրակացնում է.

Մէկը, որ ամբողջովին զրկւում է ջրից ու սննդից, ամենաշատը կարող է այդ վիճակում դիմանալ հնգից մինչեւ տաս օր: Ըստ այսմ, կարելի է ենթադրել, թէ թուրք գնդապետը մահացած պէտք է լինի 1894 թ. Ապրիլի 26ին. դա էլ հենց Ռուդոլֆ Հէսի ծննդեան թուականն է»:

Յարդ նկարագրուածը վիպականացուած մի շարադրանք չէ, այլ փաստացի եւ արտասովոր մի դրուագ Ռուդոլֆ Հէսի կեանքից, որը կարօտ է վերլուծումի կամ պարզաբանման: Դժուար է ասել, թէ գերմանացի նացիստը վերամարմնաւորումն է եղել թուրք անողորմ գնդապետի, նման բանի չի հաւատացել ոչ հոգեվերլուծաբան Պրեստոնը եւ ոչ էլ հենց ինքը՝ Հէսը: Դէպքերի ժամանակագրութիւնն էլ այնքան ճիշդ չի կարող լինել, քանի որ հայկական աղբիւրների համաձայն (տե՛ս Մ. Օրմանեան, հատոր) Էրզրումում աննշտ հայերի ձերբակալութիւնը վերետում նշուած թուականից մի քանի տարի առաջ է տեղի ունեցել: Այստեղ, սակայն, մի բան շատ հաւանական է, որ ինչպէս Նիւռնբերգեան դատավարութեան ընթացքում Հէսն սկզբում հոյակապ թատրոն է խաղացել ինքն իրեն խելագարի տեղ դնելով, այստեղ էլ հնարաւոր է, որ նա խաբել է ամերիկացի հոգեվերլուծաբանին: Ծիծաղել է ներքուստ թէ՛ նրա եւ թէ՛ աշխարհի վրայ: Դա մեծ հիասթափութիւններ ապրած եւ դիւանագիտական խաղերի ծուղակն ընկած մարդու ծաղրն էր: Անհաւանական չէ կարծել նաեւ, որ նրա ենթագիտակցութեան մէջ արդէն դրոշմուած է եղել Էրզրումի հայերի մասին լսած մի նկարագրութիւն:

Բայց որտեղի՞ց գիտեր Հէսը Էրզրում քաղաքի (հայկ. Կարին) դէպքերի եւ ընդհանրապէս հայերի մասին: Պրպտումները մեզ այն եզրակացութեան են յանգեցնում, որ նա դրանց մասին իմացած կը լինէր իր գաղափարակից ընկերոջ կողմից, որ կոչւում էր Մաքս Էրվին ֆոն Շոյքներ Ռիխտեր: Առաջին աշխարհամարտում նա եղել էր Գերմանիայի փոխ-հիւպատոսը Էրզրումում, վստահելին ու մտերիմը թուրքերի, ինչպէս նաեւ



ԱՐԶԱԿ

Pakine

ականատես վկան այդ քաղաքի խաղաղ հայ ազգաբնակչության սոսկալի կոտորածի ու տեղահանության, որի մասին նա բազմաթիվ հեռագրեր է յղել Կ. Պոլսի գերմանական դեսպանատուն, որոնք ապագայում հրատարակուեցին Paul Leverkuehի գրքում (տե՛ս El eterno centinela, Bs. As., 2004): Ֆոն Շոյբներ Ռիխտերը զոհուեց 1923 թ. Հիտլերի ձեռնարկած իշխանափոխության ձախող փորձի ժամանակ՝ փրկելով նրա կեանքը եւ այդպիսով դառնալով նացիստների գերազանցօրէն մեծար- ւած հերոսներից մէկը:

Ինչ էլ որ լինի իրականությունը, մեզ համար մի բան է պարզ եւ երբեք կասկածի տեղիք չի տալիս, այն, որ գերմանացի նացիստները կամ նրանց ետեւում կանգնած մութ ուժերը իրենց կիրարկած գազանությունների ու նախաճիւղների տեսակետից լրիւ ընդօրինակել էին երիտթուրքական պետության ոճրագործ ղեկավարներին: Մարդկային անմեղ զանգուածներին չարչարելու եւ ոչնչացնելու մեթոտները համարեա նոյնն էին, կոյր մոլեռանդությունն ու վայրենիությունը միեւնոյն աստիճանի վրայ էին գտնուում, հետեւաբար, այս առումով չպէտք է զարմանալ եթէ ասուի, թէ Հիտլերը, Հեսն ու իր նմանները թուրքերի իսկական վերամարմնաւորումն էին, նրանց դիւային ոգու հարազատ կրողն ու ժառանգորդը: Եթէ ճիշդ է, որ Հեսն իր ծնուած օրը նոր մահացած թուրք վայրենաբարոյ գնդապետի զարշէլի հոգին է ստացել իր մէջ, ուրեմն այս պարագան կը գայ առաւել եւս հաստատելու մեր ասածը:

Այստեղ պատշաճ ենք համարում յիշել նաեւ հայ բեմի նորօրեայ մեծ վարպետ Վարդան Պետրոսեանի դիպուկ արտայայտութիւնը նացիստական Գերմանիայի առաջնորդի՝ Հիտլերի մասին. «Խելքը՝ գերմանացու, խասիաթը՝ թուրքի», այսինքն գերմանացու խելքին միացած է թուրքական բնաւորութիւնը, որն է մոլեռանդութիւն, անգթութիւն եւ ջարդելու ու քանդելու նկարագիր:

Ինչպէս երեւում է, դիւահարուած ու ոճրագործ հոգիները կամ այս աշխարհի մութ ուժերը շողկապուած են իրար, նրանք ամբողջացնում են միմեանց եւ յաճախ գործելու ազատ ասպարէզ են գտնում, բայց, բարեբախտաբար, նրանց ողբալի կործանումն էլ վաղ թէ ուշ անխուսափելի է, ինչպէս որ շատ անգամ ենք տեսնում մարդկային պատմութեան մէջ:

Մինչ այդ սակայն հարկ է աշաւորջ լինել եւ երբեք ընթացք չտալ դիւանագիտական այն դիւային խաղերին, որոնք մութ հաշիւներ ու տնտեսական մենաշնորհներ ապահովելու իրենց մոլուցքի մէջ, բազմաթիւ աղէտներ են կուտակում ազգերի ու պետութիւնների գլխին, առաջին հերթին անշուշտ՝ կաշառելով ու բարոյապէս փճացնելով մի երկրի աշխարհական ու հոգեւոր ղեկավարներին, որոնց նողկալի նմոյշներին, դժբախտաբար, յաճախ ենք հանդիպում մեր առօրեայ կեանքում:

Մօնթէվիտէօ-Ուրուկուայ



ԲԱԳԻՆ

ԱՐՁԱԿ

Յ. ՊԱՆԵԱՆ

ՊԵԱԹՐԻՔՍ ԿՌՈՒՆՏ, ՈՐ BLUE-GREEN ԱՉՔԵՐ ՈՒՆԷՐ



4

Անձրեւ եւ հեղեղ: Լոս Անճելլեսի փողոցներում համար հագուադէպ երեւոյթ էր գետ դառնալ: Շահէ Օհանեան մոյնիսկ մտածեց յետաձգել իր Լոնտոն ճամբորդութիւնը: Բայց Պրիքիշ Էրուէյզի պատասխանատուները պիտի չուզէին իրենց քանի մը հարիւր ճամբորդներուն կեանքը վտանգել եթէ կլիմայական պայմանները սպառնական ըլլային, կը ջնջէին կամ կը յետաձգէին թռիչքը: Այս եղաւ մաւել խօսակցութեան միւր զինք օղակայան տանող զարմիկին՝ Միսաքի հետ, որ իր գործընկերն էր: Հաշուապահական ընկերութիւն մը հիմնած էին երկուքով եւ այժմ իրենց Լոս Անճելլեսի եւ Լոնտոնի գրասենեակներուն մէջ կ'աշխատէին շուրջ հարիւր անձեր:

Անձրեւը կը տեղար ուժգնութեամբ, գրեթէ անթափանց վարագոյրի պէս կը խափանէր տեսողութեան դաշտը, գումարուելով իրիկնացող օրուան:

- Ամառը՝ հրդեհ, ձմեռը՝ հեղեղ: Եւ տեւեքար սպաստող երկրաշարժ: Քաղաքական կոչում ած անապահովութենէ փախանք, ինկանք կլիմայական անապահովութեան մէջ, մենախօսեց Շահէ:



ԱՐԶԱԿ

Pakine

Ալեյի քան ժամն մը ի վեր օդակայանի ճամբան էին: Շահէ շարունակեց իր տրտունջը:

- Այս ճամբորդութիւնները զգուելի դարձան: Ժամ մը պէտք է օդակայան հասնելու համար, հոն պէտք է հասնիլ երեք ժամ առաջ: Այս հեղեղներն ալ՝ աղ-պղպեղ:

- Դեռ չվարժուեցա՞ր, ըսաւ Միսաք, ուշադրութեամբ հետեւելով արդէն խճողուած ճամբուն վրայ ինքնաշարժներու դանդաղութեամբ յառաջացող շարանին:

- Ալ նախկինը չեմ: Առաջ կը վազէի, յոգնութիւն չէի զգար: Տարիները կը խօսին: Այս սկսող ձմեռն օրերուն Լոնտոնն ալ անհրապոյր եւ անլոյս քաղաք մը կը դառնայ: Երբ Լիբանան էինք այս վազքը չկար, կեանք կար:

Արդէն քայլ առ քայլ կը յառաջանային: Վերջապէս ճամբուն եզերքը երեսաց Պրիթիշ Էր-ուէյզի ցուցանակը: Կանգ առած ինքնաշարժներու կողքին տեղ մը գտաւ Միսաք, Շահէ իջաւ կառքէն, առաւ իր ճամբորդի պայուսակը, ըսաւ որ երբ հասնի կը հեռաձայնէ, վազելով մտաւ օդակայանի սրահը, ուր խայտաբղետ ամբոյս մը իրարանցումի մէջ էր: Միթէ՞ այսքան կանուխ կը մեկնին արձակուրդի, մտածեց: Մտաւ շարքի: Պիտի սպասէր: Դամբորդները մաղէ կ'անցնէին, արդէն տասը տարի առաջ տեղի ունեցած ահաբեկչութեան սարսափի որպէս հետեւանք: Նիւ Եորքի երկուորեակ աշտարակներու փլուզման հոգեկան ցնցումը դեռ կը տեսէր:

Հոսանքին հետ ինք ալ հասաւ ճամբորդական տոմսը քննող պաշտօնեային առջեւ, խառնածին կին մը, անգամ մը նայեցաւ տոմսին, անգամ մը՝ անցագրին, անգամ մը՝ իր երեսին: Տուաւ օդանաւ մուտքի տոմսը: Ըսաւ որ պէտք է միանայ հերթի սպասողներուն, որպէսզի իր պայուսակը յանձնէ: Շահէ արդէն սկսած էր ընդարմանալ, մեքենաբար կը հետեւէր միւսներուն: Երբեմն ժամացոյցին կը նայէր: Յանձնեց պայուսակը, անցաւ ապահովութեան պաշտօնեային առջեւէն, որ քննեց իր անցագիրը, երկու անգամ կարդաց գրուածը: Շահէ գիտէր թէ ինչու այդ կ'ընէր. անցագրին մէջ կար իր ծննդավայր երկրին՝ Լիբանանի անունը: Իր թոքապանակի եւ համակարգիչի պայուսակները անցան ելեքտրական սարքի մը մէջէն, հանեց կօշիկը, բաճկոնը եւ գօտին: Վերջապէս ներսն էր, սպասման սրահը, որ հսկայ շուկայ մըն էր, դատապարտուած էր ալեյի քան երկու ժամ թափառելու, ուր, իրեն պէս անհամար ճամբորդներ սպասելու դատապարտուած էին, սպաննելու համար ժամանակը կը շրջէին, կը գնէին ծխախոտ, ոգելից ըմպելիներ, անուշախոտ:

Նայեցաւ իր տոմսին: Մուտքի դուռը 21 էր: Գնաց հոն, տեղ մը գտաւ, փորձեց աչքերը գոցել: Բայց այնքա՛ն աղմուկ կար... Այս սպասման պահերուն յաճախ հայերէն խօսողներու կը հանդիպէր: Նայեցաւ չորս դին: Հայերէն խօսող չկար, հայու դիմագիծով մարդ ալ չկար: Կարդաց յայտարարութիւնները՝ որոնք կը զգուշացնէին վերջին համաճարակէն, թելադրելով ձեռքերը լուալ, թաշկինակ բռնել բերանին առջեւ հազալու եւ յօրանջելու պարագային: Կը յիշեցնէին, որ արգիլուած է լուսանկարել: Ազատութիւններու երկրին մէջ բազմապատկուող արգելքներ, մտածեց Շահէ:

Որքա՛ն դանդաղ կ'ընթանար ժամանակը: Կը դիտէր շուրջը: Ինչե՛ր շալկած էին մարդիկ. թաւ ջութակ, Աւստրալիոյ բնիկներու երկար փողով նուագարանը՝ **տիժիթիտուն**, խոշոր պուպրիկներ...:

Վերջապէս սկսան քննել տոմսերը եւ անցագիրները կրկին, ու ճամբորդները դրկել օդանաւ: Անցան հաշմանդամները, իրենց կառքերով՝ մայրերը՝ իրենց գիրկի երեխաներով: Ան-



ԲԱԳԻՆ

ԱՐԶԱԿ

ցաւ ինք ալ, քալեց միջանցքով, փնտռեց իր աթոռը, պատուհանին քով, տեղաւորուեցաւ: Դուրսը հեղեղային անձրեւը կը շարունակուէր եւ հազարաւոր մատներու աղմուկով կը հարուածէր օդանաւի մետաղեայ մարմինը, ճամբորդները իրենց տեղաւորուելու արտօրանքին մէջ չէին տեսներ մոլեգնած երկինքը:

*
* *

Շահէ տեղաւորուեցաւ: Օդանաւ մուտքին առած թերթը բացաւ, կարդաց վերտառութիւնները, որոնք կը վկայէին միջազգային ժողովներու, նախագահի այցելութեան կամ յայտարարութեան մասին: Կրկին ռումբեր պայթած էին, մեռելներ կային, վիրաւորներ, սովորական լուր, քանի որ յաջորդ օր, անկէ ետք ալ նոյնը պիտի գրէին: Երեկոյեան հեռատեսիլի պզտիկ կամ մեծ պատուհանէն նոյն բաները պիտի կրկնէին, պատկերներու ընկերակցութեամբ:

Անորոշ տարիքով կին մը կանգնեցաւ իր կողքի աթոռին առջեւ, տեղաւորեց իր պայուսակը: Բարձրահասակ ու կարշնդ կին մըն էր, տպաւորիչ դիմագիծով: Շահէ պահ մը դիտեց անոր յորդող կտրծքը, բարակ շապիկին տակէն: Պայուսակը տեղաւորելու պահուն անոր վերնաշապիկը բարձրացած էր ցուցադրելով պորտը եւ անկէ վեր... Երբ նոր եկած էր այս երկիրը, աչքը չէր հեռացներ նման տեսարանէ, հիմա այնքան սովորական էին այդ տեսարանները:

Արդէն գիշեր էր: Առաւօտեան պիտի հասնէին Լոնտոն: Շահէ դժգոհ չէր, քանի որ պիտի քնանար եւ անմիջապէս գրասենեակ պիտի երթար: Բարձրախօսէն յայտարարեցին որ հարկ էր նստիլ, ամրացնել զօտիները, շտկել աթոռները: Ըսին որ թռիչքը պիտի տւեր տասնմէկ ժամ եւ երեսուն վայրկեան: Յայտարարեցին օդաչուին անունը: Չես գիտեր ինչո՞ւ այդ կ'ընեն, մտածեց Շահէ: Միջանցքներուն մէջ կ'երթեւեկէին միայն նաժիշտները, կը գոցէին պահարաններու փեղկերը: Օդաչուն հրահանգեց հեռացնել օդանաւին միացած մուտքի սարքերը, փակել դռները: Օդանաւը թեթեւ շարժում մը ունեցաւ, կը վերցնէին անշարժացնող արգելակները: Դասական, կրկնուող ընթացք, այդ բոլորի կրկնութիւնը գիտէր իր յաճախակի ճամբորդութիւններու բերումով: Բարձր դրաւ ծոծրակին տակ եւ փակեց աչքերը: «Եթէ քնանամ շուտ կը հասնիմ», մտածեց Շահէ:

Կողքի աթոռին վրայ տեղաւորուելու շարժումներուն հետեւեցաւ քնանալ փորձելով հանդերձ: Վերջապէս օդանաւը սկսաւ վազել լուսւորուած հարթակին վրայ: Պահ մը կանգ առաւ, եւ ապա ուժգին թափով վերսկսաւ վազքը եւ քիչ ետք կը բարձրանար, մութ ամպերուն մէջ: Երբ գտած էր իր բնական ընթացքը, աստղազարդ երկինք մը կը պարզուէր, իսկ հաստ ամպերը մնացած էին վարը:

Շահէ մտածեց որ հիմա կիներ եւ զաւակները տունը նստած էին հեռատեսիլին առջեւ: Թերեւս կիներ խոհանոցն էր: Անձրեւը կը շարունակուէր, թէ կանգ առած էր: Միսաք տուն հասած էր: Բացաւ հեռատեսիլի պզտիկ պաստառը, հետեւելու համար օդանաւի թռիչքի ուղիին՝ քաղաքներու անուններ, գետերու գիծեր, ովկիանոս, երբեմն կղզիներ: Փոքրիկ պատուհանէն երեւցող անտեսանելի անհունութեան բացատրութիւնը, որ կը կրկնուէր ամէն ան-



ԱՐԶԱԿ

Pakine

զամ որ ճամբորդէր: Բայց կը դիտէր, թմրութիւն պատճառող հետաքրքրութեամբ: Տեսարար կը նայէր թէ դեռ քանի ժամ մնացած էր հասնելու համար, ինչ էր արագութիւնը օդանաւին: Ուրիշ բան մտածելու անկարող էր: Չանձրոյթի թանձրացած վիճակ:

Սովորական էր, տասը կամ տասնըմէկ ժամերը այդպէս պիտի անցնէին, ընդմիջուած ճաշի սպասարկութեամբ, ուր ամէն բան մանրացուած էր, հացը եւ գինին, միսի կտորը եւ պանիրը, հանքային ջուրի շիշը եւ բաժակը: Յանկարծ, անսպասելիօրէն, կողքի կինը երկու բարձիկներ տուաւ իրեն:

- Պատուիս համար կողմը դիր եւ գլուխդ հանգչեցուր, ըսաւ ան:

Անգլերէնը կը խօսէր օտարականի շեշտով:

Շահէ առաւ բարձիկները, քաղաքավարութեան համար: Ըսաւ՝

- Լաւ, շնորհակալ եմ:

Բայց կինը շարունակեց, զարմանալի բնականութեամբ.

- Ես ալ կ'ուզեմ քմանալ ուսիդ վրայ, անքուն եմ, այդպէս հանգիստ կ'ըլլամ:

Շահէ մեքենաբար հագիւ համամտութիւն յայտնած էր, կինը անմիջապէս գլուխը հանգչեցուց իր ուսին, տեղաւորուեցաւ:

- Ո՞ւր կ'երթաք, հարցուց Շահէ:

- Ամսթերտամ, ըսաւ կինը:

- Ի՞նչ գործով կը զբաղիք:

- Նաւթային ընկերութիւններով, նաւթահորերով, հայրս մասնագէտ է, նաւթահորեր կը փնտռենք:

Ինք ալ չհասկցաւ թէ ինչո՞ւ, Շահէ հարցուց.

- Լիբանանցի՞ եք:

- Ոչ, նորվեկիացի:

Շահէի հետաքրքրութիւնը կը բազմապատկուէր: Բայց կինը քիչ մըն ալ տեղաւորուեցաւ, քնանալու պատրաստուողի պէս.

- Կրնաս դուն ուսս բռնել որ հանգիստ ընես, թեղ հանգիստ կ'ընէ, ըսաւ ան:

Շահէ ժամանակ չունեցաւ անունը հարցնելու: Մտածեց որ դեռ գիշերը երկար էր, կը ծանօթանար:

Օդանաւի սեւ ծածկոցով մը պաշտպանուած էր կինը, եւ արդէն տուն-տեղ եղած, աչքերը զոցած էր եւ կարծէք կը քնանար: Կը քնանա՞ր: Շահէ ժամանակ չէր ունեցած տեսնելու անոր դէմքը: Անբնական կերպով համարձակ էր, թէ իրապէս յոգնած: Խօսակցութիւնը եղած էր գրեթէ հեռագրական: Կինը կը քնանար կամ կը փորձէր ամենայն խաղաղութեամբ քնանալ: Շահէ հաճելի ջերմութիւն կը զգար, որ կը հակադրուէր օդանաւի ներսի պաղին: Խա՞ղ էր: Կինը քիչ մը աւելի տեղաւորուեցաւ եւ Շահէ զգաց անոր փարթամ կուրծքին շնչառութիւնը: Չգաց որ ինք ալ անձնատուր կ'ըլլար այս անակնկալ, քիչ մըն ալ անհետք խաղին: Ուսը աւելի քաշեց դէպի իրեն, կինը ոչ մէկ ընդդիմութիւն ցուցաբերեց: Դեղին ներկուած մազերէն կը տարածուէր քիմիական նիւթերու բարկ հոտ մը: Մեկնումէն անմիջապէս առաջ վարսայարդարին զացած ըլլալու էր:

Շահէ մտածեց որ ինքզինք լաւ կը զգար իր վրայ փլած այդ անասնական ջերմութեամբ, որ կը մոռցնէր քաղաքի հեղեղը եւ կաշուն խոնաւութիւնը, զրգիռ կու տար ճամբորդութեան



ԲԱԳԻՆ

ԱՐԶԱԿ

միօրինակութեան:

Օդանաւին մէջ շատեր կը քնանային: Ոչ ոք ուշադրութիւն կ'ընէր իրենց: Մարդիկ ինչպէս պիտի գիտնային որ քիչ առաջ անձանօթներ էին, հիմա ալ անձանօթներ էին, բայց զիրկ զիրկի: Շահէ իր կուրծքին վրայ քնացող կնոջ անունն անգամ չէր գիտեր, բայց ծածկոցին տակ իր արտաբերումն մէջ առած էր անոր մերկ տաք ուսը: Զիստը կը հպէր իրեն: Սկսաւ մտածել որ այս կինը ցանկայարոյց էր: Այրն էր, որ կ'արթննար իր մէջ, տիրանալու վարակիչ փափաք ունեցաւ: Իր կարգին, ինք ալ հակեցաւ կնոջ վրայ, հանգչելու դիրքով, առանց ընդդիմութեան հանդիպելու: Իր միւս ձեռքը դրաւ անոր խոստմնալից կուրծքին, շապիկի քակուած կոճակին կողքով սահեցան մատները, շօշափեցին ճեղքը: Կինը բռնեց իր ձեռքը, սեղմեց, բայց կասեցուց անոր յառաջխաղացքը: Այդպէս մնացին:

Կինը կը մրափէր, իսկ Շահէ չէր կրնար քնանալ, հակառակ ջերմութեան մը առթած ընդարմացման: Կը մտածէր սկիզբ չունեցող այս կատակի նմանող արկածախնդրութեան աւարտի մասին: Տասը ժամ ետք երբ հասնէին Լոնտոն, ինչ պիտի պատահէր:

Օդանաւը կը շարունակէր իր ընթացքը լռութեան մէջ: Շատեր կը քնանային: Շահէ ինք ալ կ'ուզէր քնանալ, սակայն յուլօրէն իրեն յանձնուած այդ անձանօթ կնոջ հպումը, իր արտաբերումն մէջ անոր ջերմ միւս, զինք արթուն կը պահէին: Ափը կը սահէր անոր կռնակի մերկութեան վրայ: Այդ մերկութիւնը չկորսնցնելու հօգի ցանկութեամբ, աւելին ունենալու յանդուրժանութիւն ունէր հիմա: Մեղսակից գոհունակութիւն մը կար, որ կը տեսէր:

Օդանաւը լուսաւորուեցաւ, նաժիշտները ճաշ պիտի սպասարկէին: Բերին ճաշացուցակը: Շահէ մեղմօրէն արթնցուց կինը: Բաժակ մը նարինջի հիւթ առին: Կինը ընտրեց ձուածեղը, իսկ Շահէ ոչինչ ուզեց:

- Չձանօթացանք, ըսաւ Շահէ: Իմ անունս Շահէ է, իսկ ինչպէս է ձեր անունը:
- Պէտքը ի՞նչ, ըսաւ կինը:
- Թագուհիին պէս, ըսաւ Շահէ:

Նաժիշտները կ'երթնէին նեղ անցքին մէջ: Շահէ կ'ուզէր տեսնել կնոջ դէմքը, բայց այդ լոյսով եւ այդ դիրքով շատ բան չէր տեսներ: Ինք ալ զարմացաւ իր համարձակութեան, երբ հարցուց, դառնալով դէպի կինը.

- Ի՞նչ է աչքերուդ գոյնը:

- Կապոյտ-կանաչ, ըսաւ ան, մեքենաբար, ինչպէս պիտի պաստասխանէր անցագիր ստուգող պաշտօնէային:

Բերին ճաշի արտաբերում: Կինը հագիւ համտեսեց: Չշարունակեց: Քանի մը վայրկեան ետք վերստին տեղաւորուեցաւ Շահէի ուսին վրայ եւ փակեց աչքերը, իր ծածկուած մերկ ուսը եւ կռնակը յանձնելով Շահէի արմին, միւս ձեռքը բռնած կուրծքին վրայ, ճիշդ հոն, ուր կը սկսէին կուրծքի ծաւալները, տաք ու թաշային:

Թռիչքը կը շարունակուէր եւ օդանաւի քանի մը հարիւր ճամբորդները կը մրափէին, եթէ լուացարան չերթային: Վերջապէս, օդաչուն քանի մը լեզուներով յայտարարեց որ սկսած էր էջքը, հարկ էր նստիլ, ամրացնել գօտիները: Կինը աչքերը շփեց, շտկուեցաւ, ոչինչ պատահածի պէս պայուսակէն հանեց սրուակ մը եւ սպիտակ օժանելիք մը քսեց շրթներուն: Անլոյսով կ'իմաստէր մութ տարածութիւնները աւարտած էին եւ կ'երեւային խումբ առ խումբ լոյսեր, քաղաքներ, գիւղեր: Նստեցան նաեւ նաժիշտները: Օդանաւի անիւները արդէն սկսան





ԱՐՁԱԿ

Pakine

թաւալիլ գետնին վրայ:

Շահէ յայտնեց որ երկու ամիսէն կը վերադառնար Լոս Անճելըս: Իրարու պիտի հանդիպէի՞ն կրկին: Կինը պայուսակէն հանեց թուղթի պզտիկ էջ մը, գրեց իր անունը եւ հեռաձայնի համարը. «Պէաթրիքս Կրունտ. 818 542..., Պեվերլի...»:

Երբ օդանաւը կանգ առաւ, Պէաթրիքս անմիջապէս պահարանէն իջեցուց իր պայուսակը, փութկոտութեամբ ուղղուեցաւ դէպի ելքը, առանց ետեւ դառնալու: Առանց հրաժեշտի որեւէ արտայայտութեան: Շահէ վերջին անգամ տեսաւ Պէաթրիքսը երբ փութով պայուսակները կ'առնէր:

Շահէ դանդաղօրէն քաշեց իր պայուսակը, անցաւ մաքսատան պաշտօնեային առջեւէն: Դրան առջեւ զինք կը սպասէր ընկերութեան Լոնտոնի գործակատար հնդիկը: Գիշերային տարօրինակ իրականութեան եւ երեւակայութեան միջեւ տեղ մը գտնուող արկածախնդրութիւնը աւարտած էր, եւ ստիպուած էր, քիչ ետք, փոքրացած աչքերով, թիւերու եւ թուանշաններու խնդիրներով զբաղելու: Այդ աշխարհը տեղ չունէր զգայնութիւններու եւ երեւակայութեան համար:

Եթէ Միսաքին պատմէր, ան պիտի հաւատա՞ր: Իսկ ինք, երկու ամիս ետք, պիտի հեռաձայնէ՞ր այդ ծանօթ-անծանօթ Պեվերլի բնակող նորվեկիացի Պէաթրիքսին, որ ունէր կապոյտ-կանաչ աչքեր, ինչպէս ըսած էր, գորս ինք չէր տեսած, բայց կ'երեւակայէր եւ կը գումարէր թաւշային մորթէն հոսած զգայնութիւններուն վրայ: Թէեւ դեռ կը յամենար իր ափերուն մէջ կնոջ անասնային անսեթեւեթ ջերմութիւնը:

Ժամ մը ետք քաղաքի կեդրոնը գտնուող իրենց գրասենեակներու շէնքին առջեւ էր: Վերելակը մտաւ եւ բարձրացաւ վեցերորդ յարկ, ուր արդէն պաշտօնեաները թոթաժրարներ բացած էին, նստած էին համակարգիչներու առջեւ:

Հիմա Պէաթրիքս Ամսթերտամ հասած ըլլալու էր: Յետո՞յ: Ինչո՞ւ կը հետաքրքրուէր այդ կէս օր առաջ դեռ անծանօթ Պէաթրիքսով, որ, ինչպէս ըսած էր, կապոյտ-կանաչ աչքեր ունէր...

Յաջորդող երկու շաբաթներու ընթացքին Շահէ միշտ կը մտածէր Պէաթրիքսի մասին: Վերադարձա՞ծ էր, չէ՞ր վերադարձած: Պատահածը ճամբորդի թեթեւ կշռող արկածախնդրութիւն էր թէ այլ բան:

Տօնական օրերուն Շահէ վերադարձած էր Լոս Անճելըս:

Չհեռաձայնեց Պէաթրիքս Կռունտին, որուն մարմնին ջերմութիւնը դեռ կը զգար ափին մէջ, որ կապոյտ-կանաչ աչքեր ունէր:

Հեռաձայնելու եւ Պէաթրիքս Կռունտին հանդիպելու ցանկութիւնը միշտ վառ էր:

19 Դեկտեմբեր, 2009



ԲԱԳԻՆ

ԻՄԱՑԱԿԱՆ ՇԱՐՇՈՒՄ

ՄԱՐԳՕ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՏԵՍԻԼՔԸ ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԵԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ



Էրգրի պատկերը վառ պահել, տեսիլքի ուժով մարդկանց վերադարձնել «գաղթած», մարմինները լքած հոգիները. հոգու գաղթը, ըստ Գալշոյեանի՝ առաջինը վտանգալոր, քան էրգրի գաղթը:

Մ. Յ.

Իբրեւ սկիզբ: Տեսիլքը գրականության մեջ տազնապի նախագագացում է: Կործանման, ձուլման տազնապի նախագագացումն էր, որ մղեց Մաշտոցին՝ երկնելու հայոց գրերը. դա հայ ժողովրդի ամենաիրական տեսիլքն էր: Մեր գրականության ոսկեդարից սկսած՝ գոյութիւն է ունեցել տեսիլքի գրական հնարանը: 19րդ դարավերջի ու 20րդ դարասկզբի մեր պատմությունը ներկայացնելու համար առաւել չափով օգտագործուեց այն: Այս առումով խորապէս հետաքրքրական է Սիամանթոյի, Չարենցի, նորագոյն շրջանի գրողների գեղարուեստական փորձը:

Տարիների հրապարակախօսական գործունեությունից յետոյ գրական աշխարհ է մտնում Մուշեղ Գալշոյեանը: 1969ին տպագրուեց «Կռունկ» ժողովածուն: «Գալշոյեանի արձակը նուաճում է, ինքնություն մի հուն, ծերայերից բխող մի աղբիւր, ջինջ ու արծաթ, որ իր ճամբան է պեղում, որոնում՝ հասնելու մի այլ ակունք՝ պարկեշտ ու մեկուսի: ...Ինքը կը մնայ Գալշոյեան, լաւ թէ վատ, կը մնայ հաւատարիմ իր մանկութեան դերերին, որոնք Սասնաշէնի բարձունքներից կայծակ ու որոտ են առնում-նետում Սասնայ լեռների, որպէսզի չխեղդուի ցեղի ձայնը, որպէսզի լինի շարունակութիւն»:

Ո՞րն է Գալշոյեան գրողի՝ իր հերոսներին յամառօրէն տեսիլքով ապրեցնելու գաղտնիքը: Ահա մի փոքրիկ հատուած նրա հետ անցկացուած վերջին գրոյցից. «... Կայ մի կէտ, թիւրախ, նշանակէտ ... ես անընդհատ մի կէտին եմ կրակում... Նո՛յն կէտը ... կարօ՛տը, կորցրա՛ծը... Առայժմ մեզ ի՞նչ է հարկաւոր՝ չմոռանա՞նք... Մոռանում ենք ո՛չ թէ որովհետեւ մոռացկոտ ենք, այլ մոռանում ենք մեզ խաբելով, անգօրութիւնից, վախից, մեզ ազատելու էղցաւից... Բայց ես ուզում եմ, որ չմոռանա՞նք, ժողովուրդը չմոռանայ, եւ նոյն կէտին անընդհատ ես կրակում եմ, որովհետեւ ուզում եմ, որ այդ կէտը ծակուի՛, ծակուի՛, ծակուի՛...»: Իր ողջ գրական վաստակը արձակագիրը նուիրեց այս նպատակին:

Էրգրի պատկերը վառ պահել, տեսիլքի ուժով մարդկանց վերադարձնել «գաղթած», մարմինները լքած հոգիները. հոգու գաղթը, ըստ Գալշոյեանի, աւելի մահահոտ է ու վտանգաւոր, քան Էրգրի գաղթը: Նպատակը էր մի՛շտ հնչեցնել Էրգրի, հայրենիքի կանչը:

Մեղաւոր աշխարհ-խորտակուած տեսիլք: Գալշոյեանի պատմութեան հերոսները մնան են իրար, նոյնն են. բոլորն էլ անցել են սարսափի նոյն ճանապարհը, կորցրել են նոյն Ծովասարը, Մարութայ սարը, ամէնուր փնտռում են նոյն զինարք ծաղիկը, երգում են նոյն երգը եւ ունեն կարօտ, որի սահմանը խելագարութիւնն է, ինքնակործանումը:

Տեսիլքի հնարանքին դիմելը Գալշոյեանին հնարաւորութիւն է տալիս թափանցել հերոսների հոգու ծալքերը, խօսեցնել նրանց: «Հոն, ուր տեսիլք չկայ, ազգ մը կը խորտակուի», - մի առիթով ասել է սփիւքահայ բանաստեղծուհի Վեհանուշ Թէքեանը: Գալշոյեանի հերոսներին էլ է տեսիլքը ապրեցնում: Այդ հերոսները ստեղծում են տեսլային իրականութիւն, որի բնակիչներն են դառնում այնուհետեւ: Էրգրում կիսատ մնացած կեանքը նրանք շարունակում են ապրել պատրանքների աշխարհում...

Կորսուած երկրի ցաւը մեծ է, հանգիստ չի տալիս, այն խառնուել է արեանը եւ «... արիւնոտ ցնցոտիներ հագած խեղճ ու կրակ այդ պատմութիւնը հեռ-ւից է գալիս, տեսիլքը ... տեսիլքը յայտնուել է հօրը, յայտնուել է մայր պապին, մայր՝ ապուպային: Ապուպայից ժառանգել է պապը, պապից՝ հայրը, հօրից՝ ինքը, իրենից ժառանգել է որդին, եւ որդուց՝ որդին, եւ տեսլահար է իր արիւնը» («Մարութայ սարի ամպերը», «Մեղապարտը»): Ծերունի Տիգրանը փորձել է խեղդել ցաւը, ազատագրուել սեփական արիւնից: Ցերեկը կարողացել է հսկել ցաւը, իսկ գիշերը՝ քնած ժամանակ, ցաւն այցելել է վարպետ Տիգրանին, ու նա դարձել է տեսլահար ... «Ճիշն ու ծղրտոցը ականջմտուկների պէս խլկացել են ականջներում, իսկ ինքն իրեն խաբել է՝ ականջացաւ է, կ'անցնի, բոցերը ձուլուել-դարձել են ածուխի շիկացած կտորներ եւ այրուել ականակումքներում, իսկ ինքն իրեն խաբել է՝ աչքացաւ է, կ'անցնի... Տեսլահար է իր արիւնը ... արիւնը» («Մեղապարտը», էջ 239): Ինքնախաբէութիւն է մոռացութիւնը. երբ յուսահատ ես, երբ անգօր ես, քեզ խաբում ես, թէ մոռացար: Բայց ցաւն արեան մէջ է, նրանից ազատուել չկայ, յոգնած, տանջուած ու ծերացած ցաւն իր հետ էլ գերեզման կ'իջնի, ու կը հանգստանան երկուսն էլ... Եւ մեղապարտ Տիգրանը ցանկութիւն ունեցաւ անմիջապէս տեսնել որդուն եւ ասել նրան, որ թունաւորուած է, որ որդին նոյնպէս թունաւորուած է, որ ողջ ցեղը թունաւորուած է... Այս համընդհանուր ցաւից ազատուելու համար պէտք է կտրել երակը եւ թոյլ տալ, որ ցաւն արեան հետ հոսի բաց երակն ի դուրս: Երակները դատարկելով ... ազատագրուել: Յանկարծ, ինչպէս դա լինում է մեծ վիշտ ապրած եւ տեսանելու հզօր ուժ ունեցող մարդկանց մօտ, մեղապարտ Տիգրանը գտնում է հարցերի հարցը՝ ինչո՞ւ այդպէս եղաւ. «Իրօք, բոցերից լիզուած, արնոտ ցնցոտիներ հագած այդ խեղճ ու կրակ պատմութիւնը ինչո՞ւ եղաւ... Տեսիլքը ինչո՞ւ յայտնուեց: Պատճա՞ռը» («Մեղապարտը», էջ 242): Օրերով իրար բերանից խլելով՝ պատմում էին արիւնոտ պատմութիւնը, յիշում էին, թէ ԻՆՉՊԷՄ եղաւ, բայց ոչ մի անգամ հարց չտուեցին, թէ ԻՆՉՈՒԻ եղաւ: Այս արիւնոտ

պատմութեանը չպէտք է ականջ կախել, չպէտք է թուանալ ու թմբել: Գալշոյեանը կամաց-կամաց, բայց յամառօրէն խտացնում է գոյները, շիկանում են մտքերը. այս կոտորածի մեղաւորը աշխարհն է, բոլորը մեղաւոր են, ուրեմն ընդվզել է պէտք, խելագարուել է պէտք, մէկընդմիշտ մոռանալ է պէտք «ինչ-պէ՞ս եղաւ» հարցը եւ ընդմիշտ յիշել՝ «ինչո՞ւ եղաւ»-ը: Այս պատմութեան մէջ բոլորն ունեն մեղքի իրենց բաժինը, բոլորը: Դա մի մարդու գլխին եկած փորձանք չէր, այլ մի ողջ ժողովրդի ողբերգութիւն. «Եւ ամէն մէկը մատը թող դնի իր երակին եւ հարց տայ՝ ինչո՞ւ այդպէս եղաւ, մատը դնի իր երակին եւ պատասխան պահանջի՝ այնքան եւ այնպէս պահանջկոտ եւ այնպէս անհաշտ, որ տեսլահար արիւնը շփոթուի երակներում» («Մեղապարտը», էջ 244): Մեղապարտ Տիգրանը գտնում է գլխաւոր հարցը: Այդ յայտնութիւնը միայն իր համար չէ, ողջ ցեղի համար է, ուրեմն պէտք է շտապել, պատգամել որդուն իր տեսիլքը, որ նա եւ սերունդները շարունակեն ու գտնեն ինչո՞ւ-ի պատասխանը... «Եւ որդին թող գնայ... Երբ էլ ներս մտնի, պատմութեան ո՛ր հատուածում էլ վրայ հասնի, հարցը կը լինի տեղին: -Ինչո՞ւ: «Եւ Տիգրանի որդին եմ, թող ասի, ես ծերունի Տիգրանի որդին եմ, իմ հօրը այս խրճիթից վտարեցին, եւ նա իր ցաւից խռովեց, իսկ ես որդուս հետ եկել եմ՝ տէր դառնալու, տէր դառնալու հօրս փոխարէն եւ հարցնում եմ՝ ինչո՞ւ այսպէս եղաւ» («Մեղապարտը», էջ 245): Եւ երբ «ինչուն» պատասխան կ'ունենայ, ցաւը բուժելն էլ կը հեշտանայ:

Մեղադրեալ Տիգրանին հարցաքննողը գաղափար անգամ չունի, թէ ինչ է կատարում նրա ներաշխարհում: Տիգրանը մի ծանր, չլսուած դատ է վարում ինքն իր դէմ՝ իր ներսում. «Մեր ցաւն աշխարհի ցաւն է, Տիգրան, բայց աշխարհից աննկատ: Աշխարհի չափ մեծ ու աշխարհի ցաւն ու աշխարհից անընկատ...» («Մեղապարտը», էջ 228): Եւ յանկարծ՝ «Ինչո՞ւ էք թողել ձեր ծննդավայրը» («Մեղապարտը», էջ 228): Զննիչի այս հարցը ծերունուն խոցում է մինչեւ հոգու խորքը. թողե՞լ, ինչպէ՞ս թէ, ո՛չ, իրենց կամքով չեն թողել, ստիպւած էին թողնել... արունն էր մեղաւոր, գարունը դաւաճանեց, չզգուշացրեց. «Չեղներ էդ գարուն, Տիգրան... Էն գարուն ձեան տակից դուրս չգար... Էն գարուն փոթորիկի մէջ խեղդուէր ու մնար...» («Մեղապարտը», էջ 230): Ու կեանքը մնար այնպէս, ինչպէս կար, ինչպէս պէտք է լինէր:

Աշխարհի դէմ դառնացած է ծերունի Զօրոն: Գարնան կապոյտ ու անուշ մի առաւօտ 10-11 տարեկան գառնաբաժ Զօրոն Մարութայ սարի փէշերին բանջար հաւաքող աղջիկների մէջ յանկարծ գտնում է Ալէին, եւ աշխարհը դառնում է քաղցր ու հաճելի. ամէն ինչ փոխւում է նրա աչքում: Բայց «դալար վարոցով գառնաբաժը էն առաւօտ նրա՝ համար նկատեց, նրա՝ համար գտաւ պատիկ Ալէին, որովհետեւ պէտք է կորցնէր...» («Կանչը», էջ 7): Եւ կորցրին իրար, որովհետեւ արեւի խաւարում եղաւ Մարութայ կապոյտ աշխարհում: Հանդիպեցին մէկ էլ յիսունհինգ տարի յետոյ, երբ երկուսն էլ մեծ գերդաստանի տէր էին արդէն, ու Զօրոն որոշեց ուղղել աշխարհի սխալը, շրջել

պատմությունը եւ տանել այն հունով, որով պէտք է գնար, եթէ արեւը չխաւարէր: Չօրոն որոշում է բաժանուել իր ընտանիքից եւ նոր օջախ ստեղծել Ալէի հետ: Նա վիրաւորուած է. «Աշխարհքն է վիրաւորէ Չօրոյին... Մէջ աշխարհքին ինչքան մարդ կայ՝ Չօրոյին վիրաւորանք է հասցրէ: Ու Չօրոն աշխարհքի հետ խռով է ու ... մենակ Ալէն ... մէջ աշխարհքին՝ մենակ Ալէն, ու կը բաժնուեն» («Կանչը», էջ 16): Ուրեմն բնութիւնը ծաղրե՞լ է իրեն: Եթէ ինքը չպիտի հասներ իր Ալէին, այն անուշ ու կապոյտ առաւօտն ինչո՞ւ ծնուեց: Եթէ ինքը պիտի գտներ նախշուն Ալէին ու իրիկուն չեկած՝ կորցներ, այդ լոյս առաւօտն ինչո՞ւ եղաւ: «Եղաւ, որ գար էս մեղաւոր աշխարհի մեղքը աւելացներ ու էրթա՞ր, եղաւ, որ գար դադէր Չօրոյի հոգին ու էրթա՞ր, որ Չօրոյին ասէր, թէ աշխարհում էսպէս-էսպէս անուշ բա՞ն կայ, ասէր ու էրթա՞ր: Ալէ... Երա՞գ էր... Խորոտիկ հէքիաթ էր...» («Կանչը», էջ 19): Աշխարհը խլում է Չօրոյի երջանկութիւնը, իսկ հիմա նորից հանդիպել են, Չօրոն դեռ չի մոռացել իր Ալէին, թում է, թէ կարող են նոյնիսկ միանալ, բայց միացումն արդէն ծիծաղելի է, ծաղր է: Մի բուռ դարձած պառաւի սրտում սէր էլ չի մնացել. «-Քու խօսքը կոտորումի մասին չէ՞, ախպէր Չօրօ»: «- Կոտորումի մասին է ու ... սիրոյ մասին է, Ալէ» («Կանչը», էջ 18): Ահա ինչու, Չօրոն ուզում է վերադառնալ անցեալ, վերագտնել կորցրածը. «Արեւմարք չելներ մէջ աշխարհքին... Ու մեծնալ չեղներ, Ալէ, էրեխան մնար էրեխայ, ես՝ էն նախշուն քարի վրայ, դու՝ շաղոտ կանաչների մէջ ու քու գլխին ծաղկեպսակ, Ալէ...» («Կանչը», էջ 22): Գարուն լինէր ու առաւօտ. Չօրոն իր ողջ կեանքը կը տար գարնան ու առաւօտի յաւերժութեան համար...

Գրողը կերտում է կերպարները հայրենի եզերքից, հարազատ օջախից վտարուած մարդկանց, ովքեր տառապում են հոգեպէս ու ապրում են՝ շնորհիւ տեսիլքի:

Կարօտի ուժ-տեսիլքը ծնում է: Կորուսեալ հայրենիքի պատկերը միշտ այս մարդկանց աչքի առաջ է՝ երբեմն իբրեւ յուշ, երբեմն իբրեւ տեսիլք, սակայն միշտ՝ որպէս կարօտ: Չորի Միրոն կարող է վկայել՝ «Կարօտ զօրեղ-զօրեղ է. կարօտից զօրեղ բան աշխարհ չկայ... Կարօտի հետ տխրութիւն կը մեծանայ, գա՛ն... Կարօտ տխրութիւն է, անուշ-անուշ տխրութիւն, ու էդ տխրութիւն ... էդ տխրութիւն մեծ բան կը պտղէ... մարդու հոգին կը մեծացնէ, մարդ կը դարձնէ աժդահայ, հերոս...»: Կարօտից է ծնում յուշը, տեսիլքը, երգը, կարօտով են ապրում նրանք, եւ տեսլահար արիւնը ձեռք է բերում մի հիւանդութիւն եւս՝ կարօտախտ: Կարօտելու համար կորցնել է պէտք, կորցնելուց առաջ՝ գտնել ու սիրել: Կարօտն Էրզրի հանդէպ թափ է առնում, մեծանում, եւ Էրզիրը դառնում է կարօտի չափ՝ «Քեռի Թորոսիկը Էրզրի չափ կարօտել էր արեւին», «Է՛, Էրզիր, ասեր ու անտէր ու անուշ Էրզիր», «Էրզրից յետոյ էսպէս ծիծաղած չկամ»... Գրողը փորձում է այստեղ-այնտեղ փոքրիկ «Էրզիր»ներ ստեղծել, որպէսզի դիրքին դառնայ ապրելը: Մարդիկ գտնում են

Եւ սկսում փայփայել իրենց իսկ ստեղծած պատրանքը, տեսլային հայրենիքը: Ամէն ինչ՝ ծառը, ծաղիկը, գարունը, բնութիւնը, մարդիկ յարաբերութեան մէջ են դրում Էրզրի հետ, յիշեցնում անցածը, անվերադարձը: Կարօտն անծիր է, մարդկային ուղեղի սահմաններում չի ամփոփում, մարդը չի բաւարարում Գալշոյեանին, եւ նա գնում է դէպի մի ուրիշ աշխարհ, դէպի բնութիւնը: Երկնքի լազուր կապոյտում հպարտ ճախրում են արծիւները, ու իր կարօտը մարմնաւորելու համար գրողը դիմում է նրանց: «Մուշ քաղաքի վերին թաղի տղան» պատմուածքում ճարտարապետ հերոսը մտորում է հաւքերի արքայի՝ արծուի մասին: Իմաստուն թռչուններ են արծիւները, որովհետեւ երկար են ապրում, տեսնում, հասկանում են ամէն ինչ: Յիշողութիւն ունենալով արծիւները, ու եթէ ունեն, ուրեմն որքա՛ն դժուար են ապրում... Արծիւը մեր ժողովուրդն է՝ իմաստուն, դարաւոր պատմութեամբ, յիշողութիւն ունեցող: Արիւնոտ ու խճճուած յուշերը ծանրացել են, յուշից ու կարօտից գրողը յղանում է Մուշ քաղաքի վերին թաղի տղայի հեքիաթը՝ հայ ժողովրդի հեքիաթը: Ամենապարզ եւ ամենաբարդ տեսիլքները ժողովուրդների պատմութեան մէջ հեքիաթներն են. դրանցում կարելի է գտնել ազգի անցեալը, ներկան եւ ապագան:

Վարպետ Մլեհի հեքիաթը շատ պարզ է. երգ ու խաղով տարուած տղան մոլորում է, կորցնում տան ճանապարհը, քարէ արծիւը շնչաւորում է եւ տղային հասցնում մօրը: Միւս բոլոր հեքիաթները, որ փորձում էր ստեղծել վարպետ Մլեհը, նման էին առաջինին: Սակայն հրաշքը մի անգամ է լինում, արծիւը միշտ չի կարող փրկել փոքրիկին, եւ այստեղ է, որ անգօրութիւնից, անլուծելիութիւնից ծնւում է յաջորդ ու վերջին հեքիաթը:

Չայնէղ տղան, խաղով տարուած, թափառում է սարերում եւ երգում, բայց սկզբից ծակում է կրունկը նշտարով, որ ոտքերը չմոլորուեն, ու չկորցնի վերադարձի ճանապարհը: Նշտարը քշում է չարքերին հեռու, փրկում է տղային կորչելուց, թալիսման-նշտարով տղան ինքը փրկում է իրեն: Սա միայն հեքիաթ չէ, սա նաեւ ծրագիր է, տեսիլք-ծրագիր պատմութեան քառուղիներում մոլորուած հայ ժողովրդի համար: Արծուի տեսքով իջած երկնային փրկութիւնն ընդամենը մէկ անգամ կարող է լինել: Միւս բոլոր դէպքերում մոլոր-ւելու, կորչելու մեղքն իրաւացիօրէն ընկնում է ժողովրդի վզին, ուստի փրկութիւնն էլ ժողովրդի ձեռքին է: Պէտք է նշտարով ծակել կրունկը, պէտք է յիշել անցած կարմիր, արիւնոտ պատմութիւնը, զգուշանալ, ելքը գտնել, փրկուել սեփական պատմութեամբ:

Կարօտը զօրաւոր, հրաշագործ ուժ է, մարդու մէջ սեղմուած, խտացուած զգացում է, որն անընդհատ ծաւալում է, մեծանում, եւ գալիս է մի պահ, երբ այլեւս տեղ չկայ, այլեւս սահմանը պայթիւնն է, եւ այստեղ՝ անսահմանութեան սահմանում, ծնւում է տեսիլք-հեքիաթը: Այնուհետեւ լսում են հարազատ հնչիւններ, ձայներ, եւ ծնւում է երգը:

Երգ-տեսիլք: Երգը ժողովրդի բնատրոսինն է, նրա ապրումների, գաղափարների իրօրինակ արտայայտությունը: Հայ մանուկի մեղքը չէ, որ անուշ «նանիկ»-ի փոխարեն մայրը «Ձարթի՛ր, լաօ՛, մըռնիմ քըզի» երգն է երգում իր օրօրոցի մօտ: Ուրիշ շատ երգերի կողքին այս երգը եւս յայտնաբերել է Գալշոյեանը. «Այս երգը ե՛ս եմ յայտնաբերել ու տարածել. ուրեմն այնքան տարածուել է, որ նո՛յնիսկ Գանատաներում էլ երգում են «Ձարթի՛ր, լաօ՛, մըռնիմ քըզի»: Երգը հաւաքել է ազգին, ձգել հոգիները: Երբ կարօտը շատ է խեղդում Գալշոյեանի հերոսներին, նրանց շուրթերը բացում են, եւ կարօտը հոսում է՝ երգի տեսք առած: Ահա Ծովասարի Օհանը. երգելով վերապրել, վերյիշել է ուզում անցածը, վերագտնել կորցրածը: Եւ երգի հնչյունների ուժով գրողը հերոսին տանում է Ծովասար, ուր վերջին անգամ նա տեսաւ հօրը, եւ ... բաժանուեցին «Հօր վերջին համբոյրը հերսոտ էր. թուաց՝ ոչ թէ համբուրեց, այլ ապտակեց...» («Ծովասարի Օհանը», էջ 70): Եւ բաժանուեցին. հայրը թուրքերի ճանապարհը շեղելու նպատակով նրանց ուշադրութիւնը բեւեռեց իր վրայ, տարաւ մի կողմ, որ գերդաստանից մնացած «պուտ մի արունը չկորչի»: Հայրն ընկաւ համազարկից եւ գլորուեց Ծովասարի փէշն ի վար. «Ի՛նչ անուշ կը գլորուէր իմ հէր, թող որ մեռնելուց առաջ իմ հէր, քանց երեխայ, գլորիկ խաղաց Ծովասարի անուշ փէշին ... ինչ անուշ կը գլորուէր իմ հէր» («Ծովասարի Օհանը», էջ 71): Եւ Օհանը կէս գիշերին սկսում է երգել.

Կանաչ վարոց հօտաղներ,
Հոյ, Նուբար,
Նախշուն գոգնոց աղջիկներ,
Հոյ, Նուբար,
Գարնան կ'ելնեն Ծովասար,
Հոյ, Նուբար,
Հոյ, Նուբար, Նուբար, Նուբար,
Հոյ, Նուբար,
Մասնայ սարեր քարութար,
Հոյ, Նուբար...

Սա միայն երգ չէ, սա պատմութիւն է: Հայրենի բնութիւնը, Ծովասարի ծաղիկները, կանաչները երգի միջոցով Օհանին կանչում են իրենց գիրկը. այնտեղ՝ Ծովասարի ծաղկած լանջերին է թողել նա հօրը, այնտեղ է կտրուել կապն իր անցեալի հետ, եւ նա գնում է՝ փնտռելու կորցրածը... «Օդորմի էդ երգն ստեղծողի հօր ... էդ երգն ինչքա՛ն ճիշդ է...» («Ծովասարի Օհանը», էջ 73):

Երգը իրատեսակ կապ, հաղորդակցութիւն է անցեալի, կորցրածի հետ: «Գինարբ ծաղիկը» պատմուածքի հերոսը՝ Բարսեղ քեռին, լաւ ձայն ունի,

երգում է: Մի ժամանակ նրա բոլոր երգերը մարդկանց մասին էին, իսկ հիմա՝
կորած ու հեռացած լեռների...

* * *

Երգի աներեւոյթ ուժը կարող է իր շուրջը հաւաքել ժողովրդին եւ դարձնել բռունցք: Թոյլ, անուշադիր եղար, երգդ կը խլեն ու կը դառնան նրա տերը: «Մեղապարտը» պատմուածքի հերոս Հակէն պատմում է իր հօր ստեղծած «Խուլնգօ» երգի ճակատագրի մասին: Երգը յօրինել է հայրը քրդերէնով, քուրդ Մրազը երգում է եւ ամէն անգամ աւարտից յետոյ աւելացնում, որ դա ի՛ր հօր ստեղծած երգն է. «Եւ յաղթեց ... եւ ինչպէս յաղթեց. «Խուլնգօն» տ-վորեցրեց իր որդուն, ... եւ որդիները սովորեցրին իրենց որդիներին եւ, այս-պէս, հիմա ամէն մէկը մի սարի գլխին կանգնած երգում է... իսկ ինքը՝ Հակէն, երկու որդի զոհ տուեց Մեծ Հայրենականին, մի աղջիկ ունէր, որ ամուսնա-ցաւ, գնաց» («Մեղապարտը», էջ 219):

Քուրդը խլեց երգը, Հակէն նահանջեց, Հակէի երգը շարունակող չեղաւ: Եր-գը սուրբ մասունք է, նշխար, պէտք է փոխանցել սերունդներին, այլապէս հայրը կը կորցնի հողը, որդին՝ երգը, թողը՝ լեզուն, միասին՝ ազգը: Եթէ ուզում ես ապրել այս աշխարհում, պէտք է քո երգին տէր կանգնես, քո տեսիլքը եր-գես բարձրաձայն: Երգը գոյութեան ձեւ է, կեցութիւն է, ապրելու միջոց եւ հնարք:

Գալշոյեանը լաւ է հասկացել երգի զօրութիւնը: Պատերազմի դաշտում ամենամեծ զենքը երգն է, որ թափանցում է մարդկանց ուղեղը, հոգին, մկան-ները եւ մղում խելագարութեան հասնող անձնագոհութեան ու հերոսութեան: Բոլոր ժամանակների պատերազմները սկսուել եւ աւարտուել են երգով: Սպաննեցի՞ր երգը. ուրեմն յաղթանակը քոնն է, ուրեմն յաղթեցիր: Թշնամու բանակը ոչնչացնելուց առաջ պէտք է թշնամու շուրթերից ելնող երգը սպան-նել. «Ռ-ազմադաշտի գլխին ծորացող այդ գանգուր ու արնաթաթախ երգը խենթացնում էր...» («Դ-աւուն», էջ 58): Ո՞վ է երգողը. այո, «փեզեվանկը գեղե-ցիկ է եւ երգել գիտէ», բայց պէտք է զոհուի ... Անդրանիկ փաշան արգելում է, Դ-աւօն դառնացած դիմում է նրան. «Իմ տոհմի էգն ու որձը գեղեցիկ չէ՞ր, փաշա՛: Ո՞ւր են: Իմ տոհմ երգ չունէ՞ր, փաշա՛, ո՞ւր է իմ տոհմի երգ...» («Դ-ա-ւուն», էջ 59): Քուրդը խլի իր ստեղծած երգը, թուրքը թրատի իր գեղեցիկ տոհ-մը, բայց մինչեւ ե՞րբ... Դ-աւուն միանգամից թոցնում է իր հայրենակիցներին երգով զօրավիզ կանգնող երիտասարդ թուրքի գլուխը: Արձակագիրը զգու-շացնում է՝ հայը եւս կարող է սրի քաշել ու վրէժ լուծել:

Ժողովրդի բնատրութեան մասին կարելի է եզրակացութիւն անել՝ ուսում-նասիրելով նրա երգ-երաժշտութիւնը եւ պարարուեստը: Պարը եւս խորիւր-դանիշ է, տեսիլք: «Եար խուշտա»ն խտացնում է ազգի պատմութիւնը, դա-ժան պատմութեանը դիմագրաւելու ձեւը, հնարը՝ միայն ուս ուսի, միայն հա-ւաքելով կարելի է փրկուել: Հետաքրքրական է նաեւ պարի չափը. գնալով

արագանում է, ուժեղանում, պատմությունը եւս գնալով կուտակում է, խտանում, պէտք է դիմանաս թափին, դիմադրես, այլապէս վերջ, չես կարող շարունակել, այլապէս քո պարը, քո պատմությունը կհաստ կը մնայ: Պէտք է դիմանաս, թէկուզեւ ավող ճաք տայ, ու արին հոսի:

Յուշ եւ իրականություն-տեսիլքը շարունակում է: Գալշոյեանը կարողանում է գեղագէտին յատուկ հմտութեամբ համատեղել ներկան եւ անցեալը, իրականութիւնն ու յուշը, առօրեան եւ երազը: Նրա հերոսներն ապրում են երկու կեանքով՝ մէկն ամէնօրեայ, կենցաղային, իրական կեանքն է, միւսը՝ կիսատ մնացած, արիւնոտուած, հեռաւոր յուշը, որ յայտնում է մերթ որպէս երգ, մերթ որպէս կարօտ, մերթ որպէս տեսիլք: Արձակագիրը յուշը, տեսիլքը չի պարտադրում իր հերոսներին. դա նրանց ապրելու կերպն է, կապը արտաքին աշխարհի եւ իրենց անցեալի հետ: Կտրուեց այդ կապը, ուրեմն կործան-ւած են իրենք: Գրեթէ բոլոր պատմուածքներում Գալշոյեանը գիտակցաբար ժամանակները խառնում է, յաճախ ներկան եւ անցեալը հանդէս են գալիս կողք կողքի: Անցեալը ներկայի անբաժանելի մասն է, ներկան իմաստաւորում է անցեալով, ներկան անցեալի մէջ է, նրա շարունակութիւնը: Ամէն մի աննշան մանրութիւն յիշեցնում է անցեալը, եւ անցեալ ունեցող հերոսները շարունակում են ապրել ներկայում, սակայն ... սեփական ներաշխարհում: «Գալշոյ-եանի հերոսները վարժ են այդ ներքին ճամբորդութիւններում... Իրենց ներքին աշխարհը յաճախ շատ աւելի կենսական նշանակութիւն ունի, քան արտաքին աշխարհը»: Գալշոյեանի հերոսները յաճախ ինքնամփոփ են ու փակուած, քչախօս են եւ իրականութիւնից վերացած: Ծեր է քեռի Տօնէն, յիշողութիւնը տկարացել է, եւ միտքը փորելով հազիւ յիշում է. առաջին ու վերջին անգամ շուկայ է գնացել ու ապրանք ծախել հօր հետ: Ինչքան ժամանակ է անցել, այն ժամանակ ինքը կանաչուորած մի տղայ էր, իսկ հիմա... Իսկ հօր որոնածը ... շուկայում հօր որոնածը ... պատմուածքի զարգացման ընթացքում յուշն ու իրականութիւնը հանդէս են գալիս միասնաբար, քեռի Տօնէն կարծես իրականում ներկայ է ֆիզիքապէս միայն, նրա միտքը գրադուած է անցեալով, եւ փորձում է յիշել, թէ ինչ էր հօր որոնածը շուկայում... Գրողը ներկան եւ անցեալը տանում է զուգահեռ: Վաճառքի հանած մէկ ոչխարի դիմաց ճոճռան փողը շարտում են նրա երեսին՝ ասելով. «Փողի կարիք ունե՞ս, արա... Ա՛ռ, գնա ապրի» («Շուկան», էջ 159): Քեռի Տօնէն յիշում է՝ զինի, մէկ բաժակ արդար ու անարատ զինի. ահա ի՛նչ էր հօր որոնածը: Հայրն էլ վիրաւորուած էր այն օրուայ առետրից, իրեն էլ հենց նոր վիրաւորեցին, նոյն իրավիճակն է, արդար զինի է պէտք, որ խմի ու կատաղի: Միաճուլում են յուշն ու իրականութիւնը, ենթարկում են միեւնոյն լուծմանը. մէկ բաժակ արդար զինի:

«Դաւոն» պատմուածքում Գալշոյեանը յուշն ու իրականութիւնը համատեղում է մէկ այլ նպատակով: Համերկրացիները հաւաքուել են, որ ճամբայ դնեն Դաւոյին: Անդրանիկի հերոս զինուոր Դաւոն պառկել է ուժահատ եւ

նոյնիսկ չի կարողանում բարձրաձայն խօսել, հասկացնել մտածածը: Եւ ընկերոջ «Դու ո՞ւր ե՛կ երթաս» հարցին Դաւօն մտքում պատասխանում է. «Կռիւ ե՛կ երթամ, Պշուկ, կը գա՞ս ... ով զարկուեց, դաւաճան է... Յիցքարի կռիւ քու մի՞տքն է ... կը յիշի՞ս...» («Դաւոն», էջ 57): Իրեն շրջապատած համերկրացիները յիշում են փառաւոր պատմութիւններ կռուի ու Դաւոյի մասին, իսկ Դաւօն չի լսում, նա Յիցքարի իր կռիւն է շարունակում, մտքով նա այնտեղ է՝ անցեալում, որովհետեւ կիսատ է մնացել նրա կռիւը, հոգին տակաւին շարունակում է կռուել: Իւրօրինակ տեսիլք-աւարտ ունի պատմութեամբը. «...իրիկնապահի արեւը բոցկլտում էր մերկ սրին, համբուրում ճակատը եւ աչքերի դիմաց կայծկլտացող կարմիր ու կանաչ պէժեր՝ Դաւոն սուրում էր դէպի արեւմարք, դէպի հեռու լեռների վրայ փշրուած արեւը...» («Դաւոն», էջ 68):

Գալշոյեանի հերոսները դժուար են ապրում, իրականութեան մէջ ծանօթ, հարազատ բաներ են որոնում, որ վերականգնեն կորցրած աշխարհը: Արձակագիրը յաճախ դիմում է բնութեանը: Բարսեղ ծերունին գտել է իր աշխարհը, իր փոքրիկ Էրզրը: «Խուչերով» կոչուած արտում է այդ աշխարհը, որովհետեւ միայն այդտեղ նա տեսաւ զինարք ծաղիկը՝ խատուտիկ աչքերով, որ թողել էր այնտեղ՝ Էրզրի սարերում, եւ երբ տեսաւ, աչքերին չէր հաւատում: Գինարք ծաղիկը Էրզրից մի կտոր նշխար էր: Գրողը փորձում է օգնել իր հերոսներին. հայրենիքը կորցնելուց յետոյ պէտք է շարունակել ապրել, բայց ինչպէ՞ս: Երբեմն նաեւ այսպիսի փոքրիկ ինքնախաբէութեամբ. եթէ այստեղ էլ աճում է զինարք ծաղիկը, ուրեմն հնարաւոր է ապրել այս հողում: Թոռան ձեռքը բռնած՝ զարնանը նա գնում է Խուչերով արտը: Բայց արտը վարել են, «արտի տունը փլեր է»։ սա նաեւ ծերունու երեսակայական տունն էր, ուր յուշեր էին արթնանում: Ծերունին խոնարհում, մօտենում է տաք հողին, լսում հողի կանչն ու շշնջոցը եւ դառնում թոռանը. «Գինարք ծաղիկներն կը թողնին իմ թոռանն ու կ'երթան» («Գինարք ծաղիկը», էջ 124): Գինարք ծաղիկը խորհրդ-դանիշն է կորսուած հայրենիքի, որ ծերունին պատգամում է թոռանը: «Կը յաղթես, թէ կը պարտուես՝ չարի դէմ ծառանալն առաքելութիւն է, կը գտնես, թէ ոչ՝ հայրենիքի երջանկութեան ծաղիկը որոնելը հայրենիքի որդու պարտքն է», - գրում է Գալշոյեանը:

Տեսողական պատրանք-տեսիլք: Գալշոյեանի հերոսներն օժտուած են տեսանելու ներքին զօրութեամբ: Երեսակայութիւնը, կարօտն այնքան ուժեղ են, որ երբեմն մարդիկ բաց աչքով երազ են տեսնում: Նրանք իրականութեան մէջ միշտ փնտռում են անցեալին կապող որեւէ օղակ, պատկեր: Խութեցի Ափրէի բզկտուած մանկութիւնից մի պատկեր է միայն մնացել. երբ մաքուր աւլած ու ջրցանուած հողէ յատակին արեւի շող է ընկնում, ու շողերի մէջ խայտում են փոշու հատիկները, Ափրէն յիշում է մօրը: Կնոջ յամառ տրտնջոցներից յետոյ Ափրէն որոշում է տախտակ խփել հողէ յատակին: Սակայն նա չէր

նախատեսել մի բան. «Ափրէի հայեացքի դիմաց մի պահ փայլատակեց մանկութեան պատկերը՝ մանկութեան երդիքից արեւի փոշոտ ու զոնեղ սիւնը մի պահ բռնկուեց ու մարեց, եւ նա տորեց աչքերը...» («Խութեցի Ափրէն», էջ 146): Պատկերը չկար, մանկութեան պատկերը ցնդել էր, եւ Ափրէն սկսեց տախտակները մէկ-մէկ քանդել, որպէսզի վերականգնի իր տեսիլքը, տեսողական պատրանքով ինքն իրեն յուսադրի, ինքն իրեն Էրզրում զգայ, մանուկ զգայ, մօրը յիշի...

Լսողական պատրանք-տեսիլք: «Քարից բխած տաղանդ», - այսպէս է բնորոշել Մուշեղ Գալշոյեանին Համօ Մահեանը: Նրա քարակոտ արձակի հերոսները՝ քարի պէս ամուր, առնական, քարի պէս անսպառ ու քարի պէս սովորական, գերմարդկային լարում են ունենում. հեշտ չէ ապրել երկու կեանքով՝ ներկայով եւ անցեալով միաժամանակ: Բայց երբեմն պատրանքը յաղթում է, հերոսները չեն դիմանում յուշի գայթակղութեանը եւ ձգում են դէպի անցեալ: Հեռացող Էրզրի կարօտն այնքան մեծ է, որ մշտապէս իրենք իրենց հետ խօսող հերոսները երբեմն լսում են նաեւ ինչ-որ մէկի պատասխանող ձայնը: Ծովասարի Օհանը մի երեկոյ աչքը դեռ չկացրած յանկարծ լսում է. «- Օհա՛ն... Նա աչքերը բացեց եւ սարսռաց: Նստեց անկողնում եւ մթան մէջ խաչակնքեց: - Իմ հօր ձէնն էր, - ականայ պատուհանից նայեց դուրս, - իմ օղորմածիկ հօր ձէնն էր...» («Ծովասարի Օհանը», էջ 69): Քնաթաթախ որդին, հարսը զարմացած էին. Օհանը մոռացե՞լ է, որ հայրը վաղուց մահացել է: «Տղի խելք, մարդն իր հօր սպանուել կը մոռնա՞յ», մարդն իր հայրենիքը, իր անցեալը, իր արեան բռնկումը կը մոռանա՞յ: Բայց Օհանն իր ականջներին է հաւատում, իր հօր ձայնն էր, պատրանքը շատ ուժեղ էր եւ համոզիչ, նաեւ՝ ոչ պատահական. «Իմ հօր ձէնը նշան էր, թէ իմ մահը մօտ է... իմ հէրն ու Ծովասար կը կանչեն զիս... Առաւօտ կ'երթամ... Առաւօտ ճամբորդ եմ: ...» («Ծովասարի Օհանը», էջ 72): Օհանի «վերադարձը» միայնակ չէ, նա այցելում է իր երկրացի ննջեցեալներին, տեղեակ պահում նրանց. «Էրօ՛, Մանու՛կ, Մուրդի՛կ... Էրզիր է կ'երթամ, տղէք, ձեզ համար Ծովասարի հող կը բերիմ...» («Ծովասարի Օհանը», էջ 74): Սրանք Ծովասարի կանչը իրենց սրտում խեղդած եւ մի բուռ հողի կարօտն իրենց հետ գերեզման տարած մարդիկ են:

«Բովտուն» վէպի հերոսը գրուցում է ռազմաճակատում գոհուած հօր հետ, որին երբեք չի տեսել, որի կերպարը, սակայն, օրինակելի է ու անհրաժեշտ որդու համար: Նա ապրում է «հօր ներկայութեամբ», նրա խորհուրդներով: Հայրն այն մարդն էր, որի կռիւը թուրքի ու աշխարհի հետ մնացել է կիսատ, եւ Արման հաւատում է, որ այդ կռիւը պէտք է շարունակի իր Դաւիթ որդին: Նրա յօրինած աշխարհում Դաւիթը գնալու է Ստամբուլ, յաղթելու՝ է բռնցքամարտի աշխարհի չեմպիոն օսմանցի Մոհամեդ Ալիին, հենց իր բնում՝ Ստամբուլում, աշխարհի աչքի առաջ յաղթելու է: Գալշոյեան արձակագիրը **ռիթմի** շատ նուրբ զգացողութիւն ունի. յաճախ է սկսում մարմանդ, հանդարտ մուտ-

քով եւ գնալով ուժեղացնում, հզօրացնում, սեղմում-խտացնում ընթացքը, ու այլեւս գալիս է մի պահ, երբ յորդում է հեղեղը՝ անսանձ ու խելացնոր: Նիւթի շարադրման այս ձեւը առաւել ուժգին է դարձնում տպատրութիւնը: Երբեմն նիւթն ինքնին այնքան խիտ է, որ սովորական պատկերներով, պատրանքներով չի ամբողջանում: Ահա այդպիսի վիթխարի խտութեան ենք հանդիպում «Աղօրիք» պատմուածքում: Հերոսը՝ Խալէն, ցորենի առատ բերք է հաւաքել: Որքա՛ն նպատակներ ունի՝ կապուած ցորենի ոսկեգոյն շեղջի հետ: Սակայն... « - Եկաա՛ն,- ընկաւ Խալէի ականջը» («Աղօրիք», էջ 107): Եւ Խալէն փոթորկուած նետում է դէպի հրացանը, վերցնում այն ու թաքնում, որպէսզի թոյլ չտայ թուրք հարկահաններին՝ մօտենալու իր արդար քրտինքի ոսկեգոյն շեղջին: Սպասում է ու հայիտում, հայիտում է ու խուզարկում, բայց ոչ մէկը չի երեւում, ամէն ինչ իր տեղում էր, ամէն ինչ խաղաղ էր ... սակայն այդ կանչը, ի՞նչ կանչ էր արդեօք: Լսողական պատրա՞նք, խաբկա՞նք, թե՞ տեսիլք: Խալէին անցեալում արդէն հանդիպած այս պատկերի կողքին գրողը դնում է նորը: «Մէկ էլ Խալէի ականջը ընկաւ՝ հեղե՛ղ...», եւ Խալէն խելագար ու ցնցուած դարձեալ վազեց դէպի ամբարը՝ փրկելու այն: Խալէն հասնում է ամբարին, եւ նրա ու աղօրիքի միջեւ սկսում է մի յամառ պայքար. ոչ մէկը չէր զիջում, Խալէն գերմարդկային ճիգեր է թափում. վերջապէս կարողանում է փոխել հեղեղի ընթացքը եւ թեթեւացած շունչ քաշել: «Էս փորձանքից նմանապէս պրծանք ... ու բարին էն էր, որ փորձանքն երկնքից էր ու մարդուց չէր» («Աղօրիք», էջ 114): Խալէի, իր ժողովրդի կոնիւր մարդուց եկած փորձանքի հետ է, որն աւելի անմարդկային է, անսանձ, մոդկալի: Բայց հեղեղ չկար, ոչ էլ հեղեղի ձայն, երկնքում մոյնիսկ ամպի ծուէն չկար: Ուրեմն Խալէն լսողական պատրանքի ազդեցութեան տակ է գործել. աղօրիքի դէմ կոնիւր լսողական խաբկանքի արդիւնք է: Խալէն փոխեց աղօրիքի ընթացքը, եւ խոր իմաստ կայ այս տեսիլքի մէջ:

Վերջաբան: Ո՞րն է բանալին հայ ժողովրդի գոյութեան. արձակագիրը «Մամփրէ արքայ» պատմուածքում իրատեսակ լուծում է տալիս այս հարցին: Տէր Յարութիւնը կարմիրով սպիտակ պատառի վրայ ասեղնագործում է հայոց գրերը: Ինչո՞ւ: Տէր Յարութիւնը չի պատասխանում, հերոսներից իւրաքանչիւրը մի պատասխան գտնում է: Հեղինակը համաձայն է նրանցից մէկի՝ Օհան պապի հետ. «... Տէր Յարութիւնը գրերն ուղարկելու է սուլթանին նուէր ... ի հեճուկս: «Դու մշեցի ուսուցչին սպաննեցիր, իսկ սուրբ Մաշտոցի գրին ի՞նչ կարող ես անել» («Մամփրէ արքան», էջ 268):

Պատմուածքի հերոսը՝ Մամփրէն, օր ծերութեան որոշում է սովորել սուրբ Մաշտոցի գրերը: Բոլորը զարմացած ու հիացած էին ծերունու յամառութեամբ: Մշեցի Խաչոն ոգեւորում է նրան. «Օր ծերութեան մարդը ելնի ու սովորի գրերը, հաշուիր, թէ այդ մարդը ոչ թէ սովորել է, այլ, մեղա՛յ սուրբ Մաշտոց, մեղա՛յ, այլ ինքն է յօրինել» («Մամփրէ արքան», էջ 279): Մամփրէն ու-

նի տառերը մտապահելու իր ձեռքը: Տառերի ամեն մի գծիկը մի առուակ է: Մամփրեն իր համերկրացիներին մանրամասն բացատրում է տառերի «կազմութիւնը»: Սուրբ Մաշտոցը հայոց տառերի պատկերը հայոց լեռնաշխարհից է վերցրել: Հայոց տառերը հայոց զինուորներն են, հայոց անպարտ զինուորները՝ պատրաստ դիմագրաւելու ամենահզօր բանակներին անգամ: Եւ արքայ է այն մարդը, ով զիտի հայոց այբուբենը, թագաւոր է Մամփրեն: Իսկ եթէ թագաւոր է, ուրեմն կարող է հրամաններ տալ սեփական զօրքին: Բայց ... բայց արքան կարող է նաեւ աւագակի մէկը լինել եւ պիղծ հրամաններ արձակել: Եւ այդ դէպքում աշխարհը կը լցուի պարտուած զինուորների փախուստով, Երկիր մոլորակը ուղեծրից դուրս կը գայ...

Գրի ազնուութեան մասին է խօսում է Գալշոյեանը: Իր ողջ գրական կեանքում նրա գրիչը նոյնպէս անարդար հրաման չտուեց Մաշտոցի արդար զին-ւորներին: Գիրը կոչուած է ճշմարտութիւնը պաշտպանելու, սուտը մերժելու, բիրտ ու նենգ ուժերի դէմ կռուելու եւ սրբագործուելու:

Մամփրեն հիմա արքայ է, Մամփրեն կարող է հրամաններ արձակել, նա ճշմարտութեան, արդարութեան, հերոսութեան արքան է եւ Սուրբ Մաշտոցի գրերին տալիս է իր առաջին ու վերջին հրամանը: Հրամանը գրում է արնագոյնով, հայոց պատմութեան արեան կարմիրով. «Օսմա՛ն, թալանչի՛ Օսման, ուրեմն որպէս աւագակ, որ ճամբին կանգնեցիր, էդ ճամբէն քոնն է, հա՞... Աթաբունար ... Մամփրեն ճար չունեցաւ, թէ քեզ տրորէր, տրորէր, ու դու հասկանայիր, որ Տալտրիկի սարերում ու ողջ Սասնայ սարերում Աթաբունար հարամանուն աղբիւր չկայ: Չկայ ու չկայ: Աղբիւրի անունը Մեհրէ էր ու Մեհրէ կը մնայ՝ Մեհրէաղբիւր: Պատմութիւն կայ, Արարիչ կայ ու հնուց եկած գրոյց. Առիւծ Մեհրն էդտեղ, հենց էդ աղբիւրակի բխած տեղն է հանդիպել առիւծին ու ճղել զառիւծն, ու կամօքն Արարչի՝ տեղն ու տեղը աղբիւր է բխել: Եւ Արարիչն է կնքել: Օսմա՛ն, թալանչի՛ Օսման, ես էլ մեռնեմ, դու էլ մեռնես, աղբիւրի անունը Մեհրէ էր ու Մեհրէ էլ կը մնայ: Մամփրէ արքայ» («Մամփրէ արքան», էջ 293):

Երեւան

Մարգո Յարութիւնեան ծնած է Արցախի Մարտակերտ շրջանի Թալիշ գիւղը: Աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական բաժանմունքը: 1990ականներու սկիզբը ուսուցչական պաշտօն վարած է Ծուշիի «Արամ Մանուկեան» վարժարանին մէջ: Ներկայիս կ'ապրի Երեւան եւ կը զբաղի իր երեք զաւակներու դաստիարակութեամբ:



ԲԱԳԻՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

Յ. ՊԱԼԵԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏՈՂ ՈՒՇԱԳՐԱԻ ԱՇԽԱՏԱՆՔ ՄԸ

ՄԱՅՐԻՆԵՐՈՒՆ ԾԻԱԾԱՆԸ **Արդի Լիբանանեան Բանաստեղծութիւն**

(Սարգիս Կիրակոսեան, Երեւան, 2010)

Երախտաշատ աշխատանք բնորոշումը հասարակ տեղիք դարձած է, յաճախակի կրկնութեան հետեւանքով: Բայց երեք հարիւր էջերէ բաղկացած լիբանանեան բանաստեղծութեան ներկայացման նուիրուած **Մայրիներուն Ծիածանը** հատորը իրապէս շնորհալի աշխատանք մըն է, մէկէ աւելի պատճառներով:

Շատեր, ինծի պէս, չեն տիրապետեր արաբերէնի, գրկուած են հարուստ եւ ապրող գրականութեան մը ծանօթանալու պատեհութեան: Ընթերցումներու ցանկիս վրայ եղած են ֆրանսերէնի թարգմանուած կամ ֆրանսագիր լիբանանցի գրողներ (Ժրպրան Խալիլ Ժրպրան, Ժորժ Շեհատէ, Ռընէ Հապաշի, Սալահ Սթեփէ), բայց բանաստեղծները ցարդ եղած էին սոսկ անուններ, անոնք ըլլան դասական թէ արդի: Սարգիս Կիրակոսեանի թարգմանութեամբ եւ ծանօթագրութիւններով կազմուած հատորը նոր աշխարհի մը մէջ մտնելու առիթը ընծայեց ինծի:

Կարդացի հետաքրքրութեամբ, յաճախ ետ-առաջ դարձնելով էջերը, հաղորդուելով ժամանակակիցներու տազնապներով, ապրումներով, տեսիլքներով, գաղտնասացութիւններով: Սիրոյ եւ թափանցումի ակներեւ ճիգով մը հայացուած էին բանաստեղծներու էջերը, եւ ընթացիկ ծանօթացումէ աւելին կը բերէին:

Գիրքին սկիզբը դրուած Սարգիս Կիրակոսեանի «Ուրուանկար Լիբանանեան Արդի Բանաստեղծութեան» ներկայացման տասը էջերը ընթերցողը կը պատրաստեն գիրքը ընկալելու: Ապա, իւրաքանչիւր բանաստեղծի նուիրուած էջերը կու տան անհրաժեշտ տեղեկութիւնները, որպէսզի առաւելագոյն դիւրութեամբ կատարուի ընթերցումը: Սարգիս Կիրակոսեան յստակ դասատրումով կու տայ բանաստեղծին լեզուին, ոճին, ինքնատպութեան, աշխարհայեացքին, տեսնելու եւ զգալու կերպերուն մասին բացատրութիւններ, որպէսզի բառերէն անդին կարելի ըլլայ հետեւիլ իմաստներուն:

Ներկայացուած բանաստեղծները խորհուրդներու եւ անասելիի յաճախանքը ունին, ինչ որ զանոնք կը դարձնէ մեր ժամանակակիցները, մեր հարցականներով: Կարելի չէ այս բանաստեղծները կարդալ վէպի մը պէս: Անոնք կը հրաւիրեն մտածման, կը ստիպեն վերադառնալ, կրկին լսել, պահ

մը փակել գիրը, հզօր տպաւորութիւններու ազդեցութեան տակ:

ԵՌՄԵՖ ԷԼ-ԽԱԼ ունկնդիր է տիեզերական խորհուրդին: «Աղօթք մեհեանին մէջ VIIրդ պաստառը համապատկեր մըն է, ուր կեանքը, գեղեցիկը եւ խորհուրդը կ'ընդելուզուին: Եւ յաւերժական Կինը, կեանքի շարունակականութեան խորհուրդ եւ երաշխիք, որ միաժամանակ ապրում է, տենչ.

Զգեստդ այդպէս մի՛ ծալեր: Թող մարմինդ մտնէ ներս: Թող բարձրանայ: Ծիծերդ երկու գագաթներ են: Զգլխիչ է էջքը անոնց, որ կը բանայ երազները մարմինին:

... ..

Կանգնէ՛ դէմս մերկամարմին եւ ես քեզի ցոյց պիտի տամ բանալիները կեանքին:

ԱՏՈՆԻԱ (Ալի Ահմէտ Սա'իտ) բանաստեղծը: Միրոյ արտայայտութիւն է Սարգիս Կիրակոսեանի վերլուծումը, իր կարգին գրականութիւն, երբ կը կատարէ իր մասնակցութեամբ ընթերցումը, բռնելով էականը Ատոնիսի իւրայատուկ աշխարհին.

Ես ձամբորդն եմ որ դէմքը ձգեց
կանթեղին ապակիին վրայ
իմ քարտէսս երկիր մըն է առանց արարիչի
եւ մերժումը աւետարանս է:

Ինչպէս ժամանակակից մարդը, Ատոնիս ունի համամարդկային տեսիլք, սահմաններէն անդին: Ան կը խորացնէ մտածումը, եւ կը հանդիպի մարդու անթափանցութեան ցաւին.

Պատը պատռ՞վ փոխարինեմ,





ԲԱԳԻՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

Երբ շփոթանք շփոթանքն է մէկուն, որ լոյս կը սփռէ,
շփոթն անոր, որ ամէն ինչ գիտէ...

Արդի մարդուն արձագանգող արդի բանաստեղծ մը, որ կը զգայ թէ ինչպէս
ժամանակակից մարդկութիւնը իրատիքին ունեցող բանաստեղծը, մարդը
ընդհանրապէս, կը դատապարտէ ինքնամեկուսացման, առանձնութեան: Եւ
դարձ` իր ահաւորութեամբ, կը պայթի «Հայելի մը քսաներորդ դարուն հա-
մար» բանաստեղծութեան մէջ.

Դագաղ մը որ մանուկի դէմք կը հագուի,
մատեան մը, որ ագռաւի
աղիքներուն մէջ կը դրուի,
հրէշ մը որ ծաղիկ բռնած կ'ընթանայ.

ապառաժ մը,
որ խենթի մը թոքերուն մէջ կը շնչէ,-
ահաւասիկ
այս է դարձ քսաներորդ:

Ատոնիս կը հասնի նոյն դարու թելադրած իմաստութեան, որ հրաւեր է
խորհրդածութեան, «Վիճակ համոզումի» խորագրին տակ գրուած երկտող
բանաստեղծութեան մէջ.

Չեմ կասկածիր, ձիերը, որ առասպելներ թամբեցին,
Իրենց ասպետները կը սպաննեն:

Եւ ի վերջոյ մեր խելառ ինքնախաբէութիւնը.

Թերեւս,
Երկրի վրայ սէր չկայ,
բացի անկէ, որ կ'երեւակայենք
թէ օր մը զայն ձեռք պիտի ձգենք:

ՇԱՌԻԳԻ ԱՊԻ ՇԱԳՐԱՆ կը հետեւի: Երբ Սարգիս Կիրակոսեան զայն կը
ներկայացնէ, խորագրով ամէն բան կ'ըսէ. «Արտասովոր խօսքի երկրպա-
գուն»: Այս բանաստեղծը եւս հասկցուելու ցանկութիւն ունի, բայց կայ անհե-
թեքը, որուն կը բախինք: Խիտ, անսթեւեթ եւ անպաճոյճ բառերով, առանց
ողբերգակի կացութիւն ստեղծելու, կը գրէ.

ՅՈՒՍԱՀԱՏԵՅԱՅ ԱՅԾԻՆ ՊԷՍ

Դիմագիծներս խաղողներ թթխմորուեցան
յուսահատեցայ այծին պէս, բլուրներուն պէս
որոշեցի հրաժարիլ իրաւունքէս





ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

Pakine

գիրքը փակել
պարտեզը ամփոփել
չկայ թիթեռնիկ եւ ոչ ալ սիրերգ
կայ փուշ միայն
անմահ քերթողներուն համար
ամէն:

Բանաստեղծը միշտ կը տարուբերի կարօտներու եւ մենութեան արահետներուն վրայ: Արդէն կարօտը կը ծնի մենութեան մէջ, կամ մենութիւնը ինք կը բանայ դռները կարօտներու: Շաուգի Ապի Շագրայի «Թագաւորը կը խնդայ» բանաստեղծութիւնը կը վկայէ խորացող ապրումներու մասին.

Դրան առջեւ ձիւն կայ
հայելիին առջեւ ամպ կայ
կեանքին առջեւ ուրուական կայ
ուրեմն ես եմ հարցադրողն ու դաշունահարուածը
կառատան մէջ վերքս ու զայրոյթս կը նորոգեմ
եւ երբ կը մսիմ՝ անապատը կը մսի
եւ աւազը կատու կը կուտակուի ինծի համար
լուսինը կը մօտենայ կորստականին
եւ ձեռքս՝ ջերմութեան կռակին,
պատկերին ու թաշկինակին
ո՞վ կը քարկոծէ զիս ափ մը ոսկիով
երբ քահանան զիս չծեծեց ձիպոտով
ոչ ալ թշնամիներս՝ ձիւղով
մինչ եղէզը դէպի ձշակ
ձշակը դէպի առուակ
մոգը դէպի քարայր կը վազէ
եւ թագաւորէն զատ ո՛չ ոք
կը խնդայ, եւ իր փորին մէջ,
եւ իր սրտին մէջ դառնութեան սիրամարգը կը ծիծաղի,
մինչ ես դէպի մահը գինովցայ,
բաժակն ու ապակին վառեցի
եւ ծուխը ծակեց զիս:

Շաուգի Ապի Շագրայի տողերը հրաւեր են ըսուածէն անդին չըսուածը իմանալու:

ՈՒՆՍԻ ԷԼ-ՀԱԺԻ հանդէպ Սարգիս Կիրակոսեան նոյնքան հիացում ունի, եւ կ'ըմբռնէ անոր բնագանգական ապրումը, երբ կը մէջբերէ իր վերլուծման մէջ.

Պսակեցէք ձեր գլուխները մուտքին ոսկիով
եւ այրեցէք ձեր ետին
այրեցէք ձեր ետին





ԲԱԳԻՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

աշխարհը այրեցէք վերադարձին արեւով:

Երկարաշունչ բանաստեղծություններ ունի Ունսի Էլ-Հաժ, որոնք կը հաղորդուին յաւերժի եւ շարունակուելու հարցականներով, որոնք անմիջականութեան կը տանին ընթերցողը: Իսկ բառերը հարցականներուն պատասխան կ'ըլլա՞ն: Ինչպէ՞ս կը հասկցուին բազմաձայն սպիտակութիւնները: Անոնք արձագանգն են ոչինչին եւ ունայնին:

Սպիտակ է աշխարհը
սպիտակ է անձրեւը
սպիտակ են ձայները
սպիտակ է մարմինդ եւ սպիտակ են ատամներդ
սպիտակ է մելանը
եւ թուղթերն են սպիտակ
լսէ՛ զիս լսէ՛ զիս,
քեզ կը կանչեն լեռներէն ու ձորերէն
քեզ կը կանչեն ծառին ծոցէն եւ ամպերուն շրթներէն
քեզ կը կանչեն ժայռերէն ու աղբիւրներէն
գարունէ գարուն եւ քեզ կը կանչեն
քեզ կը կանչեն ամէն բանի վրայէն, ամէն բանի տակէն,
եւ բոլոր ծագերէն
լսէ՛ գալուստն իմ՝ պղտոր ու թաքնաթաքուն
լսէ՛ զիս լսէ՛ զիս՝ վտարուած ու օտարական
սեւ է սիրտս մեմութեամբ եւ հոգիս ալ կարմիր է
բայց տապանակն աշխարհի սպիտակ է
ու բառերն են սպիտակ:

ՓՈԼ ՇԱԽՈՒԼ նորարարութեան առաջնորդող դէմքն է: Սարգիս Կիրակոսեանի գնահատումով, անոր ազդեցութիւնը կը տարածուի Լիբանանէն դուրս, ընդհանրապէս արաբական աշխարհին վրայ: Նաեւ, ան կը կրէ իր ժամանակի տազնապները, զանոնք կ'արտայայտէ խիտ եւ իրապաշտ ոճով: Արդարեւ, այս բանաստեղծը քանի մը բառով հորիզոններ բացող կախարդ է:

Քանի մը հատուածներ, եւ ինչե՛ր կը թելադրեն անոնք:

* * *

Առաւօտները խաղաղ հանգչած են աւազին մէջ
կեանք մը ձերմակ
երբ մետաղը ձիւները ծածկէ

(Ուղեւորները ձամբաները կը կրճատեն
սպիտակ մարմիններու վրայ)

* * *

Երբ քաղաքը կ'այրեն





ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

Pakine

մահը կը փայլի
մահը կը փայլի մոխիրէն ետք
կը մնայ արեւը սեւ
եւ կը մերկանան ժպիտները յաւերժութեան

Ով կը խօսի այս մետաղեայ լռութեան մէջ

* * *

Զոհը կը լուսաւորէ դէմքը սեւ ովկիանոսին
փլատակներուն եւ ապակիին միջեւ շանթը իր ուղին կը կորսնցնէ

ՄԱՐԴԸ ԵՒ ԱԹՈՌԸ

Սրճարանին մէջ՝ աթոռ մը: Աթոռին մէջ՝ մարդ մը: Գծեց աթոռը եւ մոռցաւ մարդը: Յետոյ գծեց մարդը եւ մոռցաւ աթոռը: Եւ երբ ուզեց այդ մարդը գծել այդ աթոռին մէջ, մարդը մեկնած էր սրճարանէն եւ աթոռը ձգած դատարկ: Ճիշդ այն ատեն մարդը գծեց այդ աթոռին մէջ:

Փօլ Շաուլի տողերուն մէջ բանաստեղծը կը հանդիպի իմաստութեան, եւ իմաստունը կը դատէ իր մարդն ու ժամանակը:

ԱՊՊԱՍ ՊԱՅՏՈՒՆ գիր-գրականութեամբ շնչած է տեւաբար: Կը գրէ, կը գրախօսէ: Թարգմանուած է տարբեր լեզուներու: Սարգիս Կիրակոսեան կ'ըսէ, որ այս բանաստեղծը մասնակից է «ստեղծագործական գոյամարտ»ին, որ տեղի կ'ունենայ «անկարելիին եւ վտանգին անդիմադրելի անդունդին վերեւ», վերագտնելու համար «տարտղնուած ժամանակները, որ հաստատէ իշխանութիւնը վտանգուած վայրերուն, լեզու տայ անկենդան եւ համը մարմիններուն...»: Այսինքն բանաստեղծը ոչ տիրացու է ոչ դիւանակալ, ընթացիկէն անդին կը գտնուի ան: Ժամանակի եւ ապրողներու վկայ Ապպաս Պայտուն կը գրէ.

ՅԱԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Մշուշին մէջ աստիճան մը շինեցին, տասնեակներ կեցուցին անոր վրայ, մոռացութեան մէջ պատուհաններ բացին, հոնկէ մարդիկ գնդակահարեցին: Լռութեան մէջ բերդ մը կառուցեցին, գայն լեցուցին զինուորներով ու բանտարկեալներով: Աղբերով գծեցին եւ իմաստուն խեցի մը՝ ծուխով կիներ, իսկ նոյնիմքն մէզով՝ հաւաքական գերեզմանատուն մը: Իջան-ելան: Ձերբակալեցին պատանիները եւ գետին շարտեցին իրենց երեսներուն վրայ: Այդ բոլորը տեղի ունեցաւ մելանէ սենեակներու եւ պարտէզներու մէջ, որոնք կ'անհետանային, ամէն անգամ որ կախաղան բարձրացողները ստուերներու կը վերածուէին: Այս բոլորը ըրին մէկ խօսքով եւ մէկ խօսքով փողոցներն ի վար յորդեցան, դրօշներ եւ ցնցոտիներ բարձրացուցին եւ կորսուեցան բիրեղապակեայ գունդին մէջ: Եւ ան, որ տեսաւ երկու աչքով, իր աչքերը վար սահեցան երկու կաթիլ ջուրի պէս: Երազներուն





ԲԱԳԻՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

սրբագրումը կ'անցնի եւ նոյն արագութեամբ կը կատարուի սենեակներուն դասաւորումը եւ նոյնինքն ցաւին քննադատութիւնը:

ՀՊՈՒՄ – 2

Համբոյրը որ վերջապէս գումատրուեցաւ
ակամայ ինկաւ կողքիդ:
Ընկողմանած էիր նաւակի մը պէս: Զեփիւռը
Համբոյրս անմիջապէս դէպի մարմինդ հրեց
Զեռքէս բազմաթիւ տրոփներ փախուստ տուին:
Զեփիւռը հիմա ցնորքներ կը տանի:

Նրբութիւն, թելադրականութիւն եւ ժամանակը որ կ'անցնի եւ ներկան կը
տանի, կը վերածէ յուշի կամ կարօտի: Երանգներու բանաստեղծութիւն:

ՈՒՍՏԻՆՆԱՍՏԷՆ է շարքին վերջինը: Կիսով արտագաղթած լիբանանցի
մը: Աշխատելէ ետք Լիբանան եւ Աւստրալիա, այժմ կը բնակի Աւստրալիա
եւ կ'աշխատի հոն լոյս տեսնող «Ան Նահար» օրաթերթին մէջ: Լիբանանի
տազնապներու ծնունդ է այս բանաստեղծը եւ իր ոգորումներու արտայայ-
տութիւնն են իր տողերը: Բառերու կախարդանքով կ'ապրի եւ կ'ապրեցնէ
ինքզինք, անցեալ մը եւ ներկան:

* * *

Պէտք է խոստովանիլ որ օրերն այս
խարիսխ կը նետեն մեռած գորտերու պէս
եւ ժպիտները կ'ընեն ցաւցնող
լիճերուն առջեւ
եւ թէ սէրը
աղ է կապոյտ
որ հիմա կը տեղայ առանձին
եւ կապոյտ:

* * *

Տիկին իմ թախծահար անջրպետին մէջ
դէմքս ինծի մի՛ վերադարձներ
գետերուն պէս իմ ուղղութեամբ մի՛ յորդիր
տակառ ինչպէս հեղուկ դուրս մի՛ պայթիր
ազատութիւնը կէսն է զգուանքիս
պատանդուհին՝ միւս կէսս
եւ բոլոր որդիներս՝ մահը:

ՀԵՌԱՒՈՐ ԿԷՏ

Քիչ մը աղ կը քնանայ
ձեռքիս մէջ որ հաճոյացաւ իր մնայուն լռութեամբ





ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

Pakine

աղ
կարծես թէ անցեալին ձեռքս ծով էր
եւ գլուխս
որ հիմա հետս է
իր մազերը կը սանտրէ հեռաւոր ցամաքամասէ մը:

երազներ
կէս գիշերէն ետք
գիւղի մը մէջ

անցորդ մը պարզ փողոցի մը մէջ
ուր խանութ մը կայ
եւ հեռաւոր կէտ մը
որ կարծեմ նստարան է:

ԼՌԵԼԵԱՅՆ ԵՆԹԱԿԱՅ

Ցտեսութիւն ըսելէ եւ դուրս ելլելէ ետք
իրմէ մնաց փոքր ստուեր մը տան լամբարը կը շինէր
եւ քալեց անոր ետեւէն:
Անցաւ դարպասը, յետոյ յանկարծ, լոյսը մարեցին
եւ իր ձամբան կորսնցուց:

Առաւօտուն

երբ աղախինը պատուհանը բացաւ
տեսաւ, որ ստուեր մը կը քնանայ
առանձին՝ մայթին վրայ:

Ուստի Սաատէ եւս իր կարգին կը դաջէ անհեթեթը եւ ունայնը:

*

* *

Սարգիս Կիրակոսեանի այս վերծանման աշխատանքը մարդը կը մօտեց-
նէ ընդհանրապէս բանաստեղծութեան հետ հաղորդումի: Մասնաւորաբար
մեզի ժամանակակից արաբ բանաստեղծներու, որոնք փակ գիրք պիտի
մնային հայ ընթերցողներու ստուար մեծամասնութեան համար:

Ուշագրաւ բանաստեղծներ, որոնք ոչ նիզակ կը ճօճեն, ոչ մարտահրաւեր
կ'ուղղեն, կը սպասարկեն գեղեցիկ խօսքին եւ գեղեցիկին, առանց պարսաւի
եւ հայիուչի:

Այս էջերը «գրախօսական»ի ընթացիկ յաւակնութիւնը չունին: Կ'արտա-
յայտեն դրական տպաւորութիւն մը եւ գեղարուեստական վայելք մը կիսելու
ցանկութիւնը:

Յուլիս-Օգոստոս, 2011,
Նուազի-լը-Կրան



ԳՈՀԱՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԳԻ

«ՄՈՌԱՑՈՒԱԾ ԷՋԵՐ»Ի Ա ՀԱՏՈՐԸ

Վերջակետից առաջ բազմակետ է: Ու դժուար է կռահել՝ անյայտութեամբ, թե՞ շարունակական իմաստ ունեն այդ կետերը: Եթե չլինէր «Արամ Հայկագ. Նամակներ» (Երեւան, 2009, կազմող՝ բանասիրական գիտությունների դոկտոր Մ. Մ. Խաչատրեան) գիրքը, «Արամ Հայկագ. Մոռացուած էջեր» գրքի Ա հատորում կը գերիշխէր անյայտութիւնը: Արամ Հայկագը (Արամ Չեքմեան, 1900-1986) սպասում էր իր հոգեւոր վերադարձին Հայրենիք (միշտ մեծատառ էր գրում- Գ. Ա.): Փաստօրէն նամակների հատորը գրողի՝ Հայրենիքում հրատարակւած առաջին գիրքն է: Նշենք, որ Մ. Խաչատրեանն ընթերցողի սեղանին դրել է Համաստեղի «Մոռացուած էջեր» քառահատորը, որի խմբագիրը լինելու երջանիկ պատեհութիւնն ունեցել ենք տարիներ առաջ:

Հերքն Արամ Հայկագինն է:

«Մոռացուած էջեր»ի այս հատորում ժամանակագրական կարգով ընդգրկուած են 1924-1950 թթ. «Հայրենիք» (Բոստոն) թերթի՝ Հայաստանի Ազգային գրադարանում պահուող համարներում տպագրուած բազմազան նիւթեր՝ յօդուածներ, պատմուածքներ, յուշագրութիւններ եւ այլն:

Յօդուածների մի մեծ շարք նուիրուած է Ամերիկայի հայ թատրոնին («Արքայ Լիր», «Հայ թատրոնը եւ մենք», «Հին աստուածները», «Արուեստի Գողգոթան», «Նոր խաղ մը», «Հայրենիքը», «Չարտաշի թագուհին» եւ այլն): Սրանց զգալի մասը գրողի առաջին փորձերից են եւ նման են կառուցուածքով. նախ ներկայացնում է քննարկուող գրական երկը, բեմադրութեան մանրամասները, յետոյ դիպուկ նետահարի վարպետութեամբ անդրադառնում կատարողական արուեստին ու բնութագրում դերակատարներին: Ուշագրաւ են նշանաւոր դերասաններ Յովհաննէս Աբելեանին ու Յովհաննէս Չարիֆեանին նուիրուած էջերը: Յ. Չարիֆեանի հետ Արամ Հայկագի ծանօթութիւնը սկսուել է նրանց Պոլսից Ամերիկա տանող շոգենաւի վրայ: Կենսագրական այս հետաքրքիր էջերին գրողն անդրադարձել է նաեւ «Ճամբորդութիւն մը Յ. Չարիֆեանի հետ» յօդուածում եւ «Ուղեւորութիւն Յովհաննէս Չարիֆեանի հետ» ծաւալուն յուշագրութիւնում, որ պահում է գրողի արխիւում՝ Գրականութեան եւ արուեստի թանգարանում (Գ-ԱԹ)՝ Արամ Հայկագի ֆոնդում: Այս նիւթերը հետաքրքիր մանրամասներով լրացնում են միմեանց ու ամբողջացնում ինչպէս մեծ դերասանի, այնպէս էլ գրողի կենսագրութեան էջերը:

Ինչպէս վկայում է Արամ Հայկագի մտերիմներից Հրանտ Մարգարեանը, հաստատում են նրա՝ գրքում ներկայացուող գրական ժառանգութեան անժանօթ այս էջերը, գրողը՝ Նիւ Եորքի գրական ու ազգային կեանքի կենտրոնական դէմքերից էր, բոլոր ձեռնարկների մասնա-



«Թերեւս օր մը Հայաստանի մէջ, ուր լայն միջոցներ ու ընթերցողներու մեծ թիւ ունին, պայմանները փոխուին, ու անոնք ընեն, ինչ որ ես չկրցի ընել...»:

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

Կիցր: Նա Հայ գրական միութեան գործունէութեանն անդրադարձել է «Լ. Շանթի «Ինկած բերդի իշխանուհի»ն եւ «Գրական վիճաբանութիւն «Հին աստուածներ»ուն շուրջ» յօդուածներում:

Մտորումների տեղիք է տալիս «Բարբառներու միացումը հնարաւոր է» (խօսքը գրական հայերէնի երկու ճիւղերի մասին է- Գ. Ա.) յօդուածը, որ գրուած է 1929ին: Խնդրի համակողմանի քննութիւնից յետոյ գրողն առաջարկում է. «Յետոյ հասարակաց լեզուի մը ստեղծումին համար բնականաբար պէտք է նախ եւ առաջ պահանջքը նկատի ունենանք: Մենք առանձին-առանձին տեսանք, թէ երկու բարբառներն ալ լիովին կը բաւարարեն գանոնք գործածող հատուածներուն: Իսկ միացման պահանջը այն ատեն միայն գոյութիւն կ'ունենայ, երբ բարբառներու յարաբերութեան խրամը այնքան կը մեծնայ, որ միեւնոյն լեզուով խօսողները այդ տարբերութեան պատճառով անկարող կ'ըլլան իրար հասկնալ: Իսկ մենք, փառք որու որ կ'ուզէք, չենք հասած այդ կէտին եւ հասնելու ալ հաւանականութիւն չունինք»:

Գրողը յատուկ խնամքով ու երախտագիտութեամբ է յիշում, արձանագրում իր Ուսուցչի՝ Յակոբ Օշականի հետ կապուած ամէն մի դէպք՝ մեծ ու փոքր: Գրականութեան դասերին, որոնց Արամ Չեքենեանը մասնակցեց ընդամենը ... վեց ամիս, լսած խորհուրդները, ընկերների ու իր գրած շարադրութիւնների քննարկումը յղկեցին պատանու ճաշակը, յետոյ այդ ամուր հիմքի վրայ բարձրացաւ գրողի ինքնատիպ աշխարհը՝ ժանրերի ու թեմատիկայի բազմազանութեամբ, անկրկնելի **հումորով** ու լատենտութեամբ: Հրաժեշտի պահին Ուսուցչին տուած խոստումը պատճառ դարձաւ, որ հեռաւոր Ամերիկայի մեծ քաղաքում յայտնուած պատանին օրուան հացը վաստակելու, երկու գաւակներին կերակրելու ամէնօրեայ հոգսին զուգահեռ գրիչ վերցնի, ու պատմութեան անգլիական ժողովածուն՝ «Յեղին ձայնը» (1949, Նիւ Եորք), հաստատեց գրողի նրա համբար:

Գրքի երկրորդ՝ «Յաւելուած» վերնագրուած բաժնում ընդգրկուած են «Հայրենիք», «Բագին» ամսագրերում տպագրուած, ինչպէս նաեւ գրողի արխիւում պահուող մի քանի ծաւալուն նիւթեր: Այս շարքում առաջինը ԳԱԹ-ում պահուող «Գրականութիւն եւ մշակոյթ» յօդուածն է, որը հարուստ նիւթ է տալիս գրողի գեղագիտական հայեացքները հասկանալու համար: «Շատ բան ըսուած ու գրուած է մշակոյթի մասին. ան՝ մշակոյթը, ազգի մը իմացական ձգտումներուն եւ արտադրութիւններուն համադրութիւնով կը կազմուի: Ուրեմն հասկնալի է, որ ցեղի մը մշակոյթի գանձարանը բազմակողմանի նիւթերով է կազմուած: Գրականութիւնը այդ նիւթերէն մէկն է», - գրում է Արամ Հայկազը: Նա նշում է, որ ինչպէս կեանքում, այնպէս



ԲԱԳԻՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

Էլ ընկերային յարաբերություններում նախապատուությունը տալիս է անկեղծությանը, արժեքներում է գրականությունը՝ որպես դաստիարակության հզոր միջոցներից ու անկեղծօրէն հաւատում, «թէ գրողն ալ, ինչպէս ուրիշներ, իր ցեղին հանդէպ, իր ժողովուրդին հանդէպ որոշ պարտականութիւններ ունի»:

Արամ Հայկազի գրական ժառանգութիւնը նրա քառատուած ճակատագրի (պատահական չէ գրքերից մէկի վերնագիրը՝ «Չորս աշխարհ») գեղարուեստական տարեգրութիւնն է: Շապինգարահիսարցի հայի կեանքի բաց վերքն ազգային մեր ողբերգութիւնն է՝ հայոց Մեծ Եղեռնը՝ Արհաւիրքը, ինչպէս գրում է Հայկազը: Փառք Աստծու, այդ ողբերգութեան մէջ կան հերոսական էջեր, որոնցից է Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութիւնը: Հրատարակած առաջին գրքում՝ «Արծուաբնի անկումը» (1935, Բոստոն, անգլերէն)*, «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը» (1971, Նիւ Եորք) հատորում, բազմաթիւ պատմութիւններում ու յօդածներում նա պատմում է կատարուածի մասին: Հերոսամարտում գոհուեցին Արամ Հայկազի հայրը, եղբայրները, բայց նա չի ողբում, այլ հպարտանում է, որ հայ ոգին այն անյոյս ու անհեռանկար տարիներին ոչ միայն կամաւոր գոհ չդարձաւ, այլեւ դիմադրեց ու դիմացաւ: Կործանուող ծննդավայրի պատկերն ու վերապրած ողբերգութեան՝ մօր աչքի առաջ մորթւած եղբօր, անհետ կորած մօր ու նրա խորհրդով իր կրօնափոխութեան յիշատակները գրողի հոգում անթելուած կրակ են, յուշ ու յիշատակ, եւ անգիջող հայր (ինքն իրեն այդպէս էր բնութագրում) մահուան ու կործանումի դէմ կռւում էր **հումորով**, ծիծաղով, որովհետեւ համոզուած էր՝ հայութիւնը չի մոռանալու, յիշելու է ապրելու համար:

Գրքի «Շապին Գարահիսարի հերոսներու յիշատակին», «Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութիւնը» (այս վերտառութեամբ երկու յօդուած) յօդուածները եւս պատմում են անցեալի այս փառահեղ էջերի մասին: Գրում են՝ «յօդուածները» ու երկմտում՝ յօդուած, թէ՞ պատմութիւն: Անկեղծ ասած՝ դժուար է տարրոշել. Արամ Հայկազի յօդուածներն այնքա՛ն հարուստ են գեղարուեստական տարրերով, իսկ պատմութիւնները՝ այնքա՛ն վաւերական ու շիտակ, որ սահմաններ դնելը պարզապէս անիմաստ է. նա պատկերի մեծ վարպետ է: Երեւի նաեւ սրանով է պայմանաւորուած գրքի այս եւ յաջորդ հատորներում (նախնական տուեալներով՝ եւս չորս հատոր) հաւաքուած նիւթը ժամանակագրական կարգով ներկայացնելու անհրաժեշտութիւնը: Տեղին է յիշատակել «Իմ մահը» պատմութիւնը («Յեղին ձայնը» ժողովածու), որտեղ գրողն այնպիսի համոզիչ վաւերականութեամբ է ստեղծում միջավայրը, որ դժուարանում ես հաւատալ, թէ նկարագրուածը սոսկ երագ է:

Ինչեւ, չշեղուենք նիւթից ու չմոռանանք՝ մեր խնդիրը Արամ Հայկազի «Մոռացուած էջեր»ի Ա. հատորը ներկայացնելն է: Գրքում հաւաքուած բոլոր գործերի մասին կարելի է առանձին-առանձին ու հանգամանալից խօսել, բայց գիրքը արդէն դարձել է Սփիւռքի եւ Հայաստանի ընթերցող հանրութեան սեփականութիւնը, ու ընթերցողն ինքը եզրայանգումներ անելու հնարաւորութիւն կ'ունենայ, ուզում են կարեւորել Արամ Հայկազի գրականութեան մի քանի առանձնայատկութիւններ: Հերոսամարտի մասնակից, Եղեռնի անվերա-

* Գիրքը Արամ Հայկազի դուստրը՝ Այրիսը, վերահրատարակել է 2010 թ., եւ Նիւ Եորքում, Պոստոնում, Նիւ Ջորջիում, Ֆիլադելֆիայում գրողի յորելեանական հանդէսների, ինչպէս նաեւ գրքերի երեւանեան շնորհանդեսի մասնակիցները նուէր ստացան երեք գիրք՝ «Արամ Հայկազ. Նամակներ», «Արամ Հայկազ. Մոռացուած էջեր» և հատոր, "Aram Haikaz, The Faii of Aerie" («Արծուաբնի անկումը»):





ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

Pakine

դարձ ճամբաներով անցած, բնօրրանից հարկադրաբար հեռացած հայ մարդն ու գրողը չափացած չէ աշխարհի ու մարդկության հանդեպ: Նրա հոգում կենդանի են մօր աղօթքները, Կաղանդի գիշերը ոսկեհոսումի անկրկնելի ու անորսալի պահի կախարդանքը («Կաղանդի երգ» ու այս շարքի բազմաթիվ պատմումաժքներ), Հայրենիքի աննման ու առատ ձիւնը, ծննդավայրի երկրն-քով քայլող ամպի ծեղի պատկերը, Միսլիմ դարձած Արամի ու նրա մի քանի հաւատափոխ հայ բնկերների պատանեկան առաջին ուրախություններն ու անհուն կարօտը: «Մղձաւանջը» Քիւրտիստանում յայտնուած Արամ-Միսլիմի յիշողութիւնների հենքի վրայ կառուցուած տխուր պատկեր է, առաջին ստեղծագործութիւնը, որի տակ գրողը ստորագրել է Արամ Հայկազ՝ իր անուանը միացնելով նահատակուած եղբօր անունը: Վրէժ, թէ՛ կենսաբանական իր տեսակի գոյութեան իրաւունք. այս է պատմումաժքի հարցադրումը, որին հարկադրուած է պատասխանել 16-17 տարեկան պատանի հերոսը: Մեռնող վիրաւոր մարդն արժանի է կարեկցանքի, բայց թուրք զինուորի ու նրա բնկերների ձեռքերով «օր մը քարերը արիւններու ամէնէն սրբազանովը կարմրեցան կատաղի ու անհաւասար պայքարի մը վախճանէն յետոյ, ուր հազար նշխարներ կան անթաղ ու անաղօթք»: Երկմտանքից չեն ազատում, հոգին չեն թեթեւացնում ո՛չ քաջարի Վահագնին, ո՛չ էլ ամենաներող Յիսուսին ուղղուած աղօթքները: Կատարում է ամենաանսպասելին. հայերից խլած Երլտրզ գոմէշը կճղակների տակ տրորում է ապաքինուելուց յետոյ հայերի հարցը «արմատապէս» լուծել երազող թուրք զինուորին: «... Յետոյ ցեղիս ու իմ սիրելիներուս անձանօք ու չորս հովերուն ցրուած գերեզման ունեցող-չունեցողներուն յիշեցի ու լացի...», - եզրափակում է գրողը:

Ուշագրաւ ու հարուստ է գրքի ծանօթագրութիւնների բաժինը, որի պարզաբանումները ոչ միայն լրացնում են ներկայացուող նիւթերը, այլեւ ամբողջացնում գրողի կեանքի ու գործունէութեան պատկերը: Գիրքն ունի բառարան:

Արամ Հայկազի համար անցած տասնամեակները նշանակութիւն չունեն. նա ապրում է իր զօրեղ յիշողութեան դաշտում: «Այս գիշեր, գողտրիկ պատմումաժքում բնդգծուած է երկու պատկեր՝ կործանում ու լոյսի հաւատով ապրելու յոյս. «Ու արեւուն տակ ծլարձակող ցորեններու պէս աճապարանքով կը մեծնայինք մենք, մինչեւ որ չար օր մը անօրէն ձեռք մը կարմիր տապանաքար մը դրաւ մեր գիւղին ու Հայրենիքին վրայ...»

Բայց այս գիշեր, բայց այս գիշեր գիտեմ, թէ, հակառակ կամքիս, անկողին մտնելէ առաջ պիտի կրկնեմ մանկութեան օրերուս մօրս սորվեցուցած մէկ աղօթքը ու ճրագը վառ պիտի թողում պատուհանիս առջեւ...»: Այդ ճրագի՝ տուն կանչելու, բնօրրանի յիշատակն անմեռ պահելու առաքելութիւնն ունի Արամ Հայկազի այս նոր գրքի ծնունդը, քանզի գրողի գրական դաշտում ոչ միայն պատմութիւն, տառապանք ու անկրկնելի յոյզեր կան, այլեւ գրական սքանչելի գոհարներ, որոնք «Տիոնիկ»ի հեղինակի գրական ժառանգութեան ոչ պակաս կարեւոր մասն են, ուրեմն՝ մեր ազգային հարստութեան անբաժան բաղկացուցիչը: Շատ կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ Հայրենիքում գրողի գրական ժառանգութեան դռները բացում են այս էջերով, որոնք կը ստիպեն բնթերցողին թերթել նրա հրատարակուած ժողովածուներն ու տիրոջ իրաւունքով յայտարարել՝ գտել է Սփիւքի հայ գրականութեան մեծերից մէկի աշխարհ տանող ճանապարհը:

Այս եզակի հնարաւորութեան համար նախ եւ առաջ շնորհակալութիւն ՀՀ «Տարուայ Ուսուցիչ» (1993), բանասիրական գիտութիւնների դոկտոր, Սփիւքի հայ գրականութեան ան-



ԲԱԳԻՆ

ՈԳԵԿՈՉՈՒՄ

ՄԱՐՈՒՆ ԵՐԱՍԵԱՆ



ԱՐԴԻԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊՈՎ ԴԱՍԱԿԱՆ ՄԸ

(ՄԻՍԱԲ ՄԵԾԱՐԵՆՑԻ ծննդեան 125ամեակին առիթով)

“It is difficult to get the news from poems
Yet one die miserably every day
For lack
Of what is found there”

William Carlos Williams

Ի՞նչ կարելի է ըսել 19րդ դարում ծնած բանաստեղծի մը մասին այսօր, 21րդ դարում. Եւ ի վերջոյ, պայմա՞ն է որ բան մը ըստի, երբ բանաստեղծութիւնը դուրս է ինկեր մեր առօրեայէն եւ դարձեր շատ փոքր թիւի մը հաճոյքը, այն ալ ոչ որպէս ընթերցող, այլ՝ ստեղծագործող: Այլ խօսքով՝ երբ կարդացողէ աւելի գրող կայ, ի՞նչ ըսել եւ ինչո՞ւ ըսել ոեւէ բանաստեղծի որեւէ ամեակին առիթով:

Տակաւին, դասախօսութեան մը պարագային, կայ «որո՞ւ ըսել»ու հարցը, որովհետեւ պարզ է, որ ըստ ունկնդիր հասարակութեան, կրնայ փոխուիլ նաեւ ըսուելիք խօսքը: Երբ երիտասարդ մը, որ այնքան ալ հեռու չէ բանաստեղծութենէն, կարիք ունի կենսագրական որոշ տուեալներ իմանալու, միջին տարիքի ունկնդիրը կրնայ այդ տեսակի մանրամասնութիւնները տաղտկալի գտնել: Հակառակ այս վերապահութիւններուն, այսօր պիտի փորձեն խօսիլ Մեծարենցի մասին, եւ գինք մօտ բերել մեզի:

Մեծարենց երբ մահացաւ միայն քսաներկու տարեկան էր, եւ արդէն նուա-

ճած էր օրուան կարեւոր քննադատներուն համակրանքը, եւ ուրիշներու բուն քննադատութիւնները: Թերեւս մոռցուած անուն մը ըլլար, եթէ չըլլային այդ քննադատութիւնները, որովհետեւ ներքողները ընդհանրապէս տոկոսութիւն չեն պարգեւեր քերթողութեան դժուար ճանապարհի ուղեւորներուն:

Ձիւնք քննադատողներու յօդուածներուն դէմ յօդուածով ելոյթ ունեցած է Մեծարեւոյց, հակառակ իր գրեթէ պատանեկան տարիքին: Այդ յօդուածներուն մէջ բանաստեղծին դրսեւորած գրական հմտութիւնը միայն զարմանք կը պատճառէ:

Բայց կան նման հոգիներ կեանքի մէջ, հասուն հոգիներ, որոնք բնածին հասունութեամբ մը աշխարհ կու գան, եւ շատ կարճ միջոցի մը մէջ իրենց առաքելութիւնը կատարելէ ետք կը մեկնին, միայն վայելք եւ արհեստանք ձգելով մեզի:

Իր քերթուածները կարդալէ առաջ կը փորձուիմ իր քննադատութիւնն ու ինքնաքննադատութիւնը ներկայացնել, թէի անոնք հիմնական մասը չեն իր ժառանգութեան, սակայն կը հաստատեն ի վերուստ տրուած տաղանդը, ամբողջութիւն կու տան իր գրչին եւ հմտութիւն՝ խօսքին:

Մեծարեւոյց այնպիսի անուն մըն է, որուն կ'անդրադառնան մեր գրականութեան մեծերը, Յակոբ Օշականէն մինչեւ Պօղոս Սնապեան,- որ խմբագրած է Մեծարեւոյցի ամբողջական երկը, Անթիլիասէն լոյս տեսած,- եւ աւելի ուշ՝ Գրիգոր Պրլտեան, որ ուզած է «արդիական» ընթերցում մը ընել Մեծարեւոյցի երկին («Տրամ», Պէյրութ 1980):

Ամբողջ 34 էջերու վրայ գրականութեան դոկտոր մը կ'ուզէ «կարդալ ներքին կառոյցը, որուն շուրջ ուժեր, պատկերներ, իմաստներ կը բեւեռուին, կը մակարդակուին, առանց որ կարենան զայն սպառել»: Մեծարեւոյցի քերթուածները, որոնք ամբողջ հոգեբանական-բնագանցական աշխարհ մը կ'ամփոփեն, այնքան արդիական են, որ կրնան ենթարկուիլ ընթերցումի արդիական կերպերու եւ աւելի հարստացած դուրս գալ այդ ընթերցումէն: Ասիկա միայն տաղանդի մը հաստատումը կրնայ ըլլալ՝ անժամանցելիութիւն, կամ՝ արդիականութիւն:

Արդիականութեան առաջին հաստատումը պիտի գայ իր «Ինքնադատութեան փորձ մը»էն, որ Զրաքեանի «Ներաշխարհը հեղինակէն դիտուած»ին հետ այս երեւոյթին առաջին օրինակներն են Արեւմտահայ գրականութեան մէջ:

Գրական դատումը կ'ենթադրէ մուտք մը դէպի գրութեան աշխարհը. ինքնադատումի պարագային այս մուտքը նախ ելք մը կը պարտադրէ հեղինակին, ելք մը իր անձէն եւ իր ստեղծագործութենէն դուրս, դուրսէն, հեռուէն դիտելու եւ առարկայականօրէն դատելու համար գրութիւնը:

Այս կրկնակի շարժումը գիտակցութիւն կ'ենթադրէ, գիտակցութիւն, որ գրութեանական աշխարհը «ներշնչումէ» եւ «մուսաներէ» անդին այլ տարածքներ եւս ունի, տարածքներ, որոնք այնքան օտար կը հնչէին ոչ միայն 19րդ

դարուն, այլ եւ այսօր, մեր շատ ստեղծագործողներուն համար: Ասիկա առաջին յատկանիշն է Մեծարենցի արդիականութեան:

Հետաքրքրական է, որ Մեծարենց իր քերթուածներու վերլուծումին մէջ տրամաբանական մօտեցում մը կը ցուցաբերէ, երբ օրինակ՝ կ'ըսէ.

«Ի՞նչ տրամաբանական յենակէտ կայ ոտանաւորի մը բոլոր տողերն ալ գլխագրով սկսելուն մէջ. Ու միեւնոյն ատեն կը պարզաբանեմ՝ թէ, ըստ կէտադրութեան, վերջակէտէն վերջ միայն պէտք է գլխագրել (գանց ընելով կարգ մը իմանալի բացառութիւններ). այս օրէնքն հարկ է գործադրել անխորտիւր, արձակին ու ոտանաւորին համար, քանի որ ոտանաւորի այդ գլխագարդերն աւելորդ պճնանքէ ու սիրունութենէ տարբեր պաշտօն չունին, ու գլխովին հակառակ են տրամաբանութեան»:

Եւ կը շարունակէ.

«Բայց կ'ուզէի հասկցնել Փայլակին, թէ ինչ ձախող բան է «մտքի չքառութիւն» եւ անտրամաբանութիւն տեսնել արարքի մը մէջ, որ պարզապէս տրամաբանութեան սիրոյն կատարուած է»:

Այլ արդիականութիւն մը եւս կարելի է տեսնել Մեծարենցի մեկնաբանութեան մէջ: Արդիական ընթերցումի նախադրեալներէն մէկը այն է, որ ընթերցողը ինք բերէ մեկնաբանական իր աշխատանքը ընթերցուած երկին, պեղելով, տողերը բանալով, կարդալով նաեւ չգրուածը, եւ այդ ձեւով միանայ հեղինակին, երկի մեկնաբանութեան մէջ:

Մեծարենց կ'ըսէ.

«Անշուշտ «Նոր Տաղեր»ուն մէջ կան գուտ նկարագրական ոտանաւորներ, ուր իմաստասիրութիւն չկայ, այսինքն՝ ընթերցողին թողուած է կրած տպաւորութենէն մեկնիլ դէպի որոշ իմաստասիրութեան մը, որ դիւրաւ կը ծնի ամէն վառ տպաւորութենէ (ընդգծումը մեզմէ. ՄԵ):

Իր յօդուածներէն եւ հոն եղած կարգ մը մէջբերումներէն կարելի է տեսնել նաեւ, որ Մեծարենց, հակառակ հիւանդութեան՝ թոքախտին պատճառով թերաւարտ ըլլալուն, ծանօթ է ժամանակի օտար գրականութիւններուն, մանաւանդ բանաստեղծներու գործերուն, ինչպէս կը մէջբերէ անգլիացի բանաստեղծ Էմըրսոնի մէկ խօսքը, թէ՝ «Բառերը գաղափարի ձեւեր են», կամ՝ «Իրապէս մարդը փայլակներու խորձ մըն է»:

Մեծարենց նաեւ գիտակից է բանաստեղծութեան լեզուական առաքելութեան, որ է լեզուն կենդանի պահել ոչ միայն ժամանակակից կեանքը արտայայտող բառեր «շինել»ով, այլ եւ մեր հին բառերուն կենդանութիւն տալով, գանոնք կրկին շրջանառութեան դնելով, ինչ որ մեր բանաստեղծները, Մեծարենցէն քանի մը տասնեակ տարիներ ետք ըրած են ու կը շարունակեն ընել.

«Այդ բառերը գործածող նախնի մատենագիրներ մենէ շատ աւելի լայն կ'ըմբռնէին լսելութեան եւ առողջանութեան գեղեցիկը,- գիտէին վեհաշուրթն

արտասանել բառերը, ու լսել անոնց վեհանդորրի ձայնը»:

Մեծարենց, հակառակ իր տարիքին, խոր լրջութեամբ կը մօտենայ «բանաստեղծ» կերպարին, հարցադրումի կ'ենթարկէ անոր դերը եւ իր եզրայանգումները չի վարանիր արտայայտելու ամէն պատշաճ առիթի:

Այսպէս, «Ինքնադատութեան փորձ մը» յօդուածին մէջ հարց կու տայ՝ «Ի՞նչ է որ բանաստեղծին կոչումը» եւ կը մէջբերէ Սէն-ժորժ տը Պուելիէի խօսքը.

«Բանաստեղծը սիրոյ կը նմանի. Եւ իր պաշտօնն է ճամբաները լուսաւորել»:

Աւելի անդին, նոյն յօդուածին մէջ կը գրէ.

«Բանաստեղծին ձայնը տիեզերական յարաբերականութեան մը լարը պէտք է ըլլայ, բոլոր գոյութիւններուն համադրական թրթռումով տրոփուն»:

Մեծարենց ունի նաեւ լրիւ գիտակցութիւնը արուեստի սահմանումին եւ սահմաններուն.

«... Մատչելի ըլլալու բոճանքով չըլլայ որ արուեստը ոչնչացնենք. սահման մը կայ՝ ուրկէ վար չի՝ կրնար իջնել գրագետը. թող ընթերցողը, եթէ կ'ուզէ, բարձրանայ այդ աստիճանին՝ ու ճաշակէ գրագետին երկերը. բայց գրագետն ալ, իր դիրքին հրապոյրը աւելցնելու համար պէտք չէ որ վերելակելու տենչեր ունենայ, եւ ասոր համար ստիպուի ... գլխուն ծանրութիւնները պարպելու, օղապարիկի մը րրածին պէս»:

Կը տեսնենք այս քանի մը տողերէն, որ Մեծարենց նաեւ երգիծանքի նուրբ ջիղ մը ունի, զոր չի վարանիր ի գործ դնելու, երբ հարկը տեսնէ:

Տակաւին կան իր թարգմանութիւնները, որոնք թէւ թիւով այնքան ալ մեծ չեն, եւ որպէս գրական արժէք ալ բան չեն աւելցնել իր վաստակին, բայց կը հաստատեն, կրկին անգամ, Մեծարենցի գիտակցութիւնը՝ թարգմանական արուեստին, եւ այլ գրականութիւններու հետ շփուելու կարեւորութիւնը:

Այս բոլորը ըսելէ եւ հաստատելէ ետք, կու գանք հարցի կորիզին՝ ի՞նչպէս արդիականացնել Մեծարենցի բանաստեղծութիւնը. կամ՝ ի՞նչպէս ներկայացնել այս տաղանդաւոր տղուն բանաստեղծութիւնը ԱՅՍՕՐ, երիտասարդութեան համար:

Թերեւս լաւ կ'ըլլայ օգտագործել արդիական **թերմոլոգիան** (արիեստագիտութիւնը), **մալթիմետիան** (զանգուածային լրատուութիւնը), Մեծարենցի բառերով յօրինել նոր երգեր, որոնց մեղեդին կարթէ երիտասարդ ունկնդիրը, եւ ան, առանց մասնաւոր ճիգի, կարենայ նախ մտիկ ընել, ապա ըմբռնել քերթողութիւնը մեր գրականութեան ամէնէն տաղանդաւոր երիտասարդներէն մէկուն:

Հարկ է միջոցներ փնտռել: Ափսոս է, որ երիտասարդութիւնը այսօր անմասն մնայ Մեծարենցի քերթողութեան վայելքէն:

«Կենա՛ցդ, մեր տղայ, այս աշխարհէն միւս աշխարհ»:

ԲԱԳԻՆ

ՈԳԵԿՈՉՈՒՄ

*
* *

Միջոցներ փնտռելու եւ անպայման գտնելու գաղափարը կը յիշեցնէ այն քանի մը երգերը, որոնք յօրինուած են Մեծաբեկի բառերով: Ամէնէն սկիզբը կարծեմ «Գիշերն անուշ է, գիշերն հեշտագին» երգն է, Հրանդ Գեորգեանի յօրինումով, զոր մանկութեանս կ'երգէին մայրս եւ մօրաքոյրներս մեծ հաճոյքով: Այսօր նոյն երգը եթէ քաղցր յուշեր կ'արթնցնէ երեցներուն մօտ, կրնայ խրտչեցնել երիտասարդները: Բայց որովհետեւ երգին մեղեդին շատ հոգեհարազատ է, կարելի է «արդիականացնել» զայն, նոր կշռոյթով, եւ սիրուած երգիչի մը կատարողութեամբ:

Նման երգ մըն է Ռոպէր Ամիրխանեանի «Կարմիր ծաղիկ մը գարունի»ն: Ծառեր՝ երիտասարդներէն, կը սիրեն եւ յաճախ կ'ունկնդրեն այս երգը, առանց իմանալու որ անոր բառերուն հեղինակը Մ. Մեծաբեկն է: Այստեղ փակագիծերու մէջ կարելի է նշում մը կատարել. բոլոր նոր երգերուն հեղինակներու անունները կը յիշուին, բայց ոչ, օրինակ, Մեծաբեկի անունը: Ինչո՞ւ: Հաւանաբար իրաւունքներու կամ **հոնորարներու** հարց մը ըլլայ, թէն վստահ չենք: Հեռատեսիլով կամ ձայնասփիւռով նման երգեր ձայնասփռելէ առաջ, կարելի է շատ կարճ ներկայացում մը ընել հեղինակին մասին: Եթէ նոյնիսկ ամբողջ ուշադրութեամբ մտիկ չըլլան այդ խօսքերը, անպայմանօրէն ունկնդիրին մէջ տեղ կը գրաւեն, եւ օր մը ի յայտ կու գան:

Այլ ձեւ մըն է մեր դասականները կարճամեքրած, նոյնիսկ երկարամեքրած ֆիլմերով ներկայացնելը: Ֆիլմարուեստը այսօր, մանաւանդ փոքր պաստառի միահեծան տիրապետութեան ժամանակաշրջանին, մեծ դեր կրնայ խաղալ հոն, ուր ընթերցումը կը ձախողի:

Իսկ ամէնէն արագ եւ արդիւնատէտ ձեւը, կը կարծենք, դասախօսութիւններու ընթացքին **մալթիմետիայի** օգտագործումը կրնայ ըլլալ. նկար եւ ձայն. Շարժող նկարներ, որոնք ներկայացուած խօսքը կենդանացնելու ուժը ունին: Նման մօտեցում եղած է անշուշտ, բայց միայն գիտական եւ ոչ՝ գրական նիւթերու առնչութեամբ:

Հալէպ

ԱՐԽԻՒԱՅԻՆ

Pakine

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՈՍԵԱՆ



ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ ԱՌԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ.

ՎԵՐՅԱՅՏՆՈՒԱԾ ՆԱՄԱԿ ՄԸ

Ընթերցողը ծանօթ ըլլալու է Անդրանիկ Ծառուկեանի «Մանկութիւն չունեցող մարդիկ» ինքնակենսագրական պատումի այն դրուագին, երբ Նշանաւոր հայ գրագետ մը պիտի այցելէր որբանոցը 1920ական թուականներուն: Կ'ենթադրուէր, որ ծիծաղաշարժ գործերու հեղինակ գրագետը, իր ներկայութեամբ, ուրախութիւն ու քրքիջ պիտի բերէր բազմահարիւր որբերու տաղտկալի կեանքին: Բայց «անիծեալ տարիներ» տեսած ու ապրած գրողը՝ Երուանդ Օտեանը (1869-1926), արդէն ծանօթ էր որպէս չխնդացող մէկը, ու Մեծ Եղեռնի սարսափը աւելի եւս շեշտած էր այդ գիծը: Տարբեր հեղինակներու կողմէ կրկնուած այն փաստը, որ ծանօթ երգիծագիրը տխուր մարդ մըն էր, թերեւս իր առաջին արտայայտութիւնը գտած է վերայատնուած այս նամակին մէջ, որուն հեղինակն է անոր խոյնքան Նշանաւոր հօրեղբայրը՝ Գրիգոր Օտեանը:

Գ. Օտեան (1834-1887)՝ 1876ի Օսմանեան Սահմանադրութեան հեղինակներէն մէկը, ժամանակաշրջանի թուրք եւ հայկական իրականութեան Նշանաւոր դէմքերէն եղած է: Ապտիւլ Յամիտի գահակալու-

թեև ետք Փարիզ տարագրուած ու հոն թաղուած Գ. Օտեանը թղթակցած է իր բազմանդամ ընտանիքի տարբեր անդամներու, որոնց շարքին՝ իր պատանի եղբորորդիին հետ, որուն Լոյսիսկ ձօնած է անթուակիր բանաստեղծութիւն մը¹:

Ստորեւ հրատարակուող խմբագրական պատճենահանեալ ձեռագիրը յայտնաբերեցինք Նիւ Եորքի Զայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւելեան թեմին կից «Գրիգոր եւ Տոլորես Զօհրապ» տեղեկատուական կեդրոնին մէջ: Ան մաս կը կազմէ թղթակալի մը, զոր ամենայն հաւանականութեամբ կազմած էր Թեոդիկի բարեկամներէն մէկը՝ Սարգիս Սաքաեանը, մէկտեղելով անոր ու իրեն վերաբերող թուղթեր, որոնցմէ որոշ նմոյշներ արդէն լոյս ընծայած ենք, իսկ ուրիշներ մամուլի տակ կը գտնուին:

Անհրաժեշտ է նշել, որ խմբագրական եզրափակիչ պարբերութիւնը առաջին անգամ, ի շարս այլ ընտանեկան խմբագրութեան քաղաքականութեան, լոյս ընծայուած էր Թեոդիկի կողմէ՝ 1921ին², ինչ որ կը բացատրէ վերոյիշեալ լուսապատճենին կապը «Ամենուն տարեցոյցը»ի խմբագրին հետ: Տասը տարի ետք, Պոլիս հրատարակուած Գ. Օտեանի յետմահու երկհատորեակ մը կը հաւաքէր անոր գրութիւններէն ու խմբագրութեան փունջ մը, ներառեալ՝ այս խմբագրական ամբողջական բնագիրը³: 1948ին, պոլսահայ բանասէր Թորոս Ազատեան (1893-1955) կը յայտարարէր, թէ ձեռնարկած էր անոր խմբագրութեան հատորով ամփոփելու⁴, սակայն այդ նախաձեռնութիւնը իրականացած չէ կամ գոնէ տպագրութեան լոյսին տրուած չէ: Գ. Օտեանի արխիւին հետագայ ճակատագիրը մեզի ծանօթ չէ:

Գրականութիւնը որպէս «հոգեզուարճ բերկրութեանց աղբիւր» բնորոշող Գրիգոր Օտեանի այս խմբագրական բովանդակութեամբ, ինչպէս եւ այն փաստը, որ նախորդ հրատարակութիւնը բաւական թիւրքերեցումներ կը ներկայացնէ, մեզ մղեցին Լորայայտ պատճենը տպագրութեան պատրաստելու: Դիտել տանք, որ Լոյսութեամբ պահած ենք հեղինակին գրաբարախառն լեզուն եւ ուղղագրական իւրայատկութիւնը, որոնք կը ներկայացնեն չբիրեղացած աշխարհաբարի այն հանգրուանը, որ յատկանշական էր Զարթօնքի շրջանին իրենց ծաղկումը ապրած կարգ մը գրողներու լեզուին:

Նիւ Ճըրզի

ԱՐԽԻՎԱՅԻՆ

Pakine

12 սեպտեմբեր 1886 Բարիզ⁵

Սիրելի Երուանդս,

Մեզ կը գրկես քու սիրուն պսպղուն նամակներդ: Ո՛րչափ հաճոյքով կը կարդայի զանոնք. եւ զի չ'էի կարծեր, չը գիտէի, թէ միտքդ այնքան զարգացնել կարողացած ես, չը գիտէի թէ՛ այնքան աղուոր հայերէն կը գրես փայլակէ բառերով ու⁶ լի հրախաղութեամբք ոճիդ ու իմաստներուդ մէջ. ուստի՞ առաջ⁷ այդպէս կայծկլտող, արթուն եւ զուարթ միտք մ'ունենալ կը թուիս: Զուարճաբանիլ⁸ կը սիրես, բայց արդեօք ունի՞ս նաեւ զուարճութիւնն ի սրտիդ...: Ինչ որ ունայնութիւն, խաբէութիւն կայ ամէն բանի խորը, այն ոմանց մտածութիւնը սետով կը ներկէ, ոմանց ալ հեզնութիւնը կը գրգռէ. ծիծաղ կայ որ աւելի դառնութիւն կը պարունակէ քան արտասուքը: Կ'ըսեն թէ Մօլիէր⁹ իր ժամանակին ամենէն տխուր մարդն էր: Մի՞ գուցէ այս տեսակէն ըլլան քու ծիծաղներդ ալ: Էֆթիկին¹⁰ ըսածին նայելով՝ տխուր ես ընդհանրապէս, առանձնութիւն կը սիրես, լռութիւնը քեզի¹¹ հաճոյ է, սիրտդ ի վար կը խօսիս: Այն զի՛ հէ՛ք մանկիկ՝ աշխարհային իրաց անկայուն վիճակը կանուխէն զգացիր: Դժպիի խաղերու հանդիսատես եղար, կեանքին խաղերուն, քու շուրջդ ու¹² ի քեզ: Ով որ այդպիսի տեսարաններու առաջին դեռ գիտէ ծիծաղիլ, թող դառնութեամբ ալ խառն ըլլայ, ըսել է¹³ որ չ'ընկճիր նա. չարին յաղթելու թերեւս լաւագոյն միջոցն այդ է եւ քու մտաւոր սեպիական¹⁴ հանգամանացն ալ յարմարագոյն: Շէնշող բնատրութիւնը կ'օգնէ դիմանալու, համբերելու. ապաքէն ծիծաղը ասպա՛ր մը ըլլայ քեզի համար, այն լաւ է. այլ սպառազէնք մը չ'ըլլայ ուրիշներուն դէմ, այն գէշ է:

Ինչ ալ¹⁵ ըլլայ, սիրելի Երուանդս, որ եւ է ձեռի մէջ, ամեն ձեռի մէջ, սիրէ՛ գրականութիւնը. այն միայն կը մնայ: Օր կու գայ, ամեն բանէ կը դադրի մարդ, վայելքներէ կը հրաժարի, իր պատրանքներէն, իր յոյսերէն, կիրքերէն՝ իղձերէն, ամեն ունեցածէն, ամեն զգացածէն, բան մը չը մնար, դեռ կը մնայ գրականութիւնը՝ որ հոգեզուարճ բերկրութեանց աղբիւր մը կ'ըլլայ բացառիկ վայրկեաններու մէջ:

Սիրելի Երուանդս, այս մօտ ժամանակներս մօտաւորագոյն հարուած մը ունեցար¹⁶ սրտի, զկնի այլ նմանօրինակ հարուածներու (զի քանի՞ անգամներ այս վերջին տարիներս մահն եկաւ զարկաւ՝ մեր ընտանեաց մէջ)¹⁷: Ինչո՞ւ, ինչո՞ւ կը գոչէ հայրդ¹⁸ կսկիծովը յիմարեալ¹⁹. Ինչո՞ւ գրեր էր եղբայրդ ալ Հրանդ²⁰. ա՛հ, ո՞ր գիտէ «ինչուն» եւ ուրիշ ո՛րչափ բաներու համար. մեզի միայն խոնարհիլ եւ երկրպագել անկ է²¹ յափտենական կամացն Աստուծոյ: Եւ ես կը կրկնեմ բանաստեղծին հռչակաւոր խօսքը Լեւոնին²² համար ալ.

«Վա՛րդ էր, ապրեցաւ վարդերու նման
առտո՛ւ մը միայն»²²:

Քոյդ
ՕՏԵԱՆ

Եախա տուտուիդ շատ սիրով շատ յարգանքով բարեւ: Այս նամակս երկու օր առաջ գրեր էի երբ ստացանք վերջին նամակդ[:]

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Գրիգոր Օտեան, «Առ Երուանդ (Օտեան) ի Տիմօթեայ», **Մշակույթ**, ազգագրական տարեգիրք, Ա. տարի, 1948, էջ 51-52: Գ. Օտեան ունեցած է 7 քոյրեր եւ 4 եղբայրներ. այս մասին տե՛ս Գէորգ Բամպուքճեան, «Եազը-ճը Պօղոս Աղայ Օտեանի զաւակները եւ աները», **Երջանիկ** տարեգիրք, Պոլիս, 1953, էջ 106-114:

2.- «Նամակներ Գրիգոր Օտեանէ», **Ամէնուն տարեցոյցը**, ԺԵ. տարի, Կ. Պոլիս, 1921, էջ 36:

3.- Տե՛ս **Գրիգոր Օտեանի գոհարները**, պատրաստեց եւ հրատարակեց Միքայէլ Կազմարարեան, հատոր Բ., Կ. Պոլիս, տպ. Մի Տէր-Ասեակեան, 1931, էջ 112-114:

4.- «Գ. Օտեանի անտիպ նամակներու ամբողջական հաւաքածոն», **Մշակույթ**, ազգագրական տարեգիրք, Ա. տարի, 1948, էջ 52:

5.- Կազմարարեանի հրատարակած բնագրին մէջ (այսուհետեւ՝ «տպագիր»)՝ «Բարիկ 12 Աեպմ. 1336», (Պէտք է ըլլայ 1886, բայց պահուած է ըստ բնագրին) (Բ.):

6.- Տպագիր՝ «Ե»:

7.- Տպագիր՝ «ուսար»:

8.- Տպագիր՝ «գուարճաբանել»:

9.- Տպագիր՝ «Մոլիէր»:

10.- Տպագիր՝ «Է...ին»: Գրիգոր Օտեանի կրտսեր քոյրերէն՝ Եւփիմէ Օտեան (1847-):

11.- Տպագրին մէջ այս բառը չկայ:

12.- Տպագիր՝ «Ե»:

13.- Տպագիր՝ «ըսելէ է»:

14.- Տպագիր՝ «մտացոյ սեփական»:

15.- Տպագիր՝ «ինչ որ ալ»:

16.- Տպագիր՝ «մ'ունեցար»:

17.- Փակագիծի մէջ պարբերութիւնը բացակայ է տպագիրէն:

18.- Խաչիկ Օտեան՝ Գրիգոր Օտեանի կրտսեր եղբայրներէն (1842-1908):

19.- Թէոդիկի հրապարակումին մէջ, այս տողը տպուած է այսպէս. «Ինչո՞ւ, կը գոչէ հայրդ կսկիծովն յիմարեալ» («Նամակներ Գրիգոր Օտեանէն», էջ 36):

20.- Հրանդ Օտեան՝ Ե. Օտեանի աւագ եղբայրը:

21.- «Անկ է» բացակայ է տպագիրէն:

22.- Ե. Օտեանի եղբայրը՝ Լեւոն, մահացած է Ապրիլ 1886ին: Գ. Օտեանէն վերջինիս ուղղուած նամակ մը, Աեպտեմբեր 1, 1882 թուակիր, տե՛ս **Գրիգոր Օտեանի գոհարները**, էջ 111-112:

22.- Նախադասութիւնը գրուած է նամակին առաջին էջին վերելը:

ԱՐՈՒԵՍ

Pakine

ԲԱԳԻՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ՝ ԲԺԻՇԿ, ԷՌԻԹԵԱՄԲ ՈՒ ԿԵՆՅԱՂՈՎ՝ ԱՐՈՒԵՍԱԳԷՏ

Յարութին Նիգու-
եան, գրական անու-
նով՝ Յարութին Նա-
գուլեան, մուսալեռ-
ցի, գերդաստանը
ծանօթ՝ «Նագու-
լենք» ծածկանունով,
ծնած է Դամասկոս,
ե ր կ ր ո ղ ա կ ա ն
կրթութիւնը ստացած
է Պէյրութ, ապա իր-
բեւ բժիշկ մասնագի-
տացած՝ Հայաստան
եւ Լոնտոն: Կտաւնե-
րը կը ստորագրէ
Arthur K. (Յարու-
թին Գաբրիէլի, ան-
մահացնելու համար
նաեւ հօր՝ սիրողա-
կան նկարիչ Գաբրի-
էլ Նիգուլեանի յիշա-



Յարութին Նագուլեան իր արուեստանոցին մէջ

տակը): Իր գործերը ներկայիս արուեստա-
սերին կը ներկայանան «Փիւնիկեցիներ»,
«Լիբանանեան տուններ», «Չութակով աղ-
ջիկներ», «Խաչելութիւն», «Human Rights»
շարքերով, տարբեր չափերու կտաւներ, մօ-
տաւորապէս երեք հարիր, կախուած կամ
փռուած իր ընդարձակ արհեստանոցի պա-
տերուն եւ գետնամածին:

Վառ գոյներով փիւնիկեան թագաւոր-թա-

գուիներ իրենց
զարդանաշխերով,
փիւնիկեան մո-
թիֆներով ու իւրա-
յատուկ մթնոլորտով
կը գրաւեն նկարնե-
րուն ծանրութեան
կեդրոնը, իսկ
«Human Rights»
շարքին մէջ տե-
ղադրուած են ազ-
գային ու յեղափո-
խական մեր պատ-
մութեան հերոսնե-
րուն լուսանկարնե-
րը, տողեր, բառեր,
խօսքեր, պատմա-
կան կարեւոր
դրուագներու անդ-
րադարձներ, քանի
որ մեր ազգային

պատմութիւնն ալ մարդկային իրաւունքնե-
րու ամբողջ շարան մըն է՝ Եղեռնէն առաջ ու
ետք: «Նկարչութիւն կ'ընեն ձեռով մը փա-
խուստ տալու համար մեր ներկայէն, ուր հե-
տաքրքրական շատ բան չկայ, քաղաքա-
գէտները բռնած են բոլոր լուսարձակները եւ
մեզ կը ստիպեն ամէն գնով փակուած մնալ
մեր առօրեայ տաղտուկներուն մէջ, առանց
պատմական յիշողութեան, առանց հոգեւոր

ԲԱԳԻՆ

ԱՐՈՒԵՍ

ժառանգության մասին մտածելու, մինչդեռ իմ փնտռողական այլ մակարդակի վրայ է. մտնել պատմության խորքը, վեր հանել մարդն ու իր կարողությունները, տեսնել, զգալ այն, ինչ կր կոչուի պատմություն, որ ինքնին կեանքն է, ժամանակի սահմանազատումներէն անդին ու վեր, եւ այս է նաեւ արուեստագետին բնեկիւր, կարծեմ», կ'ըսէ Նագուլեան:

Պէյրութի մէջ աւարտելէ ետք Յովակիմեան-Մանուկեան երկրորդական

վարժարանը, տրամադրութիւն ունեցած է հետեւելու պատմութեան կամ բժշկութեան: Վիճակը ինկած է գիտականին վրայ, նկատի առած որ բժշկութիւնն ալ մարդուն հետ կապ ունեցող ճիւղ է, մաս կը կազմէ մարդուն մարմնին ու անոր հոգեկան աշխարհին: Բան մը, որ զինք հասցուցած է Հայաստան՝ 1963ին, եւ նետած՝ նկարիչ արուեստագետներու այն հոյիւն մէջ, որ վաթսունականներուն արդէն յեղափոխական դիրքերու վրայ կը պայքարէր Խորհրդային Հայաստանի վարչակարգին դէմ: «Հայկական վերածնունդի ներկայացուցիչներ»ն էին անոնք, ամէնէն նշանաւորները՝ Մինաս Աւետիսեան, Ռուբէն Աղալեան, Սէյրան Խաթաւանցեան, Երուանդ Քոչար, Ռուտով Խաչատրեան, Էդուարդ Խարազեան, անուններ, որոնց հետ մտերմիկ եւ ամենօրեայ յարաբերութեան մէջ եղած է բժշկական հիմնարկի ուսանողը, եղած է մօտիկ ընկերը անոնց, այսպէսով յա-



Պապ փինիկեցի թագաւորը

գուրդ տալով արուեստագետի իր հակումներուն, «որովհետեւ բժշկութիւնը ինծի համար սոսկ ապրելու միջոց մըն է, իսկ հոգիս արուեստով է, որ կը սնանի»:

Խորհրդային տարիներուն մասին խօսելով, կ'առանձնացնէ 1965ին, Եղեռնի Յիսնամեակի առիթով Օփերայի շէնքին մէջ պետական պատուէրով եւ ի ցոյց աշխարհի գործադրուած «պաշտօնական» ձեռնարկին ընդդիմացող մօտաւորապէս

յօրդիներու քաջարի ցոյցը՝ ընդդէմ «ներսը» գտնուողներուն, որոնք հրաւիրեալներն էին համայնավար գաղափարախօսութեան հպատակ ղեկավարներուն, մինչդեռ բուն պահանջատէրը՝ ազգային ոգիով տոգորուած բազմահազար քաղաքացիներն ու յեղափոխական արուեստագետ-մտաւորականներու մեծաթիւ փաղանգը մնացած էր դուրսը, եւ իր բողոքը վերածելով ցոյցի, շրջապատած էր ամբողջ Օփերայի շէնքը, յառաջացնելով ժողովրդային ծովածաւալ քայլարշաւ մը, որ անվրդով հասաւ մինչեւ Ծիծեռնակաբերդ, մինչեւ Եղեռնի նահատակներու անմար կրակ: «Դժբախտաբար, այդ օրերու մթնոլորտին զոհ գնաց համայնավար կուսակցութեան պետը՝ Չարոբեան, որ մերժեց ռուսական բանակին միջամտութիւնը՝ զէնքի ուժով ցրուելու ցոյցի ելած ամբոխը եւ ընդդիմացաւ օրուան կառավարութեան որոշումին, պարզապէս խնայելով իր


ԱՐՈՒՏՍ

Pakine

ժողովուրդին, որպեսզի չթափի հայու կաթիլ արին մ'իսկ, մինչդեռ երեւոյթէն գազազած պետական այրեր կը պահանջէին իրմէ հրահանգել ռուս զինուորներուն՝ կրակ բանալ բազմահազար ցուցարարներու վրայ: Քանի մը օր ետք Ջարդեան ծանր վճարեց հայրենասէր հայ մարդու իր կեցուածքին զինք. զինք պաշտօնանկ ըրին կուսակցապետի իր պաշտօնէն»:

Մեր զրոյցը կ'ընդգրկէ ձիւնհալեան շրջանը, ապա անոր յաջորդող վերաճնշումի տարիները, որոնց ընթացքին զոհ գացին Պարոյր Սեւակ, Մինաս Աւետիսեան, Սլաիկ Չիլոյեան եւ ուրիշներ: Arthur Կ. յուզումով կը պատմէ Սեւակի մտերմութեամբ ապրուած պահեր, դրուագներ մեծ հայրենասէրէն, նշելով որ իրեն համար արդի մեծագոյն բանաստեղծն է Սեւակ, կը վերապրի յուշեր այդ տարիներէն, կը յիշէ Ծիրագն ու այդ օրերու մտաւորական-գրողներու եռուն շրջանակը՝ հայ ազգային ինքնութեան դէմ ցցուած բոլոր տեսակի արգելքներու հանդէպ անոնց մղած ընկերահոգեբանական սուր պայքարը.

Փինիկեան պահակագունդը



Էլիսա իշխանուհին

ապա կը հասնի Փարաջանովի կերպարին ու «Նռան Գոյնը» ֆիլմի՝ օրին հանած մեծ աղմուկին՝ իբրեւ ազգային զարթօնքի հրաւեր, հայրենասիրական կանչ, Սայաթ-Նովայի կերպարի ընդմէջէն հայկական ինքնութեան կառչելու...

Ականատեսի ու մտերիմի յատուկ ակնարկութիւններով Նազուլեան կը պատմէ բանաստեղծական շարժապատկերի հիմնադիր Փարաջանովի հետ անցուցած ընկերական պահերու մասին, կ'ընդգծէ՝ խորհրդայիններու կողմէ Փարաջանովի դէմ հալածանքը, այլեւ անոր հասցէին՝ վերնախաւի յերիւրած «միասեռականութեան մեղք»ը, ապա պատումը զինք կը հասցնէ Լոնտոն, ուր մեկնած է բժշկութեան մէջ մասնագիտանալու նպատակով: Այս անգամ Լոնտոնէն կը լսուի անոր՝ մասնագէտ բժիշկի ձայնը, երբ խանդավառութեամբ կը նշէ, թէ՝ «Ես էի, որ Փարաջանովի փրկութեան արշաւի մը ձեռնարկեցի Լոնտոնէն, երբ արգելափակեցին մեծ հայն ու արուեստագէտը՝ «Նռան

ԲԱԳԻՆ

ԱՐՈՒԵՍ

Գոյնը»ին մէջ ազգային իտէալներու դրսեւորման ամբաստանութեամբ: Չի բաւեր որ ամէն կողմէ կտրատեցին շարժապատկերը եւ զայն արիւնաքամ րրին ամէնէն հիւթել տեսարաններէն, վրան ալ՝ ազատագրկութեան մատնեցին համաշխարհային գնահատումով բացառիկ անհատականութիւն մը», կը նշէ ան դառնութեամբ:

Պատանեկան տարիներէն աշակերտած ըլլալով Փօլ Կիրակոսեանի, Նազուլեան ունեցած է անյազսէր նկարչութեան նկատմամբ: Սակայն 1991էն ետք է միայն, որ ան լծուած է թեմաթիք շարքերու պատրաստութեան, աւելի ժամանակ յատկացնելով նկարչական իր տաղանդի դրսեւորման: Մինչ այդ,

ազատ ժամերուն զբաղած է աշխարհահռչակ նկարիչներու գործերու կրկնօրինակութեան պատրաստութեամբ, միջազգային անուններէն կը յիշէ Փիքասոն, իբրեւ տակաւին անգերազանցելի մեծ վարպետ, որուն մէջ կը բնակին չորս-հինգ նկարիչներ եւ անհատականութիւններ, իսկ հայկական ածուէն կ'առանձնացնէ Մինաս Աւետիսեանը՝

իբրեւ ամէնէն ամբողջական հայ նկարիչը, ոչ միայն իր, այլեւ օտար մասնագէտներու գնահատմամբ, աւելցնելով, որ, ըստ իրեն, Մինասն ու Փօլ Կիրակոսեանը համահաւասար պատուանդանի վրայ կը կանգնին, իբ-

րեւ նկարիչներ, իսկ Արշիլ Կորքիի մասին խօսելով կը յիշէ, որ ամերիկացիներու կողմէ գնահատուելով, Կորքի նուաճեց միջազգային լուսարձակներ եւ անոր գործերը ներկայիս կը վաճառին մինչեւ տասը միլիոն տոլարի, մինչդեռ Մինասին պէս մեծ նկարիչ մը չունեցաւ նոյն «բախտ»ը, քանի որ մենք՝ հայերս, ցաւօք, տակաւին չենք մտած միջազգային «պիզնրս»ի շուկան, որ այսօր ամբողջ աշխարհը բռնած է, եւ մեծ, շատ մեծ ազդե-



«Խաչելութիւն» շարքէն

ցութիւն ունի եւ տուեալ նկարիչի գործերու ծանօթացման ու տարածման, եւ անոր ազգային պատկանելիութեան շեշտաւորման վրայ, որ մէկ խօսքով՝ փառք ու պատուի կ'արժանացնէ իր ազգը անպայման: Նշելով Կորքիի անուան կապուած բարեբախտութիւն մը, նկարիչը կը տեղեկացնէ, որ Կորքի երեսուններկու կտաւ պահ դրած է Գալուստ

ԱՐՈՒՏՍ

Pakine

Կիլպենկեան Հիմնարկութեան մօտ՝ Հայաստանի անկախութենէն ետք միայն այդ կտաւները Հայաստան հասցնելու պահանջով: «1948ին մահացած Արշիլ Կորքի իր ողջուցը եւ, տարօրինակօրէն, նախագացեր է, որ օր մը անպայման պիտի անկախանայ Հայաստան, եւ իբրեւ հայ ազգի զաւակ ուզած է իր կտաւներով վերադառնալ հայրենիք», մեղմօրէն ժպտելով կ'ըսէ Arthur K., նշելով, որ այսօր Կորքիի կտակի շուրջ բաւական լուրջ վէճեր կան, դուստրը Հիմնադրամէն կը պահանջէ իրեն վերադարձնել հօրը 32 կտաւները իբրեւ ընտանեկան ժառանգութիւն, իսկ Հայաստանի մէջ տակաւին չեն կրցած ճշդել, թէ ո՞ր պիտի կառուցուի Արշիլ Կորքիի անուան տուն թանգարանը եւ տեղադրուին անոր գործերը:

Յարութիւն Նագուլեան «Բագին»ի մէջ առաջին անգամ ստորագրած է 1974ին, Լոնտոնէն, իսկ Պէյրութ վերահաստատելէ ետք, իր մասնագիտութեան զուգահեռ ան տասնամեակ մը եւ աւելի աշխատակցած է նոյն ամսագրին: Բանաստեղծութիւններ, արուեստն ու մշակութային կալուածը («Անրի Մուր եւ Հայաստանի քանդակագործութիւնը») յուզող մասնագիտական եւ երբեմն ալ խնդրայարոյց յօդուածներ (ինչպէս՝ «Երուանդ Քոչարը եւ հայկական հարցեր», Կալենցի արուեստին նուիրուած ուսումնասիրութիւն մը, եւ այլն) ստորագրած է ութսունականներու «Բագին»ի մէջ:

Սիրողականէն մասնագիտականին ուսումնող նկարիչին «Human Rights» շարքին պատկանող կարգ մը գործեր կը զարդարեն Լիբանանի հայկական հաստատութիւններն ու ակումբները: Վերջին քսան տարիներուն



«Human Rights» շարքէն

առաւելաբար նկարչութեան փարած Arthur K. ցարդ մասնակցած է միջազգային ցուցահանդէսներու՝ Թորոնթօ, Նիւ Եորք, Պէյճիկ, Մոնաքօ, Մոնթրէալ եւ այլուր, իսկ անոր առաջին անհատական ցուցահանդէսը տեղի ունեցաւ Պէյրութի «Հայկազեան» համալսարանին մէջ, Դեկտեմբեր 2010ին: Ան մաս կը կազմէ «Հայկազեան» համալսարանի Հոգաբարձութեան մարմնին եւ ներկայիս լծուած է անհատական երկրորդ ցուցահանդէսի մը պատրաստութեան աշխատանքին: Լոս Անճելըս, յառաջիկայ Նոյեմբերին:



«Ջութակով աղջիկներ» շարքին

Նագուլեան երբեք չի մտածեր չափաժողով արձակ գործերը հաւաքել մէկ ծածկի տակ, քանի որ չի հաւատար որ ինք գրող է, եւ իր գրածները կրնան մնայուն արժէք համար-ւիլ: «Ես ներքին խռովքս հանգստացնելու համար կը գրեմ, միշտ թուո՞ք ու գրիչ ունիմ մօտս, կը սկսիմ ինքզինքիս հարցումներ ուղղել եւ պատասխանները շարադրել թուո՞քին վրայ. այս է գրելը ինծի համար. ներքին ալեկոծութիւնս մեղմելու տեսակ մը մտային մարզանք, տետրակներ ունիմ լեցուած, որոնք չեն կարծեր որ հաճելի ըլլան ուրիշներու»: Ան միաժամանակ կը գծէ, կը նկարէ նոյն անմիջականութեամբ, ներսէն թելադր-

ւած, արագ ու խիտ շարքերով (մինչեւ յիսուն պաստառի հասնող), մինչեւ որ յագեցնայ ներքին եսը եւ ծնի նոր շարքի մը ուր-ուագիծը... Այսպէս է որ ծնած են փինիկեցի թագաւոր-թագուհիներու անհատական եւ ժամանակային նկարագիրը վեր առնող Նագուլեանի գործերը: Մէյ-մէկ հսկաներ են անոնք, ժամանակի դատակնիքէն դուրս սլացող անհատականութիւններ՝ իրենց խայտաբղետ գոյներով, խիստ տպաւորիչ դիմագծերով, որոնք անվերջ կը պատմեն իրենց ապրած ժամանակը եւ անդադրում ճիգով մը կ'արարեն իրենց անմահութիւնը:

«Խաչելութիւն» շարքին ակնարկելով Նագուլեան կ'ըսէ, որ՝ «Քրիստոնէական վարդապետութեան փիլիսոփայական

հիմքը խաչելութիւնն է, որուն շնորհիւ մարդը կը դառնայ բարի եւ աշխարհին կը նայի բիրեղացած աչքերով»: Շարքը ամբողջ բարձրացած է ներկայ-անցեալ-ապագայ եռյարկ «ժամանակ»ի մը վրայ, նախամարդէն մինչեւ աստուածութիւն, որով մարդը «խաչելութեան» շնորհիւ կը հասնի վերին սրբութեան, որ լուսաւոր է, մաքուր, բարի, յարութեան անլռելի դողանջով պսակուած: Նագուլեանի վրձինը բանաստեղծական վեհութեամբ մը կը ներկէ հին աստուածներու վառ կապոյտն ու որդան կարմիրը յիշեցնող երանգները, ուղղակի հարուածներով, ողորկ ու սահուն գիծերու մէջ լեցնելով զարդանաշ-

խերու նմանող պատմութիւն, մարդկային մշակոյթ եւ գոյութեանական ինքնաստեղծ հրայրք:


Գիտութեան ու մշակոյթի կալուածներու միաձուլումէն ծնած ենք է Նագուլեան-Arthur K. մարդը, որուն մտահոգութիւններուն առանցքը ոչ միայն Հայաստան-հայրենիք-հայ ժողովուրդի դիմագրաւած ազգային ու գոյութեանական հարցերն են, այլեւ համաշխարհային արեւստը, համամարդկային տագնապներն ու մարդ էակը՝ ի՞նքը, իր հոգեմտաւոր էութեամբ, անցեալով, ներկայով, երազներու աշխարհով եւ յաղթանակներով: Ճշմարիտին փնտռտուքն է անոր մտասէւեռումը. այս առումով ալ կը թելադրէ՝ «Քաղաքակրթ-ւած միջոցներով արթնութեան արշաւ կազմակերպել՝ աշխարհին իմացնելու համար, որ համաշխարհային գորգազիտութիւնը կովկասեան գորգերու 54 տեսակ կը հաշուէ, որուն 39 տեսակը, ըստ ինծի, զուտ հայկական են», ու կը բացատրէ, թէ աշխարհի տարբեր երկիրներու մէջ գորգերու գործարաններ կը բանին ամէն տեսակի գորգեր եւ գանոնք կը հանեն շուկայ, իւրաքանչիւր գորգի ետին նշելով անոր ծագման անունը՝ պարսկական, թրքա-

կան, միջին ասիական, չինական, կովկասեան, եւ այլն, բայց երբեք չի նշուիր կովկասեան այդ 39 տեսակներուն (Լոռի բամպակ, Արցախ, քոնաքենթ [որուն յատակագիծին՝ Հռիփսիմէի տաճարը], Սեւան եւ այլն) բուն անունները, որոնք հայկական են եւ չեն պատկանիր կովկասեան միւս ժողովուրդներուն... Ջարգացնելով այս թեզը Նագուլեան կը հաստատէ, որ հայ ազգը աշխարհի մշակոյթին պէտք է հարստութիւն մը կտակէր, եւ գերմանացի հեղինակ Կանձհոռնի վկայութեամբ՝ գորգագործութեան բնօրրանն ու հայրենիքը եղած է հայկական բարձրաւանդակը...

Նագուլեան գիտելեաց շտեմարան մըն է, պրպտող միտք, որուն հետ զրուցել՝ գիտելիքներով հարստանալ կ'ենթադրէ, իսկ արիւնտանոցը այցելել՝ մարդկութեան պատմութեան ու ազգային մեր իտեալներուն աւելի մօտիկ զգալու հազուագիւտ առիթ կը շնորհէ:

«Լիբանանեան տուններ» շարքէն





ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔ

Հեղինակ՝ ՖՐԻՏՃՈՖ ՆԱՄԷՆ

Խաչիկ Պապիկեան Հրատարակչական Հիմնադրամ – Թիւ 6

Անթիլիաս – 2011

ԾԱՂԿԱՔԱՂ

Ժամանակակից սուրիացի արաբ գրողներ

Խմբագիր՝ ԼԻԻՍԻ ՍՈՒԼԱՀԵԱՆ

Հալէպ – 2011



ԶՐՈՅՑ՝ ՀԻՆՅԱԾ ԳՐԻՋԻ ՄԸ ՀԵՏ

(ՅՈՒՇԱՏԵՏՐ – 23)

Հեղինակ՝ Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ



ԻՍԹԱՆԲՈՒԼ – 2011

ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ ԿԱՊՐԻՆՔ

(Պատմութիւններ)

Հեղինակ՝ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

Թորոնթո – 2011



ՅՈՒՇԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

(Մեր Գրիգոր ԷՊԼԻՂԱԹԵԱՆԻ մահուան առաջին տարեկիցին առիթով)

«Կիլիկիա» Գրատուն – Հրատարակչատուն

Հալէպ – 2011

ԴՈՒՒ, Ո՛Վ ԲԱՐԵԿԱՄ...

(Քերթուածներ)

Հեղինակ՝

Հ. ՅՈՎՍԷՓ ՎՐԴ. ԹՈՓԱԼԵԱՆ ԿՄ.

Պէյրութ – 2011

